

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

9[47.925]
Հ-23
Հշ
Ա409

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

(1920–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
191

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES
191

ԵՐԵՎԱՆ – 2019

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ժ 230

Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆ. *Կ.Հ. Խաչատրյան*,
պ.գ.թ., դոցենտ *Հ.Կ. Սուքիասյան*

Ժամհարյան Գագիկ

Ժ230 Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի առօրեականության պատմության դրվագներ (1920–1930-ական թվականներ) / Գ. Ժամհարյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019.- 143 էջ + 4 նկ.:

Աշխատությունը նվիրված է սոցիալական և առօրեականության պատմության հիմնահարցերին, հայ պատմագիտության կողմից դրանց ուսումնասիրության աստիճանին: Գրքում բացահայտված են 1920–1930-ական թթ. Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի մի շարք ուշագրավ դրվագներ:

Հասցեագրվում է Խորհրդային Հայաստանի և առօրեականության պատմությամբ հետաքրքրվողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-78-7 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարասկզբին արևմտյան պատմագրության մեջ տեղի ունեցան մի շարք կարևոր փոփոխություններ, որոնք արժևորվեցին պատմագիտական ուսումնասիրությունների նոր ուղղությունների առաջացմամբ, պատմական գիտության և այլ գիտությունների միջգիտակարգային կապերի ամրապնդմամբ: Այդ ուղղությունները տիրապետող դարձան պատմաբանների աշխատություններում, ստեղծվեցին պատմագիտական նոր դպրոցներ, որոնք սկզբունքորեն նոր մոտեցումներ առաջարկեցին պատմական գիտության հիմնախնդիրների ձևակերպման և դրանց հետազոտման համար: Ներկայացվող աշխատությունը համառոտ անդրադարձ է պատմագիտական մտքի մեջ տեղի ունեցած այս փոփոխություններին:

Աշխատության մեջ բարձրացված հարցերը թեև բազմազան են, այդուհանդերձ, գլխավոր նպատակը առօրեականության պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունն է: Պատմագիտական հետազոտությունների այս ուղղությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց համաշխարհային պատմագիտական մտքի մեջ՝ հետազոտական և մեթոդաբանական իր հեղափոխական մոտեցումներով: Հայ պատմագիտության մեջ նախկինում այս հետաքրքրությունը բավարար չափով չարտահայտվեց, և սույն աշխատությամբ խնդիր է դրված ցրել «թերահավատության» որոշակի մթնոլորտը, որ զգացվում է այս ուղղության շուրջ:

Հայ պատմագիտական միտքը՝ ելնելով իր զարգացման առանձնահատկություններից և պատմականորեն ձևավորված թեմատիկ և բովանդակային հետաքրքրություններից, մինչև վերջերս առօրեականության պատմությունը չի դիտարկել իր հետազոտական հիմնախնդիրների առաջնահերթություններում: Սույն հետազոտությունը, թերևս, առաջին փորձն է դիտարկելու առօրեականության պատմության զարգացման հնարավորությունը հայ պատմագիտության մեջ՝ հասկանալու համար հետազոտական հեռանկարները հայոց պատմության տարբեր հարցերի ուսումնասիրության ժամանակ: Կարևոր է նաև ընկալելի դարձնել ներկայացվող աշխատանքի ճանաչողական նպատակները՝ այն իմաստով, որ հայ պատմագիտական միջավայրում առօրեականության պատմության ի հայտ գալը նոր իրողություն է, և շատ կարևոր է հետազոտական այս ուղղության մասին պատկերացում ունենալը, ինչը հնարավորություն կտա շարժվել համաշխարհային պատմագիտական մտքին համաքայլ: Վերոշարադրյալ նկատառումներով է պայմանավորված սույն գրքի կառուցվածքը, որի բաղադրիչները ենթարկվում են հետևյալ տրամաբանությանը. ներկայացնելով առօրեականության պատմության դրվածքը համաշխարհային պատմագիտության մեջ՝ հայոց պատմության խորհրդային ժամանակաշրջանի որոշ իրողությունների օրինակով ներկայացնել պատմագիտական հետազոտությունների այս ուղղության գործառնության առանձնահատկությունները, պատկերավոր ասած՝ առօրեականության պատմությունը դիտարկել «գործողության» մեջ:

Ուսումնասիրությունն ունի մեթոդական կարևոր առանձնահատկություն, որը կապվում է առօրեականության պատմության մարդակենտրոն բնույթի հետ: Քանի որ այս ուղղության

գլխավոր հերոսը մարդն է՝ իր գործունեության ամենատարբեր դրսևորումներով, փորձել ենք օգտագործված աղբյուրների հետ աշխատանքում տեսանելի դարձնել նրան: Այդ իսկ պատճառով կիրառվել է աղբյուրները այսպես ասած «խոսեցնելու» մարտավարությունը: Գրքում օգտագործված նամակների, անձնական հուշերի, պետական և կուսակցական մարմինների հետ գրագրության նյութերի միջոցով փորձ է արվել վերհանել մարդկային հարաբերությունների, հանրային մտածողության և պետություն-հասարակություն փոխհարաբերությունների այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ էին ներկայացված ժամանակաշրջանին: Աղբյուրների հետազոտության ընթացքում ավելի հաճախ կիրառվել է դրանցից ուղղակի մեջբերումներ անելու եղանակը, պատմության մասնակիցների ապրումների «խմբագրման» և սուբյեկտիվ մեկնաբանությունների գայթակղությունից զերծ մնալու նպատակով: Աշխատանքը առօրեականության պատմության գիտական հիմնախնդիրներն ամբողջությամբ սպառելու հավակնություններ չունի, այդուհանդերձ այն կարող է կարևոր ներդրում հանդիսանալ հայ պատմագրության մեջ առօրեականության պատմությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների խթանման գործում՝ նպաստելով Հայաստանում այս ուղղության զարգացմանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս են ծնվում և զարգանում գիտությունները: Փիլիսոփայական այս հարցադրումը, անկախ միանշանակ և ավարտուն պատասխան ունենալու հեռանկարի անհնարինությանը, նույնիսկ գիտության հետ հեռավոր առնչություններ ունեցող մարդու համար մեկ ակնհայտ պատասխան, այնուամենայնիվ, ունի. կասկածներից: Սակայն կասկածներն այս դեպքում չեն մեկնաբանվում որպես ճանաչողական գործունեությունն արգելակող գործոն: Ճիշտ հակառակը՝ կասկածը գիտության զարգացման յուրօրինակ խթան է՝ հետազոտության արդյունքներով չբավարարվելու, անցյալի գիտական ձեռքբերումները վիճարկելու և ճանաչողական նոր հորիզոններ նվաճելու համար: Համաշխարհային պատմագիտական միտքն այս առումով նույնպես զերծ չէ եղել կասկածներից: XX դարում պատմական գիտության զարգացման հեռանկարների վերաբերյալ անվստահությունը սկսված ճգնաժամի ցուցիչ էր, որն արտահայտվեց ոչ միայն անցյալի պատմագիտական ժառանգությունը վերաիմաստավորելու անհրաժեշտությամբ, այլև առհասարակ պատմության առարկան և խնդիրները հստակեցնելու մտայնությամբ:

Արևմտյան պատմագրության մեջ պատմական գիտության ճգնաժամի առաջին ահազանգը Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատությունն էր (առաջին անգամ հրատարակվել է 1918 թ.), որում առաջին անգամ վիճարկվեց համաշխարհային պատմագրության եվրոպակենտրոնության ավանդույթը[1]: Շպենգլերի գաղափարները կասկածի տակ էին դնում XIX դարում տարածված պատմագիտական ավանդույթը, որը բացառում էր համաշխարհային մշակույթների ինքնատիպությունը, նրանց զարգացման առանձնահատկությունները և այլն: Պատմական գործընթացի վերաբերյալ նրա արժեքավոր փիլիսոփայական խորհրդածությունները հանգում էին պատմական վերլուծությունների այսպես ասած «ազատագրման» անհրաժեշտությանը: Շպենգլերը պատմական մտքի կաղապարվածությունը բացատրում էր այսպես. «Մենք գիտենք, որ ինչ-որ կենդանու կամ բույսի կենսական գործունեության երևույթները թույլ են տալիս բացառել հարաբերականորեն ազգակից տեսակներին, և որ կյանքի յուրաքանչյուր ձև խորհրդավոր կարգուկանոնի կրող է, որի համար կիրառելի չեն հասկացությունները օրենքի, թվի և պատճառականության մասին: Այստեղից մենք որոշակի ձևաբանական եզրահանգումներ ենք անում: Եվ միայն այնտեղ, որտեղ խոսք է գնում մարդու մասին, մենք, առանց որևէ քննադատության, նշանակություն ենք հաղորդում մարդկային կեցության պատմական ձևի կամայական մեկնությանը, ու, լավ է դա, թե վատ, փաստերը խցկում ենք պատրաստի սխեմայի մեջ: Եթե դա չի հաջողվում՝ ավելի վատ փաստերի համար: Այդ դեպքում մենք դրանք արհամարհում ենք, ինչպես ասենք Չինաստանի պատմությունը, կամ էլ

[1] Տե՛ս **Шпенглер О.**, *Закат Европы*, Мультимедийное издательство Стрельбицкого, Киев, 2015.

պարզապես համարում ենք դրանք ուշադրության ոչ արժանի, ինչպես մայաների մշակույթը: «Դրանք ոչինչ չեն ավելացնում համաշխարհային պատմության կառուցվածքի մեջ»: ...Այսպիսին է մեր «արժեքավոր» եզրահանգումը»[1]: Շպենգլերի դժգոհությունը պատմական սխեմաների և պատմական ուսումնասիրություններում ավանդական նախապատվությունների դեմ ներկայացնում է այն նոր միտումը, որ ուրվագծվում էր պատմության առարկայի վերաիմաստավորման ուղղությամբ: Ըստ էության՝ սկսվում էր արևմտյան պատմագրության պոստմոդեռնիստական ճգնաժամը, որի հիմնական մտայնությունը պատմագիտության «ժողովրդավարացումն» էր: Սա ենթադրում էր հետազոտական մեթոդների հարստացում, ուսումնասիրության առարկայի ընդլայնում, պատմության «սոցիալականացում» (հասարակական կյանքի բազմաշերտ, համընդգրկուն հետազոտություն) և, որ երևի թե ամենաարդիական հիմնախնդիրն էր համարվում պատմության համար, միջգիտակարգային կապերի ընդլայնում: Բրիտանացի պատմաբան Թեոդոր Զելդինը նշում է, որ պատմական գիտության այսպես ասած «ժողովրդավարացման» անհրաժեշտության մասին խոսում էին դեռևս XVIII և XIX դարերում (Վոլտեր, Մաքքոլեյ, Միշլե, Բուրքհարդ և այլոք): Պատմության «ժողովրդավարացման» տակ հասկացվում էր նաև նրա ուշադրության շեղումը թագավորներից, քաղաքական գործիչներից և խորհրդարանականներից: Զելդինը վկայակոչում է պատմաբան Ֆրեդերիկ Զեքսոն Թըրնըրին, ով դեռ 1891 թ. նշել էր, որ պատմությունը պետք է ընդգրկի մարդկային գործունեության բոլոր ոլորտները[2]: Թըրնըրի դիտարկումը նույնպես մատնանշում է գլխավոր գիտական մտահոգությունն առ այն, թե արդյո՞ք պատմական գիտությունը զարգանում է՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը: Եվ ո՞րն է արդյոք պատմական գիտության առաքելությունը: Այս մտահոգությունը XIX դարում, սակայն, շարունակություն չստացավ: Արդեն XX դարում պատմական գիտության խնդիրների հստակեցման, պատմության մեջ հետազոտական նոր մարտավարությունների ներդրման ու պատմագիտության մեթոդոլոգիական սկզբունքների վերանայման առնչությամբ գիտական բանավեճերն ընդունեցին առավել համընդգրկուն և առարկայական բնույթ: Հենց այս դարաշրջանում հիմնավորվեց կասկածը, որ ավանդական պատմագրությունն իր մեթոդոլոգիական սահմանափակ գործիքակազմով և կանոնակարգված հետազոտական մոտեցումներով՝ տուրք տալով բացառապես պատմականության սկզբունքին, ի զորու չէ հաղթահարել պատմության առաջ ծառացած մարտահրավերները: Այս մոտեցումները ոգեշնչեցին պատմական գիտության նոր ուղղություններից մեկի՝ սոցիալական պատմության ձևավորումը, մի ուղղություն, որը Թեոդոր Զելդինը համարում է պատմության «ամենահավակնոտ տեսակ»: Սակայն հեղինակն իրավացիորեն նշում է, որ պատմագիտության մեջ արդեն հիշատակված անելանելի վիճակից և նոր իդեալիստական մղումներից առաջացած այնպիսի մի ուղղություն, ինչպիսին սոցիալական պատմությունն է, չէր կարող ունենալ իր ուսումնասիրության հստակ առարկան: (Պետք է նշենք, որ սա ամենևին չի խոսում սոցիալական պատմության բովանդակային սնանկության մասին: Ընդհակառակը՝ հենց այստեղ են արտահայտվում նրա հավակնությունները՝ դառնալ պատմական գիտության մի ուղղություն, որն ի զորու է մեթոդապես և գաղափարապես

[1] **Шпенглер О.**, նշվ. աշխ., էջ 50:

[2] Տե՛ս **Зелдин Т.**, *Социальная история как история всеобъемлющая (перевод Е.М. Дагаевой)*, Thesis, 1993, вып. 1

հարստանալ ի հաշիվ այլ գիտությունների): Այս համատեքստում Զելդինը սոցիալական պատմությունը համարում է ոչ թե պատմագիտության հետազոտական ուղղություն, այլ կարգախոս[1], որը պետք է ընդունել որպես նոր որակի հիմնարար ուսումնասիրությունների համար գործողությունների յուրօրինակ ուղեցույց:

Սոցիալական պատմության ստեղծման ակունքներում կանգնած է ֆրանսիական պատմագրության Աննալների դպրոցը: Դպրոցի ներկայացուցիչները մեծ ներդրում ունեն պատմագիտական մտքի ճգնաժամի բանաձևման և այդ ճգնաժամը հաղթահարելու ուղիների մշակման հարցում: Մեթոդաբանական և հայեցողական այն մոտեցումները, որոնք առաջարկում էր այս դպրոցը, հեղափոխական ազդեցություն թողեցին պատմության՝ որպես գիտության իմաստավորման, արժևորման հարցում[2]: Դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Մարկ Բլոկը, ցույց տվեց, որ պատմությունը ճգնաժամ է ապրում անարդարացիորեն, որ այդ ճգնաժամի հիմքում ընկած են ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ գործոններ, իսկ պատմությունը, որպես գիտություն, չի կորցրել իր գրավչությունը: Ըստ Բլոկի՝ պատմության ողբերգությունը՝ որպես վտանգավոր թույն, որից պետք էր ազատվել, նախկինում առասպելաբանության և հռետորաբանության նկատմամբ պատմաբանների թուլությունն ու գայթակղությունն էր, ինչպես նաև հնամաշ «գիտունիկությունն» ու էմպիրիզմը՝ թաքնված առողջ բանականության դիմակի տակ[3]: Բլոկը գտնում էր, որ սրանք պետք է փոխարինել հետազոտական ազատությամբ, որ փաստերի ինքնանպատակ

[1] **Зелдин Т.**, նշվ. աշխ.:

[2] Հայ պատմագրության մեջ «Աննալների» դպրոցի գործունեությանն առնչվող տեսական հարցերը լուսաբանված են նաև պատմաբաններ **Ա. Ստեփանյանի** և **Ս. Հովհաննիսյանի** ուսումնասիրություններում:

[3] **Блок М.**, *Апология истории или ремесло историка*, М., «Наука», 1986, с. 11.

նկարագրություններին պետք է փոխարինեն դրանց խորը և համակողմանի վերլուծությունները՝ կենտրոնում ունենալով մարդուն պատմական ժամանակաշրջանի համատեքստում: Պատմությունը պետք է լինի մարդու մասին և պետք է ծառայի մարդուն: Այսպես կարելի է մեկնաբանել Աննալների դպրոցի հավատամքը, որն էլ ենթադրում է պատմության՝ որպես սոցիալական գիտության բնույթը, որովհետև պատմության ուսումնասիրության օբյեկտ մարդը չպետք է կաշկանդված լինի սոցիալական որևէ կարգավիճակում: Նա պետք է հետաքրքիր լինի պատմությանը իր գործունեության բոլոր ոլորտներում: Պատմության մարդակենտրոն առաքելության օգտին է արտահայտվում նաև Աննալների դպրոցի մյուս հիմնադիր, ֆրանսիացի խոշոր պատմաբան Լյուսիեն Ֆևրը: Ֆևրն առաջարկում էր ոչ թե հետազոտական եղանակների մասնակի խմբագրում, այլ նախկինում պատմական գիտության փիլիսոփայական ընկալումների հիմնավոր վերափոխում: «Գոյություն ունի պատմություն որպես այդպիսին՝ իր ամբողջականությամբ,- գրում էր նա,- պատմություն, որը սոցիալական է արդեն իսկ իր բնույթով, իր էությամբ: Սա պատմությունն է, որը ես համարում եմ անցյալի մարդկանց գործունեության ամենատարբեր ոլորտների և նրանց ձեռքբերումների հետազոտության գիտական եղանակ: Այս ձեռքբերումներն ու գործունեության տարբեր կողմերը ուսումնասիրվում են տարբեր պատմական ժամանակաշրջաններին համապատասխան՝ իրարից խիստ տարբեր, բայց և իրար հետ համեմատելի հասարակությունների սահմաններում (սա սոցիոլոգիայի աքսիոմաներից է),

որոնք զբաղեցնում են երկրագնդի մակերևույթը և լցնում են դարերի հաջորդականությունը»[1]:

Պատմական գիտության նման ընկալումը մեզ հուշում է հեղինակի որոշ մտահոգությունների մասին: Ֆևրը պատմագիտությունը, ըստ էության, չի համարում առանձին գիտություն՝ իր ուսումնասիրության յուրահատուկ առարկայով և մեթոդով: Նման ընկալումը, սակայն, ոչ թե նսեմացնում է պատմագրության դերը, այլ ընդակառակը, հնարավորություն է ստեղծում այնտեղ օգտագործել հետազոտական այն գործիքակազմը, որը կիրառվում է նաև այլ գիտաճյուղերի կողմից: Սրանով նա կարևորում է գիտությունների փոխգործակցությունը՝ պատմական գիտության զարգացման հարցում կարևորելով և՛ մարդաբանության, և՛ հոգեբանության, և՛ սոցիոլոգիայի, և՛ մնացած բոլոր գիտությունների դերը, որոնք կարող են պարզաբանել մարդկային գործունեության ամենատարբեր, ամենաբազմազան բնագավառները: Ֆևրի մտահոգությունը պատմագրությունը միօրինակ պատմական տեքստերի միջոցով վերհանվող նույնանման պատմական փաստերից ձերբազատելու մասին է: Նա գտնում է, որ այլ գիտություններում օգտագործվող հետազոտական տեխնիկան, նյութերը և այդ նյութերով ստացվող արդյունքները նույնպես անհրաժեշտ է կիրառել պատմագիտության մեջ: «Պատմությունն օգտագործում է տեքստերը. սա արևի լույսի պես պարզ է: Բայց ոչ միայն տեքստերը, այլ բոլոր սկզբնաղբյուրները՝ անկախ դրանց ծագումից: Ե՛վ նրանք, որ շրջանառության մեջ են վաղուցվանից, և՛ հատկապես նրանք, որ ծնվել են նոր գիտությունների բուռն ծաղկման արդյունքում՝ վիճակագրության, ժողովրդագրության,

[1] **Февр Л.**, *Бои за историю*, М., «Наука», 1991, с. 26.

որ փոխարինեց ծագումնաբանությանը այնքանով, ինչքանով որ ժողովուրդը իշխանության ղեկին փոխարինեց թագավորներին և իշխաններին, լինգվիստիկայի, որ Մեյեյի բերանով փաստում էր, որ ցանկացած լեզվական երևույթ իրենով հասարակության զարգացման մի քայլ է, հոգեբանության, որ առանձին անհատների ուսումնասիրությունից անցել է խմբերի և զանգվածների ուսումնասիրության, բոլորը հնարավոր չէ թվարկել»,- գրում է հեղինակը[1]: Բնականաբար, այս մոտեցումները չէին կարող չանդրադառնալ նաև պատմագիտության ուսումնասիրության օբյեկտի վերաբերյալ ընդունված հայեցակարգերին: Եթե ավանդական պատմագիտության մեջ դրանք բոլորը հանգում են նշանավոր անհատներին կամ նշանավոր իրադարձություններին, ապա Ֆևրի համար այդպիսիք գոյություն չունեն: Լայնացնելով պատմագիտական հետազոտությունների առարկայի շրջանակները՝ նա հանգում է այն եզրակացության, որ պատմության ուսումնասիրության առարկան ոչ թե անցյալի իրադարձություններն են, այլ մարդը՝ իր գործունեության ամենատարբեր դրսևորումներով: Մարդը դառնում է պատմության նպատակ, անկախ իր զբաղեցրած դիրքից, սոցիալական կարգավիճակից և պատմական իրադարձություններում իր ներգրավվածության աստիճանից: «Պատմությունը,-գրում է հեղինակը,- գիտություն է Մարդու մասին: Այն օգտագործում է փաստեր, բայց դրանք մարդկային կյանքի փաստեր են: Պատմաբանի խնդիրը մարդկանց հասկանալն է, որոնք այս կամ այն փաստերի վկաներն են եղել, իսկ ավելի ուշ այդ փաստերը ամրապնդել են իրենց գիտակցության մեջ այլ գաղափարների հետ միասին, որպեսզի կարողանան բացատրել այդ

[1] **Февр Л.**, նշվ. աշխ., էջ 20:

փաստերը: Պատմությունը, բնականաբար, օգտագործում է տեքստեր: Բայց սրանք մարդկային տեքստեր են: Բառերը, որոնցից դրանք կազմված են, հագեցած են մարդկային էությամբ: Եվ այս բառերից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, յուրաքանչյուրը տարբեր հնչեղություն ունի տարբեր ժամանակաշրջաններում: Անգամ այն բառերը, որոնք վերաբերում են նյութական առարկաներին, հազվադեպ են համընկնում իմաստով, միայն հազվադեպ են մատնանշում հավասարազոր հատկանիշներ»[1]:

Աննալների դպրոցը կարողացավ անցկացնել որոշակի սահմանագծեր, որոնք հստակեցնում էին սոցիալական պատմության և ավանդական պատմագիտության սկզբունքային մոտեցումները պատմական հետազոտություններում: Խոսքը վերաբերում է և՛ պատմական գիտության առաքելությանը, և՛ հետազոտական մեթոդոլոգիային: Որոշակիացան երկու ընկալումների հիմնական հակադրությունները: Եթե ավանդական պատմությունն ուսումնասիրում է պետությունը, ապա սոցիալական պատմությանը հետաքրքիր է մարդը: Եթե ավանդական պատմությունն օգտագործում է իր հետազոտական մեթոդները, ապա սոցիալական պատմությունն անարգել հաստատում է միջգիտակարգային կապեր՝ կիրառելով այլ գիտություններում օգտագործվող մեթոդները: Եվ վերջապես՝ եթե ավանդական պատմության համար առանցքային նշանակություն ունի պրագմատիկ մտածողությունը և սրանից բխող ինտելեկտուալ արդյունքը, ապա սոցիալական պատմության մեջ կարևորվում է հետազոտական գործընթացը: Մարկ Բլոկը «պատմություն» բառին հաղորդում էր ամենալայն իմաստ: Ըստ նրա «պատմությունը» մի բառ է, որը առավելապես մար-

[1] **Февр Л.**, նշվ. աշխ., էջ 20:

դուն և հասարակությանը վերաբերող հետազոտությունների որևէ եղանակի համար արգելք չի դնում: Ցանկացած հետազոտական եղանակ ընդունելի է, որովհետև, ըստ հեղինակի, «այս բառն ինքն իրենով գիտական համոզմունք չի սահմանում, այլ, ելնելով իր նախասկզբնական ստուգաբանությունից, պարտավորեցնում է միայն հետազոտության»[1]:

Բանավեճը, որի հիմքում ընկած են պատմագիտական երկու ուղղությունների մեթոդաբանական և իմացաբանական հակասությունները, այսօր էլ արդիական է արևմտյան պատմագիտության մեջ: Խնդիրը հիմնականում առնչվում է պատմական գիտության առարկայի և առաքելության սահմանմանը, ինչպես նաև մեթոդական մոտեցումներին, որոնք պատմական անցյալի գնահատման համար առաջարկվում են երկու ուղղությունների կողմից: Հիմնարար կերպով այս հարցը լուսաբանելու հավակնություններ չունենալով հանդերձ՝ ներկայացնենք հարցի էությունը՝ մի շարք հետաքրքիր մոտեցումների համատեքստում: Ավանդական պատմությունը սահմանակարգում է պատմության ուսումնասիրության առարկան հստակ, իր տեսանկյունից՝ միակ ճիշտ համարվող մեկնաբանությամբ: Պատմության առարկան անցյալի նշանավոր իրադարձություններն են և նշանավոր մարդիկ՝ քաղաքական համակարգի գործառնության համընդհանուր համատեքստում, իսկ նրա հետազոտական հիմնական մարտավարությունը պետության և քաղաքականության նշանավոր գործընթացները ժամանակագրության պահպանմամբ վերլուծաբար շարադրելու պրակտիկան է: Սա, բնականաբար, քաղաքական պատմության երևի թե ամենասեղմ և ամենաաղքատիկ մեկնաբանու-

[1] **Блок М.**, *Апология истории или ремесло историка*, М., «Наука», 1986, с. 15.

թյունն է, սակայն հիմնականում այս մտայնություններին է հակադրվում սոցիալական պատմությունը: Խոսելով պատմության առաքելության մասին՝ Լյուսիեն Ֆեբրը, հրաժարվելով ընդունել պատմագիտական այն ավանդույթը, որը «վիպականացնում է Մարի Ստյուարտի կյանքը»[1] և ավանդական ընտրողականությամբ առանձնացնում է այնպիսի փաստեր, որոնք վերաբերում են առավել նշանավոր իրադարձություններին կամ մարդկանց, նմանատիպ աշխատանքով զբաղվող պատմաբաններին համարում է աշխատասեր մարդիկ, որոնք, սակայն, զբաղվում են ինքնանպատակ գործունեությամբ: Ու եթե նրանց հարցնենք, թե ինչու՞ են ուսումնասիրում այդ փաստերը, նրանք կարող են միայն պատասխանել. «որպեսզի իմանանք, թե ինչպես է այդ ամենը տեղի ունեցել»[2]:

Սոցիալական պատմության և ավանդական պատմության գիտական բանավեճը համակողմանի ուսումնասիրվել է բրիտանացի մշակութաբան և միջնադարագետ Փիթեր Բըրքի կողմից: Բըրքը բավականին պատկերավոր է ներկայացրել փոխադարձ «մեղադրանքները», որոնք Մեծ Բրիտանիայում իրար են ուղղել պատմագիտության երկու ուղղությունների ներկայացուցիչները: Նա գրում էր, որ շատ պատմաբաններ մինչ օրս էլ համոզված են, որ սոցիոլոգները (այս դեպքում պետք է հասկանալ՝ սոցիալական պատմաբանները) վերացական և բարբարոսական ժարգոնով անհատին անմարդկայնորեն խցկում են հաստատուն կատեգորիաների մեջ՝ առանց տեղի և ժամանակի որևէ զգացողության, և իրենց այս գործողությունները անիրավացիորեն համարում են «գիտական»: Իսկ սոցիոլոգներն իրենց հերթին պատմաբաններին համարում են սիրողական մակարդակի կարճատես փաստ հավաքագրողներ՝ հետազոտության մեթոդներից և համակարգված եղանակներից զուրկ, որոնց «տվյալների (իմա.՝ փաստերի) բազայի» անորոշությունը համարժեք է այն վերլուծելու՝ իրենց անկարողությանը[1]:

Ներկայացված բանավեճի մեջ, ի վերջո, առանցքային կարևորություն ունեցող հարցն այն է, թե ինչու՞ են ավանդական պատմագիտության կողմնակիցները մերժում սոցիալական պատմությունը՝ գերապատվություն տալով քաղաքականին: Բըրքը գտնում է, որ սա պայմանավորված է երկու հանգամանքով՝ քաղաքական և ինտելեկտուալ: Քաղաքական գործոնը կապված է XIX դարում Եվրոպայում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերով, ինչի արդյունքում եվրոպական շատ երկրների կառավարություններ պատմությունը ծառայեցնում էին ազգային և քաղաքական միավորման համար մղվող պայքարին: Դպրոցներում և համալսարաններում քաղաքական պատմության դասավանդումը պետք է նպաստեր քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, իսկ որոշ դեպքերում (ինչպես Գերմանիայում), այն պետք է նույնիսկ ծառայեր ազգայնական գաղափարների տարածմանը:

Ինտելեկտուալ գործոնը կապված էր պատմաբանների այն համոզման հետ, որ, հաշվի առնելով նրանց ժրաջան աշխատանքը արխիվներում, հաշվի առնելով սկզբնաղբյուրների հետազոտական բարդ սխեմաների մշակման արդյունքում դրանց հուսալիության ապահովումը, միայն իրենց պատմությունները կարող են համարվել օբյեկտիվ և գիտական[2]:

[1] **Февр Л.**, նշվ. աշխ., էջ 45:
[2] Նույն տեղում:

[1] **Burke P.**, *History and social theory*, Cornell University Press, Ithaca, New York, 1992, p. 3.
[2] Նույն տեղում, էջ 6:

1709

Թեպետև ավանդական և սոցիալական պատմությունների իմացաբանական բանավեճում քաղաքականության հետազոտության հարցը բանավեճի կենտրոնական հարցերից է, պետք է նշենք, որ պատմության սոցիալական տեսության ներկայացուցիչները չեն ընդունում այն դրույթը, որ սոցիալական պատմությունն իր տեսադաշտից դուրս է թողնում քաղաքականությունը: Իրականում այստեղ խնդիրը պատմության մեջ քաղաքականության հիմնախնդրի բովանդակության տարբմբռնումների մեջ է:

Պատմության մեջ սոցիոլոգիական հետազոտությունների ներդրման կողմնակիցներից մեկը՝ ամերիկացի ժամանակակից պատմաբան Լուիս Թիլլին, գտնում է, որ եթե պատմությունը դա ընդամենը անցյալի քաղաքական իրադարձությունների շարադրանքն է միայն, ապա նման նեղ բացատրությունը երաշխիք չի տալիս, որ մարդիկ, որոնք չեն մասնակցել քաղաքական հայտնի գործընթացներին, սակայն ունեցել են և ունեն քաղաքական գիտակցություն, չեն անտեսվի պատմության կողմից, իսկ պատմության հերոսներ, այսպես ասած՝ վերնախավ (էլիտա), նորից կդառնան միայն նրանք, ում քաղաքական գործունեությունը հնարավոր է եղել բացահայտել: Թիլլին դեմ է արտահայտվում հետազոտական այն մարտավարությանը, որով մարդիկ «փնտրվում» են միայն քաղաքական գործընթացների մեջ: Սոցիալական պատմությունը, ըստ նրա, հետազոտության վերցնելով հարցերի ավելի լայն շրջանակ և քննարկելով մարդուն աշխարհագրական, տնտեսական կամ սոցիալական կառուցվածքներում, նրա գիտակցության մեջ կարողանում է բացահայտել նաև քաղաքական դիքորոշումներ և անգամ քաղաքական վարքագծի որոշակի

տարրեր[1]: Թիլլին այս մոտեցմամբ, ըստ էության, հիմնավորում է այն իրողությունը, որ սոցիալական պատմությունը քաղաքական համակարգի ավելի խորքային և համընդգրկուն հետազոտման հնարավորություններ ունի, որովհետև, պատկերավոր ասած, ոչ թե մարդուն է ուսումնասիրում քաղաքականության մեջ, այլ քաղաքականությունն է ուսումնասիրում մարդու մեջ: Սրանից ելնելով՝ կարող ենք ասել, որ սոցիալական պատմության և ավանդական պատմության մեջ քաղաքական գործընթացների հետազոտության անհրաժեշտության շուրջ հակասությունն իրականում արհեստածին է: Քաղաքականությունը, որպես հասարակական կյանքին բնորոշ իրողություն, չի կարող որևէ կերպ թերագնահատվել որպես հետազոտական գիտական անհրաժեշտություն: Տարբերությունն այն է, որ, եթե ավանդական պատմագիտության մեջ քաղաքական գործընթացներին ցուցաբերվում է ընտրողական մոտեցում՝ սրանց մեջ առանձնացվում է «առաջնայինը»՝ «երկրորդականից», «կարևորը»՝ «անկարևորից», իսկ քաղաքական կյանքը լուսաբանվում է միայն իր՝ քաղաքական հարաբերությունների միջավայրում, ապա սոցիալական պատմության մեջ պետությունը, իշխանությունը, և, առհասարակ, քաղաքական գործընթացները լուսաբանվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ հիմքում ունենալով այս գործընթացների արձագանքները հանրային ընկալումներում:

Նկատենք, որ քաղաքական գործընթացների հետազոտության անհրաժեշտության ներկայացված օրինակներից կարող ենք անել այն անսխալ եզրահանգումը, որ, իրականում, սոցիալական պատմության և ավանդական պատմության մեջ հակասություն

[1] Տե՛ս **Tilly L.**, *Social History and Its Critics*, Theory and Society, Vol. 9, No. 5, Special Issue on Social History (Sep., 1980).

չկա: Եվ պատմագիտության այս երկու ուղղությունները չպետք է քննարկել մեկը մյուսին բացառելու կամ սրանցից մեկին բացարձակ նախապատվություն տալու տեսանկյունից: Բնականաբար, հակագիտական և անընդունելի ենք համարում մտայնությունը, որ պետք է մերժել համաշխարհային պատմագիտական մտքի հարուստ ժառանգությունն ու քաղաքական պատմության հետազոտության ոլորտի նվաճումները և միանգամից շրջվել դեպի սոցիալական պատմությունը: Սակայն սխալ ենք համարում նաև պատմական հետազոտություններում սահմանափակ, վաղուց կանոնակարգված հետազոտական մարտավարություններին տուրք տալը և դրանցից ցանկացած շեղում պատմագիտության համար խորթ կամ անընդունելի համարելը: Կարծում ենք, որ պատմությունը, անկախ նրա հանդեպ իմացաբանական վերաբերմունքից և անկախ նրա հիմնախնդիրների մեկնաբանությունների տարբերությունից, միասնական գիտություն է՝ միասնական խնդիրներով և առաքելությամբ: Հետևաբար պատմաբանների մեջ պետք է առկա լինի երկխոսության բարձր մշակույթ, որ կօգնի պատմական ժամանակաշրջանների և իրադարձությունների համակողմանի և ամբողջական լուսաբանումներին: Փիթը Բըրքը գտնում էր, որ սոցիալական պատմաբանների և ավանդական պատմաբանների միջև այս մշակույթը չկա, հետևաբար նրանց միջև երկխոսությունը նման է «խուլերի երկխոսության»[1]: Սակայն այս իրավիճակն ավելի շատ բնորոշ էր XIX դարի վերջից մինչև XX դարի կեսն ընկած ժամանակահատվածին: Ներկայումս սոցիալական պատմությունն զգալիորեն ամրապնդել է իր դիրքերը՝ սկիզբ տալով նաև պատմագիտական հետազոտությունների նոր

[1] **Burke P.**, նշվ. աշխ., էջ 2–4:

ուղղությունների և մոտեցումների: Այսօր արևմտյան պատմագրությունն ավելի ու ավելի է հակվում այն համոզմանը, որ սոցիալական պատմությունը կոչված է ոչ թե վիճարկելու, այլ լրացնելու քաղաքական պատմության նվաճումները:

ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մարկ Բլոկը և Լյուսիեն Ֆեբրը ներկայացնում էին Աննալների դպրոցի առաջին սերունդը: Նրանք կարողացան իրենց հեղափոխական մոտեցումներով լուրջ հետաքրքրություն առաջացնել պատմության առաքելության և գիտական մեթոդոլոգիային առնչվող նոր մոտեցումների հանդեպ: Ըստ էության՝ պատմության սոցիալականացման ուղղությամբ առաջին լուրջ քայլն արված էր, նրանց ստեղծագործական գործունեության շնորհիվ մարդը մղվեց պատմական հետազոտությունների առաջին պլան՝ դառնալով պատմության նպատակ: Սակայն նոր ուղղության գիտական հիմնախնդիրների սահմանակարգումն ու պատմության հարացույցի նորովի սահմանումը վիճակված էր դպրոցի երկրորդ սերնդին՝ ի դեմս ֆրանսիացի նշանավոր պատմաբան Ֆերնան Բրոդելի: Բրոդելը ոչ միայն շարունակեց հումանիտար գիտությունների միջգիտակարգային կապերի խթանման գիծը, այլև նրանց մեջ պատմությանը հատկացրեց առանցքային տեղ՝ սկիզբ դնելով այսպես ասած «գլոբալ պատմության» հայեցակարգին[1]: Այստեղ կարևորվում է պատմական գործընթացների համակողմանի և խորը հետազոտությունը՝ երկարատև պատմական ժա-

[1] **Зайцева Т.**, *Зарубежная историография XX – начало XXI века*, М., «Академия», 2011, с. 11.

մանակահատվածների համար: Բրոդելը կարողացավ սահմանակարգել պատմության առարկան՝ այն ներկայացնելով «պատմության երեք շերտերի» համադրությամբ՝ մարդու շրջակա միջավայր, սոցիալ-տնտեսական կառուցակարգեր և ինստիտուտներ, իրադարձություններ[1]: Բրոդելի ներդրումը մեծ էր հատկապես միջգիտակարգային կապերի ամրապնդման ուղղությամբ: Նա առաջին անգամ նաև ներկայացրեց հիմնարար մոտեցումներ մարդուն շրջապատող նյութական աշխարհի վերաբերյալ հետազոտությունների համար: Բրոդելը նաև տվեց որոշակի պատկերացումներ առօրեականության մասին: Սակայն Բրոդելի մոտ առօրեականությունը կրկնվող իրադարձությունների ամբողջությունն էր, իսկ այդպիսիք ֆիքսելու և պատմական իրադարձություններում կրկնողությունը բացահայտելու համար անհրաժեշտ էին պատմական երկարատև ժամանակահատվածներ: Ստացվում է, որ Բրոդելը չէր առաջարկում հետազոտական մարտավարություն կարճ ժամանակահատվածների և ավելի փոքր տարածքների պատմության հետազոտության մեխանիզմներ: Ըստ էության՝ նրան ավելի շատ հետաքրքրում էին ոչ թե կոնկրետ փաստերը, այլ սոցիալական, տնտեսական և աշխարհագրական կառուցվածքները, որոնց զարգացման տրամաբանությանը ենթարկվում են այդ փաստերը: Սրանից ելնելով՝ ռուս պատմաբան Վ.Մ.Դալինը Բրոդելին անվանել էր լայն ընդհանրացումների կողմնակից[2]:

Փաստորեն, ուրվագծվում էր նոր հակադրություն՝ արդեն սոցիալական պատմության ներսում: Մի կողմում պատմական երկարատև ժամանակահատվածների, աշխարհագրական ընդգրկուն տարածաշրջանների և սոցիալական կառուցակարգերի ընդհանրական և խորը հետազոտություններն էին, մյուսում՝ ժամանակային սեղմ ընդգրկումով առանձին բնակավայրերում սոցիալական կյանքի տարբեր կողմերի խորը և համակողմանի վերլուծությունները: Չնայած որ այս հակադրությունը կարելի է բացարձակ չհամարել, այդուհանդերձ դրանով ոգեշնչված՝ արդեն 1960-ականներին ձևավորվեց արևմտյան պատմագրության մեջ տեղ գտած «նոր սոցիալական պատմության» գիտական օրակարգը: Սոցիալական պատմության մեջ ձևավորվում են տարբեր դպրոցներ, շրջանառության մեջ են մտնում տարբեր մոտեցումներ պատմության և սոցիոլոգիայի առնչություններին, սրանց միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտության, հետազոտական միասնական մարտավարությունների մշակման և այլ հարցերի շուրջ:

Այս բանավեճերը շարունակվում են նաև XX դարի 70–80-ական թվականներին, երբ պատմագիտական հետազոտություններում սկսում է կարևորվել ոչ միայն սոցիոլոգիայի, այլ նաև պատմական մարդաբանության և մշակութաբանության հետ մեթոդոլոգիական և իմացաբանական փոխգործակցության անհրաժեշտությունը: Ռուս պատմաբան Լորինա Ռեպինայի խոսքերով՝ «մշակութային մարդաբանության մեծացող ազդեցությամբ այս ժամանակաշրջանում սոցիալական պատմաբանների հետաքրքրություններում տեղի է ունենում ակնհայտ տեղաշարժ օբյեկտիվ կառուցվածքների և գործնթացների հետազոտությունից դեպի մշակույթ՝ դրա մարդաբանական ընկալմամբ, այսինքն՝ անցյալի մարդկանց առօրյա գիտակցության իրական բովանդակությանը, մտածողական պատկերացումներին, որոնք աչքի են ընկնում իրենց զանգվածային բնույթով և մեծ կայունությամբ, խորհրդա-

[1] **Зайцева Т.**, նշվ. աշխ., էջ 26:
[2] Նույն տեղում, էջ 29:

նշանների համակարգերին, ավանդույթներին, ընկալման կարծրատիպերին և վարքագծի նմուշներին: Նախընտրելի է դառնում հայացքն անցյալին՝ նրա անմիջական մասնակիցների տեսանկյունից»[1]: Նշված փոփոխության հիմնական արդյունք հանդիսացավ Բրոդելի «գլոբալ պատմության» հայեցակարգից անցումը դեպի, այսպես ասած, «մանրացված պատմության» հայեցակարգ: Քանի որ Բրոդելի առաջարկած հետազոտական մեխանիզմները կիրառելի էին աշխարհագրական մեծ տարածաշրջանների և պատմական ընդգրկուն ժամանակահատվածների համար, սրանցում մարդու անհատական կենսափորձի ուսումնասիրության հնարավորությունը փոքրանում էր, այդ իսկ պատճառով ձևավորվեց այն մտայնությունը, որ սոցիալական պատմության բրոդելյան մեկնաբանությունը նույնպես մարդուն թողնում է լուսանցքում՝ գերապատվություն տալով հասարակական զարգացման հավաքական բնութագրերի ուսումնասիրությանը: Սոցիալական պատմության մեջ առաջացած նշված հակադրությունը հակադրություն էր «մակրոպատմության» և «միկրոպատմության» միջև: Այս հակադրության մթնոլորտում ծավալվեցին XX դարի 70-80-ական թվականների իմացաբանական բանավեճերը արևմտյան պատմագրության մեջ, որոնք հանգեցրին պատմագիտական ուսումնասիրությունների նոր ուղղության՝ առօրեականության պատմության ձևավորմանը:

Այս ուղղությունը ծնվեց սոցիալական պատմության շուրջ ծավալված գիտական բանավեճերի մթնոլորտում, մասնավորապես՝ նրա հայեցակարգային և մեթոդոլոգիական հիմնախնդիրների սահմանակարգման տարաբնույթ մեկնաբանություններում՝

[1] **Репина Л.П.**, *«Новая историческая наука» и социальная история*, М., URSS, 2009, с. 28.

առանցքում ունենալով հիմնական սկզբունքային մեկ հարց՝ մարդու հիմնախնդիրը պատմության մեջ: Պետք է նշենք, որ առօրեականության պատմությունը ժառանգեց ոչ միայն սոցիալական պատմության նախկին տարիների կուտակած հետազոտական մոտեցումները՝ հումանիտար գիտությունների միջգիտակարգային կապերի կիրառություն, հետազոտության տեսադաշտի տեղափոխումը պետությունից դեպի հասարակություն, ուսումնասիրության մեթոդների բազմազանություն, այլ նաև անորոշությունը ուսումնասիրության առարկայի սահմանման հարցում: Սոցիալական պատմության դեպքում այս մտայնությունը պատմաբան Հանս Ռոզենբերգի խոսքերով հնչում է այսպես. «Այսպես կոչված սոցիալական պատմությունը շատերի համար դարձել է հավաքական, հեղհեղուկ հասկացություն այն ամենի մասին, ինչը պատմական գիտության մեջ համարվում է պետքական և առաջադիմական»[1]: Առօրեականության պատմության առարկայի սահմանման վերաբերյալ գերմանացի պատմաբան Ալֆ Լյուդկեն ասել է հետևյալը. ««Առօրեականություն» տերմինը հեռու է կատարյալ լինելուց, և այն ընդունվել է ավելի լավը չլինելու պատճառով: Այդուհանդերձ, այս անվանումն արդարացնում է իրեն որպես ամենակարճ և բովանդակալի ձևակերպում, որն իր սուր ծայրով բանավիճորեն ուղղված է այն պատմագիտական ավանդույթի դեմ, որը բացառում է առօրեականությունն իր տեսադաշտից»[2]: Նշված ձևակերպումների մեջ առկա ընդհանրությունը պետք է օրինաչափ համարել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առօրեա-

[1] **Зидер Р.**, *Что такое социальная история? Разрывы и преемственность в освоении «социального»*, альманах Thesis, вып.1. 1993.

[2] **Кром М.**, *Повседневность как предмет исторического исследования*, «История повседневности», сборник научных работ, изд. Алетея, СПб., 2003.

կանության պատմությունը համարվում է սոցիալական պատմության ենթաճյուղերից մեկը:

Պետք է նշենք, սակայն, որ «առօրեականություն» հասկացության տարբեր մեկնաբանություններ, այնուամենայնիվ, եղել են: Ինչպես նշում է ռուս պատմաբան Միխայիլ Կրոմը, գերմանացիները «առօրեականություն» հասկացությունը ներկայացնում էին «ոչ առօրյա» իրադարձությունների հետ հակադրության մեջ՝ որոշակի պատկերացում չտալով, սակայն, վերջինների մասին: Եվ միայն գերմանացի նշանավոր սոցիոլոգ Նորբերտ Էլիասն էր, որ ութ զույգ՝ իրար հակադիր հասկացությունների ներկայացմամբ տվեց «առօրեականություն» և «ոչ առօրեականություն» հակադրության ամբողջական պատկերը[1]: Սա, այնուամենայնիվ, վերջակետ չդրեց «առօրեականություն» հասկացության ավարտուն և ամբողջական բացատրության փնտրտուքներին, որոնք շարունակվում են նաև մեր օրերում:

Ինչպես և սոցիալական պատմության դեպքում, առօրեականության պատմության առարկայի սահմանման դժվարությունը չխանգարեց, որպեսզի պատմագիտական այս ուղղությունը մեծ հեղինակություն և տարածում ստանա արևմտյան պատմագրության մեջ: Նրա ստեղծման ակունքներում կանգնած են իտալական և գերմանական պատմագիտական դպրոցները, որոնց ներդրումը հատկապես մեծ է առօրեականության պատմության տեսական հիմնախնդիրների առաջադրման մեջ: «Առօրեականության պատմություն» տերմինը գիտական շրջանառության մեջ մտցվեց գերմանացիների կողմից (Alltagsgeschichte), Իտալիայում այս ոլորտին վերաբերող հետազոտությունները հիմնականում կա-

[1] **Кром М.**, նշվ. աշխ.:

տարվում էին «միկրոպատմություն» ձևակերպմամբ[1]: Միկրոպատմության հետազոտողներից՝ որպես այս ուղղության գլխավոր տեսաբաններ, կարելի է առանձնացնել իտալացի պատմաբաններ Ջիովաննի Լևին և Կարլո Գինզբուրգին: Նրանք առաջինն էին, որ կարողացան ներկայացնել աննշան իրադարձությունների համակողմանի ուսումնասիրության կարևորությունը՝ ըստ էության վիճարկելով նաև ցանկացած իրադարձության՝ պատմության մեջ «աննշան» կամ «նշանավոր» պիտակավորումների ենթարկելու ավանդույթը: Այս ավանդույթը ձևավորվել էր ավելի վաղ, և այն չպետք է վերագրել միայն ավանդական-դասական պատմագիտությանը: Ինչպես նշում է գերմանացի պատմաբան Հանս Մեդիկը, դեռևս Ֆերնան Բրոդելի կողմից օգտագործվել է «միկրոպատմություն» եզրը, որի տակ Բրոդելը հասկացել է նշանակություն չունեցող, պատմության համար անէական իրադարձությունների ամբողջությունը՝ որպես, այսպես ասած, «մեծ» պատմության մասնավոր մնացուկ[2]: Ինչպես արդեն նշել ենք, Բրոդելի այս մոտեցման պատճառը պայմանավորված էր նրանով, որ պատմական գործընթացի իրադարձային կողմը նրան հետաքրքրում էր միայն երկարատև պատմական ժամանակահատվածների մեջ, որովհետև սրանցում էին միայն ծնվում օրինաչափությունները և ընդհանրական հետևությունների հնարավորությունները: Հակառակ դեպքում մասնավոր բնույթի իրադարձությունները Բրոդելի համար հղի էին դրվագայնության վտանգով: Այս մոտեցմանը դեմ է արտահայտվում Ջիովաննի Լևի, որը գտնում էր, որ միկրոպատմություն ասելով պետք է

[1] 1980 թ. իտալական «Էյնաուդի» հրատարակչությունը սկսել էր թողարկել «Միկրոպատմություններ (Microistorie)» խորագրով գիտական շարքը՝ բաղկացած 20 հատորից:

[2] **Медик Х.**, *Микроистория*, альманах Thesis, вып. 4, 1994.

հասկանալ ոչ թե մանրուքների զննությունը, այլ օբյեկտի հետազոտությունը մանրադիտակով: «Պատմաբանները չեն հետազոտում գյուղերը: Նրանք հետազոտություններ են անցկացնում գյուղերում»[1]: Լևիի այս ձևակերպումն, ընդհանուր առմամբ, բացատրում է միկրոպատմության հիմնական առավելությունը մակրոպատմության նկատմամբ: Հետազոտող պատմաբանն այս դեպքում անում է մոտավորապես այն, ինչ բժիշկ մանրէաբանը՝ մանր օրգանիզմների ուսումնասիրության ժամանակ: Ինչպես որ բժիշկն է այդ օրգանիզմների մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով կարողանում հասկանալ դրանց ազդեցությունները ամբողջ օրգանիզմի կառուցվածքների վրա, այնպես էլ պատմաբանն է կարողանում հետազոտության օբյեկտի «մանրացման» միջոցով տեսնել նրա կապը իր պատմական և սոցիալական միջավայրի հետ: Միկրոպատմությունը ոչ թե հատվածականացնում, այլ ընդհակառակը, ամբողջացնում է պատմական գործընթացի մասին պատկերացումները: «Մանրադիտակի» մեթոդի կիրառմամբ նա ավելի է խորանում սոցիալական կառուցվածքների և ինստիտուտների մեջ՝ համայնք, ընտանիք, պետություն և այլն, սրանց մեջ գտնում է անհատին՝ իր անհատական հատկանիշներով, սոցիալական և հոգեբանական վարքագծով, մտածողությամբ: Այս հատկանիշները հետազոտողն ուսումնասիրում է տվյալ տարածքում գործող սոցիալ-տնտեսական, մշակութային հարաբերությունների, պետական կյանքի և հասարակական այլ իրողությունների համատեքստում: Պարզ է, որ լոկ անհատը չէ միկրոպատմության հետազոտության օբյեկտը, այլ՝ անհատի կենսափորձը վերը նշված միջավայրերում: Այստեղ առավել հստակ է դրսևորվում պատմության առաքելությունն ըստ միկրոպատմության տեսաբանների՝ ոչ թե պատմական գործընթացները հետազոտել վերացարկված, այլ ուսումնասիրել սրանց արձագանքները անհատների այսպես ասած՝ «կենսական աշխարհներում»՝ ստանալով պատմական կեցության առավել ամբողջական բնութագրեր:

[1] **Медик Х.**, նշվ. աշխ.:

Իր աշխատություններում միկրոպատմական հետազոտությունների վառ օրինակներ է ցույց տալիս Կարլո Գինզբուրգը: Նրա մոտ ցայտուն արտահայտված են մարդու անհատական կենսափորձի դրսևորման երևույթները նրա սոցիալական պրակտիկայում, ընդորում՝ սյուժեները, որոնք ընտրված են հեղինակի կողմից, ունեն ավելի շատ մշակութաբանական ուղղվածություն: Գինզբուրգին առավել հետաքրքրող թեմաներից կարելի է համարել առասպելաբանությունը, ժողովրդական նախապաշարմունքները, աստվածապաշտությունը և այլն: Գինզբուրգի նշանավոր աշխատություններից է «Առասպելներ, խորհրդանշաններ, նախանշաններ»[1] ժողովածուն, որտեղ ի թիվս այլ հոդվածների՝ հանդիպում ենք հեղինակի կողմից արված մի ընդարձակ ուսումնասիրության, որը վերաբերում է միջնադարյան ինկվիզիցիայի կողմից կազմակերպված դատավարություններին: Սույն ուսումնասիրության վրա մի փոքր կանգ կառնենք, քանի որ, մեր համոզմամբ, այն ակնառու ձևով ցուցադրում է ոչ միայն միկրոպատմության հետազոտության մեթոդական մոտեցումների առանձնահատկությունը, այլ նաև առանձնանում է հետազոտական արդյունքի յուրօրինակ մեկնաբանությամբ: Այսպես՝ Մոդենայի պետական արխիվում հեղինակը XV–XVI դարերում ինկվիզիցիայի կազմակերպած դատավարությունների արձանագրություններից

[1] **Гинзбург К.**, *Мифы-эмблемы-приметы (морфология и история)*, М., Новое издательство, 2004.

առանձնացնում է 1519 թ. տեղի ունեցած դատավարության նյութերը, որոնք վերաբերում են կախարդության մեջ մեղադրվող կալվածատիրական գյուղացի Կյարա Սինյորինիին: Ըստ մեղադրանքի՝ այն բանից հետո, երբ Կյարայի տիրուհին՝ Մարգարիտա Պացցանին, նրան և ամուսնուն վտարել էր իր կալվածքից՝ զրկելով նրանց հողից, Կյարան գործարքի էր գնացել չար ուժերի հետ և կախարդանքի միջոցով հիվանդացրել իր տիրուհուն: Իրեն կալվածք վերադարձնելու խոստման դիմաց նույն ուժերի միջոցով նա բուժել էր տիրուհուն, սակայն, երբ վերջինս հրաժարվել էր կատարել խոստումը, նորից կախարդել էր նրան: Այս պատմության մեջ Գինզբուրգը եվրոպական միջնադարի բարքերի, ժողովրդական աստվածավախության և խավարամտության մթնոլորտի խիստ հետաքրքրաշարժ և կենդանի նկարագրությունների համատեքստում ներկայացնում է հետազոտության առանցք հանդիսացող դիմակայությունը, որը ծավալվում է գործով մեղադրող, մոլեռանդ վանական Բարտոլոմեո դա Պիզայի և Կյարայի միջև: Հարցաքննությունների արձանագրություններում երևում է, որ դա Պիզան փորձում է ուղղորդող հարցերի միջոցով Կյարային համոզել, որ Մարիամ Աստվածածնի կամ անմեղ պատանու տեսքով նրան երևացած խորհրդավոր ուժերը, որոնք Կյարային օժտել են գերբնական կարողություններով, իրականում սատանայի տարբեր կերպարանքներն են: Այս դեպքում վանականը կկարողանար ապացուցել մեղադրանքը՝ Կյարային ներկայացնելով որպես կախարդուհի, որը ծառայում է դևերին: Սակայն Կյարան՝ չժխտելով տիրուհուն կախարդելու բուն փաստը, հրաժարվում է ճանաչել սատանայի որևէ առնչություն այս դեպքերին, համառորեն պնդելով այն տեսակետը, որ ինքն այս կարողությունները ստացել է որպես աստվածային շնորհում՝ ի պատաս-

խան «իր և իր որդիների աղոթքների»[1]: (Այս դեպքում Կյարան կկարողանար ապացուցել, որ իր արարքը ոչ թե կախարդություն է, այլ իր աստվածախության, Աստծո նկատմամբ իր տածած սիրո հետևանք, հետևաբար՝ կկարողանար խուսափել մահապատժից): Պաշտպանության մարտավարությունը, որն ընտրել էր Կյարան և որն ի վերջո պսակվեց հաջողությամբ (նրան մահապատժի չենթարկեցին, այլ ուղարկեցին բժշկական մի հաստատություն, որտեղ նա պետք է հիվանդներին խնամելով քավեր իր մեղքերը) պետք է դիտարկել ոչ միայն դատավարական պրակտիկայի, այլ առհասարակ՝ հասարակական իրողությունների համատեքստում: Սա ոչ միայն պաշտպանության գծի կառուցման, պաշտպանության մարտավարության կիրառման մասնավոր օրինակ է, որը մշտապես հանդիպում է դատական գործընթացներում, այլ իշխանություն-հասարակություն փոխհարաբերությունները բնութագրող դրվագ: Ինկվիզիցիայի դատարանը լոկ դատական ատյան չէր, այլ պապական իշխանության և կաթոլիկ եկեղեցու քաղաքական ազդեցության ամրապնդմանը ծառայող, հետևաբար՝ իշխանական ազդեցիկ լծակներ ունեցող մարմին: Կյարա Սինյորինիի քայլերը դատավարության ընթացքում հանրային գիտակցության մեջ պետական, իշխանական անբարենպաստ վճիռներին, քաղաքական գործընթացների ազդեցություններին դիմագրավելու և սեփական կյանքը բարելավելու այսպես ասած «գոյապահպանման մարտավարության» օրինակ են:

Գոյապահպանման մարտավարությունների թեման առանցքային կարևորություն ունի նաև առօրեականության պատմության հետագա ուսումնասիրողների մոտ: Այն հանդիսանում է սոցիալական պրակտիկայի անհատական կամ խմբային դրսևորումնե-

[1] **Гинзбург К.**, նշվ. աշխ., էջ 22:

րի յուրօրինակ արտահայտություն, որտեղ ակնհայտ երևում են հանրային մտածողության փոփոխությունները՝ կախված քաղաքական համակարգի, կամ այլ գործոնների ազդեցություններից: Առօրեականության պատմության գերմանական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Ալֆ Լյուդկեն, սոցիալական պրակտիկան և սոցիալ-հոգեբանական վարքագծի դրսևորումները հոչակեց այն հիմնական երևույթները, որոնց միջոցով պետք է տարվեն առօրեականության պատմության ուսումնասիրությունները: Նա գտնում էր, որ նախկինում հետազոտական այս ուղղության մեջ կարևորվում էր միայն սոցիալական կենսափորձի յուրացումը, իսկ պրակտիկան, այսինքն՝ այդ փորձի գործնական կիրառությունը, մղվում էր երկրորդ պլան: «Մինչդեռ առօրեականության պատմությունը,- գրում է հեղինակը,- սահմաններ չի ճանաչում: Մարդկային գործունեության բոլոր ձևերն արժանի են ուսումնասիրության՝ և՛ ընկալումը, և՛ ապրումները, և՛ ինքնաարտահայտումն այնքանով, ինչքանով որ խոհերը, ինչպես նպատակաուղղված, այնպես էլ աննպատակ գործողությունները, որոնք կատարվում են և՛ աշխատանքային, և՛ հանգստի օրերին՝ օր ու գիշեր»[1]: Խոսելով սոցիալական պրակտիկայի մասին, նա, ըստ էության, նույնացնում էր պրակտիկան գոյապահպանման մարտավարության հետ՝ նշելով, որ «պրակտիկա» բառը նշանակում է այնպիսի վարքագիծ, որով մարդիկ հարմարվում են իրենց կյանքի պայմաններին[2]: Լյուդկեի մոտ հետազոտության միկրոպատմական մոտեցումը առաջնահերթություն չէր: Նա գտնում էր. որ առօրեականության պատմության մեջ հավասարաչափ հետաքրքիր են սոցիալական կենսափորձի յուրացման և՛ կոլեկտիվ, և՛ անհատա-

[1] **Людке А.**, *История повседневности в Германии. Новые подходы к изучению труда, войны и власти*, М., Росспэн, 2010, с. 56.

[2] Նույն տեղում, էջ 58:

կան ձևերը: Կարևորը սրանց հիմքում ընկած հոգեբանական շարժառիթների, ընկալումների առանձնահատկությունները հասկանալն էր: Լյուդկեի մոտ չկային հոգեբանական վիճակներ, որոնք անհատի համար հաստատուն էին նրա գործունեության բոլոր միջավայրերում: Հեղինակը գտնում էր, որ մարդու սոցիալ-հոգեբանական վարքագիծն արտահայտվում է այսպես ասած «ճոճանակային»՝ տատանողական փոխակերպումներով՝ կախված նրանից, թե ի՞նչ միջավայրում է նա գտնվում և ի՞նչ խնդիր է լուծում այդ պահին: «Վերցնենք, օրինակ, սառնասրտությունը,- գրում է հեղինակը: Սառնասրտությունն անհրաժեշտ է վիճաբանություն հրահրող ընկերների կամ հարազատների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև՝ տեխնիկական սարքերի հետ աշխատանքում: Սառնասրտությանը կարող է փոխարինել այնպիսի վիճակ, երբ մարդը դուրս է գալիս ափերից: Նա կատաղում է հիմար և անպատկառ ղեկավարի վրա, բարկանում է անզորությունից, կամ վախենում է մահացու հիվանդությունից, ուրախանում է «փոքր» կամ «մեծ» հաջողություններով, երբ, ասենք, արժանանում է հեղինակավոր մարդու՝ իր համար չափազանց ցանկալի ուշադրությանը: Սեփական շահերի իրագործման համար պայքարն ուժեղանում է՝ շնորհիվ հենց այս զգացմունքների արձագանքի, որոնք ընկալվում են և արտահայտվում որպես համակրանք կամ հակակրանք, հույս կամ վախ, հպարտություն կամ ամոթ»[1]:

Լյուդկեի մոտեցումները, ըստ էության, Բրոդելյան կառուցվածքների ուսումնասիրության և միկրոպատմական մանրացման յուրօրինակ սինթեզ կարելի է համարել: Չմերժելով սրանցից և ոչ մեկը՝ Լյուդկեն սրանց կուտակած փորձի հիման վրա առաջար-

[1] **Людке А.**, նշվ. աշխ., էջ 61:

կում էր հետազոտական նոր հայեցակարգ: Այս հայեցակարգի առանձնահատկությունն այն էր, որ հավասարաչափ կարևորություն էր տրվում և՛ խմբերի, և՛ անհատների սոցիալական փորձին: Լյուդկեն հավասարաչափ կարևորություն էր տալիս խմբային և անհատական կենսագրական տեղեկությունների հավաքմանը, «որոնք կարող են ցույց տալ ինչպես միջակ մեծություններ, այնպես էլ անհատական ընկալման և վարքագծի հնարավոր տարբերակների ծավալը»[1]: Լյուդկեն դեմ էր իրավիճակներից բխող ավարտուն և միանշանակ հետևություններին, որոնք նա համարում էր «ուղղաձիգ պատճառականություն», որովհետև սրանք հետազոտողի ուշադրությունից դուրս են թողնում սոցիալական բազմաշերտ կապերը և արտաքինից նույնանման թվացող իրավիճակների ներքին տարբերությունները: Ասվածի համար դիպուկ օրինակ կարող է ծառայել այն իրավիճակը, որը ներկայացնում է Լյուդկեն նշված աշխատության մեջ: 1944 թ. գերմանուհի Ֆրիդան, որն աշխատում էր Դրեզդենի թղթե փաթեթներ արտադրող գործարաններից մեկում, արհամարհում էր գործարանում աշխատող հրեաների հետ խոսելու բոլոր արգելքները: Տեսանելի վայրերում նա նույնիսկ խնձոր էր թողնում հրեաների համար, բայց միաժամանակ սարսափում էր այն մտքից, որ գերմանուհին՝ «արիացին», կարող է երբևէ ամուսնանալ հրեայի հետ[2]:

Սոցիալական հարաբերություններում Լյուդկեն տեսնում էր բազմազանություն և շարժունակություն, որոնք հասկանալու համար նա առաջարկում էր այդ կապերին «մոտենալու», «շոշափելու» մարտավարություն: «Սկզբնաղբյուրներում, պատմական անցուդարձերի հետքերում և նյութերում անցյալի բացահայտելի

[1] **Людке А.**, նշվ. աշխ., էջ 63:
[2] Նույն տեղում, էջ 64:

ձայների, հնչյունների «արձագանքների» վերաբերյալ հետազոտական հայեցակարգն ընդունելու դեպքում հնարավորություն ենք ստանում հաղթահարել ուղղաձիգ, միակողմանի պատճառականությունը»,- գրում է հեղինակը[1]:

Մեթոդոլոգիական մոտեցումները, որոնք առաջարկում էր Ալֆ Լյուդկեն, առօրեականության պատմության հետազոտությունները դարձնում են առավել բազմաբովանդակ: Նրանցում կարևորվում է անհատի և խմբերի սոցիալական պրակտիկան՝ զերծ «ուղղաձիգ պատճառականության» կանխավարկածից, երբ իրավիճակների վերլուծության դեպքում կիրառվում են հիմնավորումների պատրաստի մոդելներ: Այս մեթոդի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ պատմական իրողությունների վերակերտման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում այդ իրողություններին մարդկանց զգայական և իմացական արձագանքներին, այն է թե՝ յուրաքանչյուր իրադարձություն անց է կացվում անհատի կամ խմբի գիտակցական ընկալումների զտիչով: Այս մոտեցումը, ըստ էության, նախանշում էր առօրեականության պատմաբանի՝ սկզբնաղբյուրների հետ աշխատանքի հիմնական սկզբունքը, որ ռուս պատմաբան Նատալյա Պուշկարյովան ձևակերպեց որպես «ուրիշի հուզական խոսքի թարգմանություն»[2]:

1980-ական թվականներին առօրեականության պատմության հանդեպ հետաքրքրությունը շարունակեց մեծանալ: Գոյապահպանման մարտավարություններ, քաղաքներ ու գյուղեր, անհատական կամ կոլեկտիվ սոցիալական վարքագիծ, պետական և իշխանական գործողություններին հանրային կամ անհատական արձագանքներ, ամբողջական պատմական ժամանակաշրջաններ

[1] **Людке А.**, նշվ. աշխ., էջ 63:
[2] **Пушкарева Н.**, *Предмет и методы изучения «Истории повседневности»*, *Вопросы теории*, ном. 5, М., 2004.

կում էր հետազոտական նոր հայեցակարգ: Այս հայեցակարգի առանձնահատկությունն այն էր, որ հավասարաչափ կարևորություն էր տրվում և՛ խմբերի, և՛ անհատների սոցիալական փորձին: Լյուդկեն հավասարաչափ կարևորություն էր տալիս խմբային և անհատական կենսագրական տեղեկությունների հավաքմանը, «որոնք կարող են ցույց տալ ինչպես միջակ մեծություններ, այնպես էլ անհատական ընկալման և վարքագծի հնարավոր տարբերակների ծավալը»[1]: Լյուդկեն դեմ էր իրավիճակներից բխող ավարտուն և միանշանակ հետևություններին, որոնք նա համարում էր «ուղղաձիգ պատճառականություն», որովհետև սրանք հետազոտողի ուշադրությունից դուրս են թողնում սոցիալական բազմաշերտ կապերը և արտաքինից նույնանման թվացող իրավիճակների ներքին տարբերությունները: Ասվածի համար դիպուկ օրինակ կարող է ծառայել այն իրավիճակը, որը ներկայացնում է Լյուդկեն նշված աշխատության մեջ: 1944 թ. գերմանուհի Ֆրիդան, որն աշխատում էր Դրեզդենի թղթե փաթեթներ արտադրող գործարաններից մեկում, արհամարհում էր գործարանում աշխատող հրեաների հետ խոսելու բոլոր արգելքները: Տեսանելի վայրերում նա նույնիսկ խնձոր էր թողնում հրեաների համար, բայց միաժամանակ սարսափում էր այն մտքից, որ գերմանուհին՝ «արիացին», կարող է երբևէ ամուսնանալ հրեայի հետ[2]:

Սոցիալական հարաբերություններում Լյուդկեն տեսնում էր բազմազանություն և շարժունակություն, որոնք հասկանալու համար նա առաջարկում էր այդ կապերին «մոտենալու», «շոշափելու» մարտավարություն: «Սկզբնաղբյուրներում, պատմական անցուդարձերի հետքերում և նյութերում անցյալի բացահայտելի

[1] Людке А., նշվ. աշխ., էջ 63:
[2] Նույն տեղում, էջ 64:

ձայների, հնչյունների «արձագանքների» վերաբերյալ հետազոտական հայեցակարգն ընդունելու դեպքում հնարավորություն ենք ստանում հաղթահարել ուղղաձիգ, միակողմանի պատճառականությունը»,- գրում է հեղինակը[1]:

Մեթոդոլոգիական մոտեցումները, որոնք առաջարկում էր Ալֆ Լյուդկեն, առօրեականության պատմության հետազոտությունները դարձնում են առավել բազմաբովանդակ: Նրանցում կարևորվում է անհատի և խմբերի սոցիալական պրակտիկան՝ զերծ «ուղղաձիգ պատճառականության» կանխավարկածից, երբ իրավիճակների վերլուծության դեպքում կիրառվում են հիմնավորումների պատրաստի մոդելներ: Այս մեթոդի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ պատմական իրողությունների վերակերտման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում այդ իրողություններին մարդկանց զգայական և իմացական արձագանքներին, այն է թե՝ յուրաքանչյուր իրադարձություն անց է կացվում անհատի կամ խմբի գիտակցական ընկալումների զտիչով: Այս մոտեցումը, ըստ էության, նախանշում էր առօրեականության պատմաբանի՝ սկզբնաղբյուրների հետ աշխատանքի հիմնական սկզբունքը, որ ռուս պատմաբան Նատալյա Պուշկարյովան ձևակերպեց որպես «ուրիշի հուզական խոսքի թարգմանություն»[2]:

1980-ական թվականներին առօրեականության պատմության հանդեպ հետաքրքրությունը շարունակեց մեծանալ: Գոյապահպանման մարտավարություններ, քաղաքներ ու գյուղեր, անհատական կամ կոլեկտիվ սոցիալական վարքագիծ, պետական և իշխանական գործողություններին հանրային կամ անհատական արձագանքներ, ամբողջական պատմական ժամանակաշրջաններ

[1] Людке А., նշվ. աշխ., էջ 63:
[2] Пушкарева Н., *Предмет и методы изучения «Истории повседневности»*, *Вопросы теории*, ном. 5, М., 2004.

կամ ավելի նեղ ժամանակահատվածներ, կենցաղ, աշխատանքային հարաբերություններ, սոցիալական կապեր. սա դեռ ամբողջական ցանկը չէ մեթոդական և թեմատիկ հետաքրքրությունների, որոնք շրջանառվում են առօրեականության պատմության հետազոտություններում[1]: Առօրեականության պատմությունն այսօր ոչ միայն իր հաստատուն տեղն է գրաղեցնում սոցիալական պատմության հիմնախնդիրների մեջ, այլև ավելի հաճախ դիտարկվում է որպես պատմագիտական ուսումնասիրությունների ինքնուրույն և պատմագիտական հանրության մեջ տարածված հետաքրքիր ուղղություն:

*
* *

Պետք է արձանագրել, որ սոցիալական պատմությանն առնչվող իմացաբանական բանավեճերին հայ նոր պատմագրության մեջ հավուր պատշաճի ուշադրություն չի դարձվել, ինչն ունի նաև իր օբյեկտիվ պատճառները: Խորհրդային տարիներին հայ պատմագիտական միտքը ստիպված էր ենթարկվել խորհրդային պետության կուսակցական-գաղափարական պարտադրանքին՝ պատմական հետազոտություններում առաջնորդվելով մարքսիստական մոտեցումներով: Այս շրջանում հայ պատմաբանների

[1] Վերը նշված թեմատիկայով գրված աշխատություններից պետք է առանձնացնել նաև ամերիկացի պատմաբան, խորհրդային հասարակության խոշոր հետազոտող Շեյլա Ֆիցպատրիկի երկու ծավալուն աշխատությունները (**Фицпатрик Ш.**, *Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город*, М., Росспэн, 2001. և **նույնի**, *Сталинские крестьяне. Социальная история Советской России в 30-е годы: деревня*, М., Росспэн, 2001), որտեղ հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել խորհրդային քաղաքացիների դժվարին կյանքը խորհրդային ամբողջատիրության կայացման ժամանակաշրջանում՝ հետազոտության հիմքում ունենալով նրանց սոցիալական բազմաշերտ վարքագիծը և ստալինգիմի արտասովոր, դժվարին պայմաններում նրանց կողմից կիրառվող «գոյապահպանման մարտավարությունները»:

կամքի և ինքնազոհողությունների շնորհիվ, նույնիսկ գաղափարական պարտադրանքի պայմաններում, արծարծվեցին հայ ազգային պատմության շատ կարևոր թեմաներ՝ պարարտ հող ստեղծելով հետագայում ազգային պատմագրության զարգացման համար: Անկախության հռչակումից հետո հայ պատմագիտությունը սկսեց զարգանալ՝ գիտական առաջնահերթություններում ունենալով հայագիտական ուսումնասիրությունները, որոնք, սակայն, արվում էին հիմնականում խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն մնացած մեթոդական և հայեցողական մոտեցումներով: Սոցիալական մեծ հեղաշրջումը, որ արձանագրվեց համաշխարհային պատմագիտության մեջ, չարծարծվեց հայագիտական հետազոտությունների զգալի մասում: Անվիճելի է հայ ժողովրդի անցյալի արժևորման անհրաժեշտությունը: Սակայն թեմատիկ և մեթոդական սահմանափակ նախասիրությունները, որոնք այսօր գերիշխում են հայ պատմագիտության մեջ, այն դեպի լճացում տանելու վտանգ են պարունակում: Սոցիոլոգիական հետազոտությունների և դրանց արդյունքների ներդրումը, առօրեականության պատմության հետազոտությունները, և առհասարակ, պատմագիտական նոր աշխարհայացքի ձևավորումը, կարծում ենք, հայ պատմագիտության համար այսօր հրատապ է դարձել:

Հայոց պատմության յուրաքանչյուր հիմնահարց այսօր հետազոտական նոր մոտեցումների ներդրման կարիք ունի՝ մեթոդական ընդլայնված գործիքակազմով, և հետազոտական նոր հիմնախնդիրների առաջադրմամբ: Ռայնխարդ Զիդերը, օրինակ, շատ արժեքավոր դիտարկում ունի՝ կապված միկրոպատմության, որպես պատմագիտական հետազոտական ուղղության անհրաժեշտության վերաբերյալ: Նա գտնում է, որ միկրոպատմությունը,

մրցակցելով պատմական գիտության այլ ուղղությունների հետ, առաջ է քաշել կարևոր հարցեր և առաջարկել է հասարակական փոփոխությունների առավել համոզիչ բացատրություններ, առանց որոնց խորքային հետազոտության հնարավոր չէր լինի բացատրել Օսվենցիմը[1]: Կարծում ենք այս ձևակերպումը ուսանելի է հատկապես մեզ համար՝ հաշվի առնելով Հայոց ցեղասպանության սպիտակ էջերը, որոնք թեմային առնչվող պատմագիտական հսկայածավալ գրականության պայմաններում դուրս են մնացել ուշադրությունից: Մինչ այսօր հետազոտության առարկա են եղել միայն Հայոց ցեղասպանության քաղաքական պատմության տարբեր հիմնախնդիրները: Մենք գիտենք Հայոց ցեղասպանության քաղաքական և պատմական շարժառիթների, Օսմանյան կայսրության հայատյաց քաղաքականության առանձնահատկությունների մասին, ծանոթ ենք ջարդերի կազմակերպման մեթոդներին, տեղահանության ժամանակագրությանը, ծավալներին և այլն: Իսկ ցեղասպանության տարիների առօրեականությունը լավագույն դեպքում լուսաբանված է ավելի շատ նկարագրական եղանակով՝ առանց փաստական և հուշագրական նյութերի վերլուծության: Իսկ ի՞նչ գիտենք մեր պատմության այս ողբերգական դարաշրջանի սոցիալական իրողությունների մասին: Ի՞նչ հետազոտական տվյալներ ունենք հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի մասին, որն առկա էր Արևմտյան Հայաստանում ջարդերից առաջ, ընթացքում և հետո: Ուսումնասիրել ե՞նք արդյոք արևմտահայ ազգաբնակչության կյանքը «ներքևից»՝ հասկանալու համար թուրքական պետության քաղաքականության արձագանքները նրա առօրյայում: Ի՞նչ գիտենք հայ գյուղացու, արհեստավորի, բուրժույի ու մտավորականի գիտակցու-

[1] **Зидер Р.**, նշվ. աշխ.:

թյան մեջ առաջացող և սոցիալական պրակտիկայում կիրառվող գոյապահպանման մարտավարությունների մասին: Հայերն ապրում էին թուրքերի, քրդերի, ասորիների ու հույների հետ կողք-կողքի: Վարքագծի ի՞նչ ընդհանուր կամ անհատական մոդելներ էին առաջանում նրանց փոխադարձ շփումներում, ի՞նչ սոցիալական կապեր էին գործում այս բազմազգ հասարակության ներսում: Սոցիալական կամ հոգեբանական ի՞նչ նկարագիր ուներ հայերի վերաբերմունքը օսմանյան պետության քաղաքականության ծալքերում նրա նկատմամբ իրականացվող մեծագույն դավադրության հանդեպ՝ հավատում էի՞ն զանգվածային ջարդերի հնարավորությանը պարզ մարդիկ, թե՛ ոչ, ինչու՛ զանգվածային, մեթոդապես մշակված բռնություններին մենք պատասխանում էինք տեղային բնույթ կրող ինքնապաշտպանական կռիվներով, ինչքանո՛վ էր խանգարում ժողովրդական մտածողությունը ֆիդայական շարժումներից համաժողովրդական ապստամբությունների անցնելուն: Անհատական կամ խմբային դիմակայության առանձին դրվագներ եղե՛լ, թե՛ չեն եղել գաղթի ճանապարհներին, համակենտրոնացման ճամբարներում և այլն: Եվ, ի վերջո, հայ հասարակության զգոնության բթացումը արդյո՞ք թուրքական պետության կազմակերպված, արդյունավետ քաղաքականության հետևանքն էր միայն: Յուրաքանչյուր հարցադրում, որ արվում է այս տարիների առօրեականության պատմության դիրքերից՝ գալիս է լրացնելու Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ ընդունված պատկերացումները, ինչ-որ տեղ չբացառելով նաև սրանց վերաիմաստավորումը: Կարծում ենք՝ հիմնավոր պետք է համարել այն կանխավարկածը, ըստ որի այս ժամանակաշրջանի ոչ բոլոր իրողություններն է հնարավոր բացատրել ազգային կուսակցությունների, հասարակական և քաղաքական

գործիչների գործունեությամբ, և ոչ բոլոր ձեռքբերումներն ու ձախողումներն է անհրաժեշտ վերագրել նրանց: Եվ, կարծում ենք, այս մտայնությունը արդիական է նաև հայոց պատմության մնացած հարցերի հետազոտական խնդիրների սահմանակարգման պարագայում:

Ցանկացած պատմական ժամանակաշրջան կամ հիմնախնդիր, որ այսօր հետազոտվում է հայոց պատմության կողմից, հասարակ մարդուն դուրս է թողնում իր ուշադրությունից՝ առաջնորդվելով քաղաքական պատմության ուղենշած մեթոդաբանությամբ և օրակարգով: Մեր համոզմամբ, այսօր անհրաժեշտ է վերանայել այս ավանդույթը, չվախենալ «հարցեր տալուց և պատասխաններ փնտրելուց», հայ պարզ, հասարակ մարդուն բացահայտել հայոց պատմության տարաբնույթ իրողություններում, մի խոսքով՝ կիրառելով համաշխարհային պատմագիտական մտքի կուտակած փորձը՝ մեզանում ևս մշակել սոցիալական պատմության հետազոտական հայեցակարգ և ռազմավարություն:

Ուրախալի է այն փաստը, որ այս հիմնախնդիրներն այսօր գիտակցվում են՝ ինչի արդյունքում արդեն ունենք հետազոտական նախաձեռնություններ, որոնք ուղղված են հայ պատմագիտության մեջ առօրեականության պատմության ուսումնասիրությունների տարածմանը: Այս ուղղությամբ ակտիվությունն առաջին անգամ նկատվեց 2009 թվականին, երբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ Երևանում անցկացվեց «Առօրեականության պատմությունը ԱՊՀ երկրների պատմության ուսումնասիրության մեջ» խորագիրը կրող չորրորդ միջազգային ամառային դպրոցը: Այս իրադարձությունը ազդակ հանդիսացավ առօրեականության պատմության նկատմամբ մերօրյա հայ պատմագիտության մեջ հետաքրքրության մեծացման համար: Հրատարակվեցին մի շարք ուսումնասիրություններ, որոնց հետազոտական կիզակետում հայտնվեցին Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության բազմաթիվ ուշագրավ դրվագներ, մասնավորապես, 1920-ական թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթած արևմտահայերի՝ տեղական հասարակությանը միահյուսվելու դժվարությունները[1], հայ հոգևորականների դժվարին կյանքը խորհրդային իշխանությունների հակակրոնական քաղաքականության համատեքստում[2] և այլն[3]:

Իհարկե, դեռևս վաղ է խոսել Հայաստանում առօրեականության պատմության համակարգված և լայնածավալ հետազոտությունների մասին: Պատմագիտական հետազոտությունների այս ուղղությունը հայ պատմագիտության մեջ, կարելի է ասել, իր առաջին, բայց համարձակ քայլերն է անում: Սակայն, հույս ունենք, հետագայում ևս այս ուղղության նկատմամբ հայ պատմաբանների հետաքրքրությունը չի նվազի, և մենք կունենանք առօրեականության պատմության հայկական դպրոցը:

---

[1] **Խաչատրյան Կ., Ժամհարյան Գ.**, *Խորհրդային Հայաստանում արևմտահայ գաղթականության առօրյայի պատմությունից (1920-ական թվականների սկիզբ)*, Պատմություն և մշակույթ, Ե., ԵՊՀ հրատարակություն, 2017, էջ 108–114:

[2] **Սուքիասյան Հ.**, *Հոգևորականները Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին*, (առօրեականության դրվագներ), «Խորհրդահայ մշակույթի կոնցեպտը» միջազգային գիտաժողովի զեկուցումների, Ե., 2019:

[3] Խորհրդային Հայաստանում իրականացված քաղաքական բռնաճնշումների վերաբերյալ տե՛ս **Խառատյան Հ., Շագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ.**, *Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում (պատմություն, հիշողություն, առօրյա)*, Ե., «Գիտություն», 2015, Խորհրդային Հայաստանում կոմունիստական մենատիրության հաստատման վերաբերյալ տե՛ս **Հակոբյան Ա.**, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում*, Ե., Պատմության ինստիտուտ, 2016:

Կուսակցական բյուրոկրատիզմի դրսևորումները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքում

1920–1930-ական թվականների Խորհրդային Հայաստանի քաղաքական առօրեականության մեջ խիստ տարածված էին բյուրոկրատիզմի դրսևորումները: Որպես խորհրդային պետական ապարատի թերություն՝ բյուրոկրատիզմը պահպանվեց խորհրդային իշխանությունների գոյության ողջ ընթացքում: Վ. Լենինն այսպես էր բնութագրում բյուրոկրատներին: «Մեր ամենավտանգավոր ներքին թշնամին՝ բյուրոկրատը, դա կոմունիստն է, որը զբաղեցնում է պատասխանատու պաշտոն և վայելում է բոլորի հարգանքը, ինչպես բարեխիղճ անձնավորություն: Նա ոչ միայն չսովորեց պայքարել քաշքշուկի դեմ, այլև քողարկում է այն: Այդ թշնամուց մենք պետք է ազատվենք և յուրաքանչյուր գիտակից բանվորի ու գյուղացու միջոցով մենք կհաղթահարենք նրան»[1]:

Խորհրդային Հայաստանում նույնպես առկա էին քաշքշուկների սիրահար ղեկավարներ, որոնց պարբերաբար ծաղրում էին և քննադատում մամուլի հրապարակներում, կուսակցական ժողովներում և այլն: Օրինակ՝ «Աշխատանք» թերթում «Նորին մեծություն վերջին բյուրոկրատը» վերտառությամբ ծաղրանկարը պատկերում է հիմնարկի տնօրենին՝ բազմած գահի վրա: Գլխին թագ է՝ «Առանց զեկուցման չմտնել» մակագրությամբ, որպես գահի հենակներ՝ աջ և ձախ կողմերում գրասենյակային գործերի կապուկներն են, որպես արքայական իշխանության խորհրդանիշներ՝ մի ձեռքում թանաքամանն է, մյուսում՝ գրիչը: Բերանի կողմում երիզված շրջանակներում գրված են ամենօրյա հրահանգները քաղաքացիներին՝ «եկեք վաղը» և աշխատակիցներին՝ «ստեղծել հանձնաժողով» (տես՝ նկ. 1)[1]: Հաջորդ ծաղրանկարը՝ «Գրասենյակային ոստայն» (տես՝ նկ. 2) վերնագրով, ներկայացնում է հիմնարկի տնօրենին սարդոստայնի կենտրոնում, որի ցանցի մեջ խճճվել են խնդրառու քաղաքացիները[2]: Բյուրոկրատական քաշքշուկի բնորոշ օրինակ է 1925 թ. վերաբերող մի զեկուցագիր, որը բանգյուղտեսչության բողոքների բյուրոյի վարիչին է ներկայացրել տեսուչ Գ. Արիստակեսյանը: Այստեղ ներկայացված է հողժողկոմատից վարձակալությամբ հողեր վերցրած և իր կատարած աշխատանքի դիմաց իր օրինական 430 ռուբլի վարձատրությունն սպասող քաղաքացու գործի անիմաստ ձգձգումը: Այս գործը, ըստ զեկուցագրի, դառնում է պետական մի շարք մարմինների՝ հողժողկոմատի, գյուղբանկի, ժողկոմխորհի և ներքին գործերի ժողկոմատի միջև ամենօրյա գրագրության նյութ. այս հիմնարկներից յուրաքանչյուրը փորձում է քաղաքացու գումարի վճարման պատասխանատվությունը բարդել մյուսի վրա, արդյունքում քաղաքացին այդպես էլ չի կարողանում ստանալ իր օրինական վարձատրությունը[3]: Նմանատիպ դեպքերը հաճախակի հանդիպող երևույթ էին խորհրդային հիմնարկներում:

Թեպետև Վ. Լենինը բյուրոկրատիզմը բնորոշում էր որպես քաշքշուկ, այս երևույթը խորհրդային քաղաքացիների և կուսակցական-պետական մարմինների ընկալումներում ստանում էր հավաքական իմաստ՝ ասոցացվելով նաև պետական-կուսակցական

[1] **Ленин В.И.**, *Полное собрание сочинений*, т. 45, М., 1970, с. 15.

[1] «Աշխատանք», Ե., 1927, 10 ապրիլի, № 4 (22):
[2] Նույն տեղում:
[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 128, ց. 1, գ. 2265, թ. 89:

պաշտոնյաների կողմից թույլ տրվող այլ չարաշահումների հետ՝ հովանավորչություն և խնամիություն, պաշտոնական դիրքի չարաշահումներ, պաշտոնյայի ամբարտավան կեցվածք, կոպտություն և այլն: Կոմունիստական կուսակցության՝ Երևանի քաղաքային ակտիվի ժողովներից մեկը, գումարված 1927 թ., ամբողջությամբ նվիրված էր բյուրոկրատիզմի դեմ պայքարի հարցերին: Ժողովի մասնակիցների ելույթներում պարզորոշ երևում է չարաշահումների այն բազմազանությունը, որ հավաքական ձևով ընկնում էր «բյուրոկրատիզմ» բնորոշման տակ: Զեկուցողներից մեկը որպես բյուրոկրատիզմի օրինակ է բերում դեպքը, երբ մահամերձ հիվանդին հիվանդանոց հասցնելու համար փաստաթղթային ձևակերպումների անթույլատրելի ձգձգումներ են իրականացվել, մյուսը «իսկական բյուրոկրատներ» է համարում հիմնարկի ուշացող աշխատողներին, երրորդը նշում է, որ շատ շրջաններում և Երևան քաղաքում պատասխանատու պաշտոնյաները հիմնարկության մեքենաներով գնում են որսի, և առաջարկում է խիստ հսկողություն սահմանել, որպեսզի հիմնարկությունների մեքենաները օգտագործվեն միայն ծառայողական նպատակներով և այլն: Ժողովում ելույթ ունեցողներից մեկը անգամ չի վախենում հայտարարել, որ բյուրոկրատիզմը հրապարակայնորեն քննադատելով՝ ժողովի մասնակիցներից յուրաքանչյուրը նույնպես բյուրոկրատական վերաբերմունք է ցուցաբերել իր աշխատանքի ընթացքում, և դա հաստատող փաստեր է բերում[1]: «Աշխատանք» թերթի «Ի՞նչ է բյուրոկրատիզմը, ո՞վ է բյուրոկրատը» վերնագրով հոդվածում հանդիպում ենք բյուրոկրատի հետաքրքիր բնորոշման. «Բյուրոկրատը խորհրդային իշխանության վտանգավոր

[1] Ժողովի նիստի ամբողջական արձանագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 119, թ. 1–4:

թշնամին է, նա պետապարատի վանողական ուժն է, նա թունավորում է մասսաների քաղաքական տրամադրությունները, շաղկապի փոխարեն անդունդ է բաց անում գյուղի և քաղաքի միջև»[1]:

Խորհրդային Հայաստանում 1921 թ. կիրառված ռազմական կոմունիզմի քաղաքականության ժամանակ ազգաբնակչության անվստահությունը խորհրդային իշխանության նկատմամբ պայմանավորված էր ոչ միայն անկանոն, զանգվածային բռնագրավումների, այլև դրանց ժամանակ տեղական պաշտոնյաների թույլ տված բազմաթիվ չարաշահումների հետ: Կուսակցական մարմինները, որոնք պետք է ապահովեին սույն գործընթացը, չէին կարողանում տարբեր բնակավայրերում լիովին վերահսկել կուսակցության ցուցումների իրագործումը, և տեղական պաշտոնյաների կամայականությունները: Ըստ էության՝ ռազմական կոմունիզմն այս կամայականությունների պատճառով կրկնակի պատուհաս էր դառնում ազգաբնակչության համար: Ասվածի համար կարող է խոսուն օրինակ ծառայել Երևանի բնակիչ Հայկուհի Ասլանյանի նամակը, որ հասցեագրված էր անձամբ Ասքանազ Մռավյանին: Նախ նշենք, որ կառավարության նախագահի տեղակալին նամակ ուղարկելու փաստն ինքնին վկայում է այն մասին, որ քաղաքացին շրջանցում էր տեղական պետական հիմնարկները, որոնցից հավանաբար հիասթափված էր և նրանց նկատմամբ անհրաժեշտ վստահություն չէր տածում: 50-ամյա այս այրին, որ երեք անչափահաս երեխայի մայր էր, գրում էր իր նամակում. «Նոր կառավարության գործունեության սկզբնական շրջաններում, երբ անխտիր քաղաքիս ամբողջ ազգաբնակչությունը ենթարկվում էր բռնագրավումների և զանազան անփորձ ան-

[1] «Աշխատանք», 1925, 4 փետրվարի, № 2:

գետների կամայականությունների, ես ևս դարձա նրանց զոհը. տարան ինձանից խալիչաներ և արժեքավոր իրեր, որոնք ամուսնուս մահից հետո տնտեսել էի իմ երեխաների սև օրվա համար:

Բռնագրավեցին իմ միակ բնակարանը...մեզ դուրս շպրտեցին փողոց, քանդեցին հիմնովին այդ շենքը և ավերեցին: Սովնարկոմի դուրս տված դեկրետի հիման վրա իբր թե մանդատով վերադարձրին ինձ, բայց իրականության մեջ ես դարձյալ ապրում եմ ուրիշի տան մեջ, և շենքը հետզհետե քանդվում է:

Իմ դիմումները բռնագրավման բաժանմունքին և պրեզիդիումի նախագահին մնացել են անհետևանք՝ չնայելով, որ բանգյուղտեսչության կողմից կարգադրություն է եղել, քննություն կատարվել և գրություն է գնացել բռնագրավման բաժանմունքի վրա, որ շենքը ազատեն քանդելուց և հանձնեն ինձ»[1]:

Բռնագրավումներն այս ժամանակ, փաստորեն, արվում էին նույնիսկ Հայաստանի հեղկոմի ընդունած դեկրետների բացահայտ խախտումներով: Սրա օրինակը կարող ենք տեսնել Թիֆլիս քաղաքի բնակիչ Ելիզավետա Անիսիմովայի դիմումի մեջ: Այս դիմումը նախորդներից տարբերվում է նրանով, որ քաղաքացին հստակ մատնանշում է օրինական ուժի մեջ մտած իրավական ակտը, որ, փաստորեն, իր դեպքում խախտվել է: Վկայակոչելով 1921 թ. ապրիլի 21-ի՝ Հայաստանի հեղկոմի որոշումը բոլոր տեսակի բռնագրավումները և խուզարկությունները «կտրուկ կերպով արգելելու» մասին, ինչպես նաև հեղկոմի շրջաբերականներում այդ մասին արված հայտարարությունները՝[2] քաղաքացին նշում է, որ տեղական գյուղական իշխանություններն, անտեսելով դրանք, իրենից բռնագրավել են Ալավերդիում գտնվող իր բնա-

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 1:
[2] Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, *Հայաստանը 1920–1940 թթ.*, Ե., 2006, էջ 218:

կարանը՝ այնտեղ գտնվող առաջին անհրաժեշտության բոլոր առարկաներով: Քաղաքացին նշում էր, որ բնակարանն ու գույքը վերադարձնելու՝ իր բազմաթիվ դիմումները մնացել են անպատասխան: Կա նաև մեկ ուշագրավ հանգամանք այս դիմումի մեջ: Գյուղական իշխանություններն իրենց ոչ օրինական որոշումը հիմնավորել են այն փաստով, որ քաղաքացին նշված գույքը ստացել է որպես ժառանգություն, իսկ ժառանգությունը խորհրդային օրենքներով արգելված է: Մինչդեռ քաղաքացին, մատնանշելով այս պնդման անհիմն լինելը, իր գույքի բռնագրավման վերաբերյալ որոշումը բացատրում է գյուղական իշխանությունների կողմից կիրառված դասակարգային մոտեցմամբ: «Եվ վերջում ինձ թույլ կտամ ասել, որ ո՛չ ես և ո՛չ էլ ամուսինս ունևոր դասակարգին երբեք չենք պատկանել և մեր երեսնամյա համատեղ կյանքի ընթացքում ստիպված ենք եղել մեր բազմամարդ ընտանիքի կարիքների համար անընդհատ աշխատել»[1]:

Հաշվի առնելով գյուղական բնակչության մեծ հոսքը դեպի քաղաքներ՝ Հայաստանի շատ քաղաքներում, մանավանդ մայրաքաղաք Երևանում, 1920-ականների սկզբին լուրջ հիմնախնդիր էր բնակարանների հարցը: Ժամանակի երգիծական թերթերից մեկը «Բնակարանային երջանկությունը Երևանում» վերտառությամբ ծաղրանկար էր տպել (տես՝ նկ.3), որտեղ պատկերված էին մի սենյակում բնակվող տարբեր մարդիկ՝ տարրական կենցաղային պայմաններից զուրկ, իսկ նկարի ներքևում արված էր հետևյալ մակագրությունը. «Բնակվողները անձկորեն սպասում են խոլերայի կամ չումայի փրկարար գալուստին»[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2223, թ. 35:
[2] «Կարմիր մոծակ», Ե., 1926, № 3, էջ 12:

Բնակարանների սակավությանն ավելանում էր նաև ոլորտի պատասխանատու պաշտոնյաների շատ հաճախ անբարեխիղճ, բյուրոկրատական վերաբերմունքը քաղաքացիների հանդեպ, ինչի բավական պատկերավոր նկարագրություններ ենք կարդում վերջիններիս նամակներում: Օրինակ՝ հողժողկոմատի աշխատակիցներից մեկը 1923 թ. հողժողկոմատի տեղկոմին ուղարկած իր դիմումի մեջ բողոքում է կոմունալ տնտեսության կայացրած որոշման դեմ, որի արդյունքում նրա՝ հինգ անդամից բաղկացած ընտանիքից, ի օգուտ քաղաքացի Աբովյանի, խլում էին նրան հատկացված երկու սենյակներից մեկը: Քաղաքացին նշում է, որ չնայած իր և կնոջ արտահայտած վճռական բողոքներին՝ միլիցիոներները շպրտում են նրանց իրերը մի սենյակից մյուսը՝ խտացնելով իրենց «մի սենյակում՝ սեղանների վրա քնելու աստիճան»: «Նման վերաբերմունքը իմ հանդեպ՝ որպես հողժողկոմատի պատասխանատու աշխատողի և հին պրոֆեսիոնալ գործչի... համարում եմ բռնություն...մանավանդ, որ ընկեր Աբովյանը, որպես միայնակ արդեն զբաղեցնում էր մեր հարևանությամբ մեկ սենյակ՝ միջանցիկ սենյակով, երբ 1922 թ. ամռանը ինձ հողժողկոմատի կողմից հատկացվել էր ներկայումս իմ կողմից զբաղեցրած բնակարանը, և ուրեմն ինձ վտարելու որոշումը պետք է կայացներ հողժողկոմատը»[1]: Այս դիմումի առավել հետաքրքրական մասը պետք է համարել այն հանգամանքը, որ քաղաքացին փաստորեն, համապատասխան մարմինների կողմից ստանալով աջակցություն, կարողացել էր հասնել մեկ այլ քաղաքացու վտարելու որոշման: Թե ինչ ճանապարհով էր նա ստացել աջակցություն, դիմողը չի նշում, սակայն պետք է ենթադրել, որ օրինական

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2227, թ. 1:

ուժի մեջ մտած որոշման անտեսման կամ լուծման համար քաղաքացին դիմել էր այլընտրանքային միջոցների:

Քաղաքային բնակչությունը դժգոհ էր հատկապես բնակվարչությունների աշխատանքից: Այս ոլորտում հաճախակի էին դարձել բյուրոկրատական կամայականությունները ոլորտի պատասխանատու պաշտոնյաների կողմից: Երևանի բնակիչներից մեկը 1928 թ. այսպես էր ներկայացնում իրենց թաղամասի բնակվարչության աշխատանքը. «...Խոսենք փաստերով. մեր միության ենթակա շենքերից մի քանի ապրողները դուրս են եկել, նրանց սենյակները վարչությունը գաղտագողի նիստեր է հրավիրել և հատկացրել վարչության անդամներին, չնայած նրանք սենյակի կարիք չեն ունեցել, իսկ մի որևէ տեղից երբ կոմիսիա է գալիս՝ բնակարաններ ստուգելու, առաջին հերթին իմ սենյակն են ցույց տալիս, որովհետև անտանելի դրության մեջ ենք ապրում, դուռ չունի, դռան փոխարեն պատուհանով ենք ելումուտ անում, փոքր լինելու և օդի անմաքրության հետևանքով մահացավ իմ երեխան, իսկ ընտանիքի մնացած անդամներս ամբողջ տարիներով անկողնում պառկած ենք, երրորդ տարին է այս վարչությունը խաբեբայությամբ է զբաղվում հանդեպ ինձ, պատճառ է եղել ընտանիքիս կյանքի քայքայման»[1]: Իսկ ահա բողոքներից մեկը Երևանի բնակիանձնաժողովի անդամներից մեկն ուղարկել էր անձամբ բնակիանձնաժողովի նախագահի դեմ: Իր նամակում նա խնդրում էր իրեն ազատել աշխատանքից, որովհետև բնակիանձնաժողովի նախագահը բնակարանների բաշխման ժամանակ խուսափում է հանձնաժողովի նիստեր գումարելուց և բնակարանների բաշխման հարցը լուծում է սեփական հայեցողությամբ:

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2489, թ. 61:

Բնակարանների սակավությանն ավելանում էր նաև ոլորտի պատասխանատու պաշտոնյաների շատ հաճախ անբարեխիղճ, բյուրոկրատական վերաբերմունքը քաղաքացիների հանդեպ, ինչի բավական պատկերավոր նկարագրություններ ենք կարդում վերջիններիս նամակներում: Օրինակ՝ հողժողկոմատի աշխատակիցներից մեկը 1923 թ. հողժողկոմատի տեղկոմին ուղարկած իր դիմումի մեջ բողոքում է կոմունալ տնտեսության կայացրած որոշման դեմ, որի արդյունքում նրա՝ հինգ անդամից բաղկացած ընտանիքից, ի օգուտ քաղաքացի Աբովյանի, խլում էին նրան հատկացված երկու սենյակներից մեկը: Քաղաքացին նշում է, որ չնայած իր և կնոջ արտահայտած վճռական բողոքներին՝ միլիցիոներները շպրտում են նրանց իրերը մի սենյակից մյուսը՝ խտացնելով իրենց «մի սենյակում՝ սեղանների վրա քնելու աստիճան»: «Նման վերաբերմունքը իմ հանդեպ՝ որպես հողժողկոմատի պատասխանատու աշխատողի և հին պրոֆեսիոնալ գործչի... համարում եմ բռնություն...մանավանդ, որ ընկեր Աբովյանը, որպես միայնակ արդեն զբաղեցնում էր մեր հարևանությամբ մեկ սենյակ՝ միջանցիկ սենյակով, երբ 1922 թ. ամռանը ինձ հողժողկոմատի կողմից հատկացվել էր ներկայումս իմ կողմից զբաղեցրած բնակարանը, և ուրեմն ինձ վտարելու որոշումը պետք է կայացներ հողժողկոմատը»[1]: Այս դիմումի առավել հետաքրքրական մասը պետք է համարել այն հանգամանքը, որ քաղաքացին փաստորեն, համապատասխան մարմինների կողմից ստանալով աջակցություն, կարողացել էր հասնել մեկ այլ քաղաքացու վտարելու որոշման: Թե ինչ ճանապարհով էր նա ստացել աջակցություն, դիմողը չի նշում, սակայն պետք է ենթադրել, որ օրինական

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2227, թ. 1:

ուժի մեջ մտած որոշման անտեսման կամ լուծման համար քաղաքացին դիմել էր այլընտրանքային միջոցների:

Քաղաքային բնակչությունը դժգոհ էր հատկապես բնակվարչությունների աշխատանքից: Այս ոլորտում հաճախակի էին դարձել բյուրոկրատական կամայականությունները ոլորտի պատասխանատու պաշտոնյաների կողմից: Երևանի բնակիչներից մեկը 1928 թ. այսպես էր ներկայացնում իրենց թաղամասի բնակվարչության աշխատանքը. «...Խոսենք փաստերով. մեր միության ենթակա շենքերից մի քանի ապրողները դուրս են եկել, նրանց սենյակները վարչությունը գաղտագողի նիստեր է հրավիրել և հատկացրել վարչության անդամներին, չնայած նրանք սենյակի կարիք չեն ունեցել, իսկ մի որևէ տեղից երբ կոմիսիա է գալիս՝ բնակարաններ ստուգելու, առաջին հերթին իմ սենյակն են ցույց տալիս, որովհետև անտանելի դրության մեջ ենք ապրում, դուռ չունի, դռան փոխարեն պատուհանով ենք ելումուտ անում, փոքր լինելու և օդի անմաքրության հետևանքով մահացավ իմ երեխան, իսկ ընտանիքի մնացած անդամներս ամբողջ տարիներով անկողնում պառկած ենք, երրորդ տարին է այս վարչությունը խաբեբայությամբ է զբաղվում հանդեպ ինձ, պատճառ է եղել ընտանիքիս կյանքի քայքայման»[1]: Իսկ ահա բողոքներից մեկը Երևանի բնակհանձնաժողովի անդամներից մեկն ուղարկել էր անձամբ բնակհանձնաժողովի նախագահի դեմ: Իր նամակում նա խնդրում էր իրեն ազատել աշխատանքից, որովհետև բնակհանձնաժողովի նախագահը բնակարանների բաշխման ժամանակ խուսափում է հանձնաժողովի նիստեր գումարելուց և բնակարանների բաշխման հարցը լուծում է սեփական հայեցողությամբ:

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2489, թ. 61:

«...Բացի այդ՝ դիմումների մեծ մասը հայերեն լեզվով են. սրանց հետ ինձ չեն ծանոթացնում, դրանց ընթացք են տալիս առանց իմ գիտության՝ ասելով, որ դրանք մասնավոր դիմումներ են, և պետք չի, որ ես դրանց խառնվեմ: Բայց ես ստիպված եմ խառնվել, որովհետև ինձնից պահանջում են», -բողոքում էր հանձնաժողովի անդամը[1]:

Ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում բյուրոկրատիզմի դրսևորումների մեջ գերիշխող երևույթ էր մանր հովանավորչությունը կամ, այսպես ասած, «խնամիությունը», որի հիմնական էությունը պետական հիմնարկներում ունեցած կարևոր ծանոթությունների հաշվին որոշակի արտոնությունների հասնելն էր: Սա օրինական հարաբերություններին այլընտրանքի ձև էր հասարակության և պետական հիմնարկների միջև շփումներում, որից հնարավորության դեպքում օգտվում էին և՛ քաղաքացիները, որոնք փորձում էին նման օգտակար կապերի միջոցով լուծել իրենց կենցաղային, աշխատանքային տարբեր խնդիրները, և՛ պետական պաշտոնյաները, որոնք փորձում էին արտոնյալ պայմաններ ապահովել իրենց հովանավորյալների համար: Այս երևույթը բավականին տարածված էր 1920–30-ականների առօրյա կյանքում՝ և՛ աննշան, և՛ առավել նկատելի դրսևորումներով: Օրինակ՝ 1921 թ. ժողկոմխորհի՝ Հայաստանի երկաթգծի բոլոր կայարաններին ուղղված շրջաբերականներից մեկում կարդում ենք այսպիսի տողեր. «Նկատվել է, որ խորհրդային հիմնարկների ծառայողների և աշխատողների անվճար երթևեկության նոր կանոնների հաստատումից հետո երթևեկության համար նախատեսված տոմսերը նրանց կողմից

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 59, թ. 155:

տրվում են այլ անձանց՝ բարեկամներին, հարազատներին և այլն:...Բոլոր ստուգողներին տրվում է ի պարտականություն՝ տոմսակների ստուգման ժամանակ անվճար տոմսակների տերերից պահանջել արձակուրդային կամ գործուղման վկայականներ, և դրանք չներկայացնելու դեպքում այս ուղևորներին ճանաչել անտոմս և ուղարկել չեկայի համապատասխան մարմինների տրամադրության տակ»[1]:

«Խնամիությունը» տարածված էր հատկապես աշխատանքային հարաբերություններում: Ստորև ներկայացվող մի քանի օրինակները, մեր կարծիքով, խոսուն փաստեր են, թե ինչպես էին երբեմն խորհրդային հիմնարկներում հիմնարկության ղեկավար աշխատողները անտեսում աշխատանքային պարտականություններին ներկայացվող պահանջները: Այսպես՝ Օլգա Առաքելովան, որ 1926 թ. աշխատել էր երկաթգծում որպես Լենինականի կայարանի գանձապահ, բանգյուղտեսչությանն ուղարկած իր դիմումի մեջ պատմում է, թե ինչպես է ենթարկվել երկաթգծի պաշտոնյա Դատեբովի հետապնդումներին, ինչի արդյունքում գանձապահի իր տեղը զբաղեցրել է նշված պաշտոնյային հովանավորող չեկայի նախագահ Չթչյանի քրոջ դուստրը: Մանրամասն նկարագրելով իր հանդեպ իրականացված անօրինական ստուգումները, հետապնդումները, խուզարկություններն իր բնակարանում՝ իբր կայարանի գանձարկղից յուրացված գումարներ գտնելու համար՝ Առաքելովան ամփոփել է իր դիմումը հետևյալ բառերով. «Իմիջիայլոց, ես իսկական պրոլետարական միջավայրից եմ և Սովետական իշխանության կողմից իմ շահերի պաշտպանության իրավունք ունեմ ոչ պակաս, քան Դատեբովը, չեկայի ղեկավար

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 58, թ. 103:

Չթյանը և իմ հաշվին այդքան հաջող տեղավորված՝ նրա քրոջ դուստրը: ...Մենք աղքատ ենք եղել, ապրել ենք կարիքի մեջ մինչև իմ մեծանալը և ծառայության անցնելը, և ես իմ աշխատանքով եմ պահել ինձ և մորս: Խնդրում եմ Ձեր պաշտպանությունը»[1]: Հաջորդ բողոքն ուղարկել էր Անի կայարանի բանվորներից մեկը, որ այստեղ աշխատել էր 1917 թվականից մինչև 1928 թվականը: Նշելով, որ իրեն կրճատել են որպես հարուստի՝ նա համաձայն չէր այդ որոշման հետ, որովհետև, ինչպես ինքն էր նշում, իրենից կրճատման ժամանակ չէին ուզել գյուղխորհրդի կողմից հաստատված որևէ փաստաթուղթ, որ կապացուցեր, որ ինքը միջակ գյուղացի է: «...Բացի անարդարությունը, այստեղ նկատվում է նաև հովանավորչություն»,- գրված էր նրա դիմումի մեջ[2]:

«Երկաթգծի դպրոցական բաժնում տիրում է անխնայողականություն, կազինոի մոտեցում, խնամիություն...»[3]: Այս վերնագրով բողոքում պատմվում է երկաթգծի դպրոցական բաժնի վարիչ Ինճիկյանի մասին, որը դպրոցբաժնին ենթակա մանկապարտեզի ղեկավար է նշանակել իր ծանոթ Գինոսյանին: Սակայն՝ անտեսելով մանկապարտեզի վարիչի այն պնդումը, որ իրենք նոր ղեկավարի կարիք չունեն, Ինճիկյանը շարունակել է տանը նստած Գինոսյանին աշխատավարձ վճարել:

Հաջորդ դեպքը գրանցվել է 1929 թ. պանիրյուղկենտրոնում: Այս հիմնարկի գանձապահ Հակոբ Արգարյանը, ըստ կուսակցության անդամ Կարապետ Կարապետյանի ներկայացրած զեկուցագրի, աշխատանքի է անցել առանց համապատասխան, հիմ-

[1] ՀԱԱ. ֆ. 128. ց. 1. գ. 2214. թ. 6:
[2] Նույն տեղում, թ. 13:
[3] Նույն տեղում, գ. 2497, թ. 35:

նարկի համար անհրաժեշտ փաստաթղթերի՝ խնամիության միջոցով[1]: Նրա աշխատանքի հարցը լուծել է իր փեսան՝ հայգյուղկոոպի պաշտոնյա Սամսոն Մարկոսյանը, որը համաձայնության է եկել պանիրյուղկենտրոնի վարչության նախագահ Բեկնազարյանի հետ, որն էլ հարցը համաձայնեցրել է աշխատանքի բորսայի ղեկավար պաշտոնյաներից մեկի հետ: Այս օրինակն ունի որոշ հետաքրքրություն: Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովը դեպքի վերաբերյալ իր եզրակացության մեջ ընդունում է, որ նշված Արգարյանին աշխատանքի ընդունելը եղել է ոչ օրինական, սակայն տալիս է հետևյալ բացատրությունը. «Գործի տվյալներից երևում է, որ Արգարյանը պրոֆմիության անդամ չի եղել և պետապի կողմից մերժված է եղել նրան ապահովագրելը: Այդ հանգամանքն ինքնըստինքյան ցույց է տալիս, որ նրան պաշտոնի ընդունելը եղել է անկանոն, որի *մեջ հետագայում միայն համոզվել է նաև պանիրյուղկենտրոնի վարչությունը* և հրաման տվել հեռացնելու: Այն, որ Արգարյանին հեռացնելն անտեղի ձգձգվել է և ավելորդ գրագրությունների տեղիք տվել, այդ ևս անհերքելի է, *սակայն որևէ փաստ ու ապացույց չկա, որ այդ տեղի է ունեցել ընկեր Սամսոն Մարկոսյանի՝ Արգարյանի հետ ունեցած բարեկամական կապի կամ Մարկոսյանի կողմից Արգարյանին պաշտպանելու պատճառով* (ընգծումները մերն են – հեղ.)»[2]: Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովի այս եզրակացությունը տալիս է դեպքի բացատրության երկու հնարավոր տարբերակ: Առաջինի դեպքում նշված Արգարյանի՝ ոչ օրինական ճանապարհով աշխատանքի անցնելը իսկապես եղել է թյուրիմացություն՝ կապված փաստաթղթային անճշտությունների հետ: Այս

[1] ՀԱԱ. ֆ. 91, ց. 1, գ. 3, թ. 2:
[2] Նույն տեղում, թ. 4:

տարբերակը մենք համարում ենք քիչ հավանական՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործին ներգրավված են եղել միանգամից երեք հիմնարկություններ՝ հայգյուղկոոպը, աշխատանքի բորսան և պանիրյուղկենտրոնը: Դժվար է հավատալ, որ սրանցից որևէ մեկը չկարողացավ միանգամից բացահայտել նշված Աբգարյանի՝ արհմիության մեջ չլինելը և ապահովագրության արգելքը: Երկրորդ դեպքում՝ Աբգարյանն իսկապես ընդունվել է աշխատանքի՝ շնորհիվ իր խնամիական կապերի: Կարելի է ենթադրել, որ ԿՎՀ-ն, մերժելով խնամիության փաստը և ապահովագրելով գործին խառնված պաշտոնյաներին, փորձել է բարձր պահել նշված հիմնարկների կուսակցական կազմակերպությունների վարկը: Չի բացառվում նաև նշված պաշտոնյաների՝ կուսակցության վերին օղակներում ունեցած հնարավոր ծանոթություններն ու կապերը, որոնք օգնում են թաքցնել իրենց հովանավորչական բնույթի գործողությունները:

Կազմակերպչական պաշտոնական տարաբնույթ գործառույթներում խնամիության ընդհանուր մթնոլորտը բավականին դիպուկ և զավեշտական բնույթով ներկայացված է «Աշխատանք» թերթի երգիծական բաժնում՝ «Արժեքավոր ատեստացիա» վերտառությամբ փոքրիկ անդրադարձում (հոդվածում), որը ներկայացնում ենք ստորև:

«– Չգիտեմ, ի՞նչ գործ տանք Մարկոսովնային:

– Ի՞նչ մասնագիտություն ունի:

– Կառավարչի կնոջ քույրն է»[1]:

Խնամիությամբ աշխատանքի տեղավորված քաղաքացիները երբեմն այն աստիճան էին չարաշահում իրենց արտոնությունը,

[1] «Աշխատանք», 1927, 10 ապրիլի, № 4 (22), էջ 19:

որ նրանց դեմ հաճախակի բողոքներ էին ուղարկվում կուսակցական մարմիններին: Այս երևույթը կարող էր ունենալ ծայրահեղ դրսևորումներ, ինչպես, ասենք, էլեկտրոմեխանիկական տրեստի հաշվապահ Մուշեղ Գրիգորյանի դեպքում, որ, ընդամենը հաշվապահի պաշտոնում լինելով, նշված հիմնարկում իրականացրել էր ղեկավար գործառույթներ՝ չունենալով դրա համար ոչ մի պաշտոնական լիազորություն: Բերենք հատվածներ նրա դեմ գրված բողոքից. «Սկսած 1924 թ. մինչև հիմա (1928 թ. – հեղ.) էլեկտրոմեխանիկական տրեստի հաշվապահ Գրիգորյան Մուշեղի դեմ եղել են զանազան դժգոհություններ և բողոքներ, որոնց էությունը կայանում է հետևյալում.

1. Մուշեղ Գրիգորյանը, բացի յուր հաշվապահական իրավունքները, կատարել է նաև վարչության գործը, նա ինքնագլուխ կերպով տուգանել է ծառայողներին, բանվորներին. լույսի փողը ուշացնելու և այլ դեպքերում յուր հայեցողությամբ ազատել է տուգանքներից յուր մոտիկ ծանոթներին և գլխավորապես գեղեցիկ կանանց, որոնց մոտեցել է հետին մտքերով: Պարզված է, որ բանվորների և ծառայողների վերաբերյալ նա եղել է խիստ, իսկ ոչ ծառայողների և յուր ծանոթների՝ ընդհակառակը:

2. Շնորհիվ յուր այդ սանձարձակ իրավունքների, նա գրասենյակում ստեղծել է այնպիսի տպավորություն, որ իբր ամբողջ ծառայողների բախտը կախված է իրանից՝ ուզած դեպքում կարող է կրճատել որևէ մեկին և ընդունել ուրիշին. մեկի աշխատավարձն ավելացնել, իսկ մյուսինը՝ ընդհակառակը. ելնելով դրանից՝ նա բռնացել է ուրիշների կամքի վրա: Օրինակ՝ նույն բաժնում աշխատող կանանցից ովքեր կատարել են նրա կամքը, մնացել են ծառայության, իսկ ովքեր դիմադրել են, հեռացվել են պաշտոնից: Գրիգորյանը բծախնդիր վերաբերմունք է ունեցել հան-

դեպ յուր դեմ պայքարողների»[1]: Նշված բողոքագրի հետագա տեքստից պարզ է դառնում, որ Գրիգորյանի համար նման արտոնյալ վիճակը հնարավոր է դարձել շնորհիվ ինչ-որ չբացահայտված բարձր պաշտոնյայի հետ նրա ունեցած մտերմության: Սա է պատճառը, որ նրա անօրինականությունների դեմ նախկինում կազմակերպված միջոցառումները արդյունք չեն տվել, և նա ոչ միայն շարունակել է աշխատել նշված հիմնարկում, այլև բացել է սղոցարան, որի էլեկտրամատակարարումն ապահովել է նշված տրեստի էներգիայով:

Նմանատիպ դեպք է գրանցվել նաև Քանաքեռշին կազմակերպությունում, որտեղ ստեղծված լարված մթնոլորտի պատճառը հիմնարկության մեքենագրուհիներից մեկն էր: Վերջինս, օգտագործելով հիմնարկի տնօրեն Մելիքսեթյանի հետ ունեցած կապը, իր համար արտոնյալ պայմաններ է ստեղծել և կարողացել է ավելի շատ գումարներ վաստակել, քան մյուսները: Բացի այդ, օգտվելով տնօրենի կողմից իր հանդեպ բացահայտ հովանավորությունից, նա կարողանում է կազմակերպության մնացած մեքենագրուհիներից շատերին վարկաբեկել, և նրանց ազատում են աշխատանքից: «Բանը հասել է նրան, որ հերթապահ պարետը չի համարձակվում նրան առաջարկել, որ ներքևում հանի կրկնակոշիկները, ինչպես դա անում են մնացած աշխատողները՝ ասելով, որ նա տնօրենի սիրուհին է, և այդ պատճառով անախորժություն կլինի»,- գրում է դիմումի հեղինակը և վերջում ավելացնում. «Նման վարքագիծը ամոթ և խայտառակություն է կուսակցականի և հիմնարկության ղեկավարի համար: Ընդհանրապես Մելիքսեթյանը չի ամաչում իր սիրային արկածներից և դեռ

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 224, թ. 20:

վաղուցվանից անբարոյականի և կնամոլի համբավ ունի, սակայն որպես «կարևոր մարդու»՝ նրան ամեն ինչ ներում են, չնայած ներկայիս պայմաններում դա պետք է որ այդպես չլիներ, որովհետև իսկական կուսակցականը պետք է միշտ մնա իր բարձունքի վրա»[1]: Ի դեպ, նույն Մելիքսեթյանը, իր հերթին, դատելով իր իսկ հայտարարությունից, վայելում էր կուսակցական վերադասի հովանավորությունը: Այս մասին նշվում է նրա դեմ ուղարկված հերթական բողոքի մեջ: Հանդիսանալով հիմնարկի տնօրեն՝ հրաժարվում է բավարարել անվտանգության գծով տեխնիկական աշխատողի խնդրանքը և տրամադրել իր մեքենան, որպեսզի վերջինս մեկնի կազմակերպության շինհրապարակներից մեկը, որտեղ դինամիտի պայթյունից բանվոր էր մահացել: «...Մելիքսեթյանը հայտարարեց՝ թեկուզ երեսուն բանվոր էլ մահացած լինեն, ես իմ մեքենան չեմ տա, այն դեպքում, երբ նա այդ նույն մեքենայով իր կանանց հետ զբոսնում է Քանաքեռի պողոտայում և քաղաքում:...Տեսնելով այս դրությունը, երբ այսպիսի ակնհայտ փաստեր կան, կասկած է ծագում, թե իմաստ ունի՞ արդյոք գրել Ձեզ սրա մասին (դիմումն ուղարկված է Ա. Ամատունուն – հեղ.), որովհետև Մելիքսեթյանը մի անգամ հայտարարեց. «ոչինչ էլ չի լինի, կենտկոմում նստած են մեր մարդիկ և անհրաժեշտության դեպքում կաջակցեն»: Մինչև ե՞րբ են նրան աջակցելու»,- գրված է դիմումի մեջ[2]:

Պետական պաշտոնյաների կոպտությունն ու ամբարտավան վարքագիծը բնակչության հետ շփումներում նույնպես առիթ է տվել բազմաթիվ քննադատությունների: Իր զեկուցումներից մեկում Սարգիս Լուկաշին-Սրապիոնյանը այս առթիվ հայտնել էր

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 656, թ. 153:
[2] Նույն տեղում, թ. 152:

իր մտահոգությունը: «Շատ անգամ տեղերում դուք կլսեք, որ դեռ այդ պետական վարչական ապարատն իր գործունեության ընթացքում ցույց է տալիս կոպտություն ժողովրդի հետ ունեցած փոխհարաբերությունների ընթացքում և չի ցուցադրում խորհրդային իշխանությանը հատուկ բարյացակամություն»,- նշում էր նա[1]: Այս խնդիրը կարևորվում էր խորհրդային պետական ապարատի արդյունավետ աշխատանքի միջոցով հասարակության մեջ խորհրդային հիմնարկների, հետևաբար նաև կոմկուսի հեղինակության բարձրացման նկատառումներով: Խորհրդային իշխանության առաջին տասնամյակում խորհրդային հանրապետությունների քաղաքական իրավիճակի վերաբերյալ միութենական և տեղական անվտանգության մարմիններին ուղարկված զեկուցագրերում և հաշվետվություններում հատուկ ուշադրություն էր դարձվում պետական ապարատի ստորին օղակների գործունեությանը: Նշվում էր, որ պետական ստորին ապարատի անբարենպաստ ղեկավարումը, նրա մեջ առկա լուրջ թերությունները առաջացրել են դժգոհություններ գյուղացիական զանգվածների մոտ և նպաստավոր պայմաններ են ստեղծել կուլակների կողմից խորհրդային իշխանությունը վարկաբեկելու համար[2]: 1925 թ. զեկուցագրերից մեկում հետևյալ ձևով էր ներկայացվում տեղական չինովնիկների վերաբերմունքը իրենց պարտականություններին. «Իշխանությունը դիտվում է որպես հարստանալու միջոց, և այն զավթելու նպատակով ահռելի գումարներ են ծախսվում: Ստորին պաշտոնյաների կոպտությունն ու կամայականությունն ամենօրյա

[1] **Լուկաշին Ս.**, *Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր*, Ե., 1986, էջ 166:
[2] Տե՛ս *Հայաստանի պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 103:

երևույթներ են: Առանձին դեպքերում ստորին պաշտոնյաները չեն խուսափում նույնիսկ կամայական գնդակահարություններից»[1]:

Կուսակցական և պետական մանր պաշտոնյաների կոպտությունը հատկապես տարածված էր գյուղերում: Գյուղացիության հետ տեղական իշխանությունների հարաբերությունները հաճախակի լուսաբանվում էին գյուղական թղթակիցների կողմից, սրանց վերաբերյալ առանձին բողոքներ և դժգոհություններ արտահայտող նամակները ուղարկվում էին կուսակցական վերադաս մարմիններին: Բեյուք Վեդիի շրջգործկոմի նախագահի տեղակալին բնութագրող հոդվածը այսպես էր վերնագրել գյուղական թղթակիցներից մեկը. «Շրջգործկոմի նախագահի տեղակա՛լ, թե՞ պրիստավ»: Այստեղ նա վառ գույներով ներկայացնում էր նշված պաշտոնյայի վերաբերմունքն իր աշխատողների և գյուղացիության հանդեպ: «...Հենց առաջին իսկ օրից, երբ մտավ Բ. Վեդի, նա սկսեց իր ուժեղ կոպտությունները և պրիստավական վերաբերմունքը դեպի աշխատակիցները: Երբ մտնում ես նրա սենյակը՝ մի որևէ խնդրով խոսելու, նա սոսկալի վիրավորվում է, բարկանում և աշխատակիցներին վիրավորում իր սուր խոսքերով: Աշխատանքներից դուրս նա ևս կոպիտ է դեպի իր աշխատակիցները: Իսկ գյուղացիության հետ՝ ավելի վատ: Ոչ մի գյուղացի չի համարձակվի նրա հետ խոսել»[2]:

Նոր Բայազետի շրջանի գյուղացիներից մեկը նույնպես իր դժգոհությունն էր հայտնում տեղական մի շարք պաշտոնյաներից, որոնք աչքի են ընկնում բնակչության նկատմամբ իրենց խտրական վերաբերմունքով: Ինչպես նշում է գյուղացին, նրանցից մեկը՝ Բեկնազարյան ազգանունով, սիրահոժար իր մոտ ըն-

[1] *Հայաստանի պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, էջ 130:
[2] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 340, թ. 47:

դունում է միայն «ինտիլիգենտներին», իսկ «շարքային ընկերը» դուրս է գնում նրա գրասենյակից՝ առանց ընդունելություն գտնելու, «իր բախտն անիծելով»: Նույն գնահատականն է տալիս նաև պաշտոնյաներ Մարկոսյանի և Սարգսյանի վերաբերյալ, որոնք «...շարքայինների նկատմամբ կարծես խորթեր լինեն»: Գյուղացու կողմից կուսակցության կենտկոմին ուղարկված այս դիմումը պարունակում է նաև մեկ այլ ուշագրավ հատված, որտեղ նա պատմում է այն մասին, որ նշված պաշտոնյաները բարյացակամ են տրամադրված մարտունեցի Հակոբյանի նկատմամբ, «...այն էլ, որ գնում են Մարտունի, գառ ա մորթում, քանի որ հարուստ են...»[1]: Վերահսկիչ հանձնաժողովին գյուղական շրջաններից ուղարկվող հաշվետվությունների մեջ նմանատիպ ձևակերպումներ կային շատ պաշտոնյաների մասին. «Որոշ ընկերների խոսքերով՝ այս ընկերը բավական հանդուգն է իրեն պահում գյուղացիների մոտ, բանը նույնիսկ հասնում է ծեծի: Ընդհանրապես՝ գյուղացիները դժգոհ են ընկերոջ պահվածքից, որը կոմունիստին սազական չէ»[2]:

Խոսելով խորհրդային ժամանակաշրջանի պաշտոնյաների մասին՝ Շեյլա Ֆիցպատրիկը նշում է, որ նրանք ղեկավարում էին անառարկելի կարգադրողական ոճով՝ պահանջելով իրենց հրամանների անվերապահ կատարում, որովհետև խորհրդակցելը, երկար մտածելը համարում էին թուլության նշան[3]: Իհարկե, վճռական, համարձակ, ղեկավար որակներով օժտված կոմունիստները պետք էին կուսակցությանը, սակայն շատ ղեկավարների մոտ այս որակներն ավելի շատ հիշեցնում էին պաշտոնեա-

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 93, թ. 13-14:
[2] Նույն տեղում, գ. 30, թ. 4:
[3] **Фицпатрик Ш.**, *Повседневный сталинизм. Социалная история Советской России в 30-е годы: город*, с. 42.

կան մեծամտություն և ամբարտավանություն: Բերենք մեկ օրինակ: Կուսխորհրդային վերահսկողության հանձնաժողովին 1935 թ. ուղարկված զեկուցագրերից մեկում կապի վարչության պետն իր դժգոհությունն է հայտնում կուսակցության՝ Արթիկի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղարի անօրինական կարգադրության և կապի տեղական բաժնի պետի՝ այդ կարգադրությանը ենթարկվելու կապակցությամբ: Կարգադրության համաձայն՝ աշխատանքից ազատվել էր տեղական կոմուտատորի աշխատակցուհիներց մեկն ընդամենն այն պատճառով, որ հրաժարվել էր իր հերթապահության ժամին թողնել կոմուտատորը և շրջկոմի երկրորդ քարտուղարի պահանջով հեռախոսի մոտ կանչել կապի բաժնի պետին, որն այդ պահին գտնվելիս է եղել ակումբում: Զեկուցագրի հեղինակը բարեխիղճ աշխատողի նկատմամբ նման վերաբերմունքի համար պահանջում էր կապի բաժնի պետին ի ցույց դնել, իսկ շրջկոմի քարտուղարին ենթարկել կուսակցական պատասխանատվության[1]: Նշված փաստաթղթի ուշագրավ կողմը ոչ միայն շրջկոմի քարտուղարի, այլ նաև բաժնի պետի պահվածքն է այս պարագայում: Դատելով զեկուցագրից՝ ընդդիմանալը շրջկոմի քարտուղարի անօրինական կարգադրությանը նրա համար կնշանակեր ի դեմս նրա ձեռք բերել «զորավոր» թշնամի, այդ իսկ պատճառով նա գերադասել էր զոհաբերել իր աշխատակցին:

Պետական պաշտոնյաների կողմից կիրառվող բիրտ վարչարարության ամբողջ «հմայքն» իրենց մաշկի վրա զգացին ստալինյան քաղաքական հետապնդումների զոհերը: Պետական պաշտոնյաների կողմից ցուցաբերվող բյուրոկրատիզմն այս տարինե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 656, թ. 91:

ին ունեցավ մի հետաքրքիր առանձնահատկություն: Այն ավելի անկաշկանդ և առանձին դեպքերում նույնիսկ կուսակցական հոգածությամբ կիրառվեց հատկապես քաղաքական բռնաճնշումների ենթարկված անձանց ընտանիքների հանդեպ: Հայտնի է, որ քաղաքական բռնաճնշումների ենթարկված մարդկանց հարազատները, որպես կանոն, հայտնվում էին «լուսանցքում»՝ կիսելով «ժողովրդի թշնամու» կարգավիճակն իրենց բռնադատված հարազատի հետ: Շատ պաշտոնյաներ շտապում էին կուսակցությանն իրենց հավատարմությունն ապացուցելու համար առավել եռանդուն գտնվել այս մարդկանց տարրական իրավունքների ոտնահարման հարցում: Փաստը, որ բոլոր բռնադատվածների հարազատները զրկված էին խորհրդային հիմնարկ-ձեռնարկություններում առանց ՆԳԺԿ-ի թույլտվության աշխատանքի ընդունվելու հնարավորությունից, որ նրանց կանանցից գրեթե ոչ ոք չէր կարողանում նույնիսկ սնագործ աշխատանք գտնել, խոսուն ապացույցն էր այն հանգամանքի, որ 1936 թ. ընդունված ստալինյան սահմանադրությունը՝ բոլոր քաղաքացիների աշխատանքի իրավունքի ապահովման երաշխիքներով, փաստացի չէր գործում: «Չնայած իմ հիվանդագին վիճակին՝ ես դիմում եմ տարբեր հիմնարկներ՝ թեկուզ ամենացածր աշխատանքի ընդունվելու համար, որպեսզի ինչ-որ կերպ գոնե չոր հաց կարողանամ հայթայթել, բայց ամենուր և ամենքից մերժում եմ ստանում՝ ամուսնուս ձերբակալության պատճառով...»[1]: Այս տողերը բոլոր ձերբակալված կոմունիստների կանանց ընդհանուր վիճակի նկարագիրն է: Շատերն իրենց հարազատների ձերբակալությունից հետո զրկվում էին նաև բնակարանից, ինչպես, օրինակ, հայմատառի

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 43:

ձերբակալված աշխատակից Լևոն Նավասարդյանի կինը, որին դատախազը սպառնացել էր իր զբաղեցրած սենյակը կամավոր չազատելու դեպքում «փողոց շպրտել» նրա երեխաներին[1]: Իսկ ԵՊՀ-ի և ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղի դասախոսներ Հովհաննես և Ելիզավետա Ակունյանների որդին՝ Վիկտոր Ակունյանը, իր երկու անչափահաս եղբայրների հետ ծնողների ձերբակալությունից անմիջապես հետո վտարվել էր հայրական տանից: Նրանց առաջարկված սենյակն այնքան փոքր էր եղել, որ այնտեղ հնարավոր չէր լինի անգամ տեղավորել անձնական իրերը[2]:

Բյուրոկրատական կոպիտ և անարդարացի վերաբերմունքի էր ենթարկվել նաև բժշկուհի Էմմա Մարտիկյանը, ով 1937 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ամատունուն ուղարկված նամակում գրել էր. «Հարգելի ընկե՛ր Ամատունի: Որոշեցի դիմել Ձեզ, որովհետև այս պահին ուրիշ ելք չեմ տեսնում: Ես վիրաբուժական կլինիկայի բժիշկ-ասիստենտ եմ, Երևանում աշխատում եմ արդեն 7 տարի: Ես ձեզ քաջ հայտնի Մերգո Մարտիկյանի դուստրն եմ, որն այժմ ձերբակալված է: Հորս ձերբակալելուց շատ չանցած՝ ինձ կանչեցին առողջապահության ժողկոմատ, և ընկեր Մալխասյանն ինձ հայտարարեց, որ ես անհապաղ պետք է ուղևորվեմ Բայազետ՝ մշտական աշխատանքի՝ չնայած, որ ես գտնվում եմ հերթական արձակուրդի մեջ: Չնայած իմ հայտարարությանը, որ ես հղի եմ և երկու ամսից գնալու եմ հղիության արձակուրդ, դրան ավելացրած՝ ես հիվանդ սիրտ ունեմ և այդ վիճակում չեմ կարող ուղևորվել որևէ տեղ, թե՛ ընկեր Մալխասյանը, թե՛ ընկեր Ղևոնդյանը պնդում են իրենց ասածը: Ես կարծում

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 96:
[2] Նույն տեղում, թ. 7–8:

եմ՝ իրավունք ունեմ խնդրել, որ իմ նկատմամբ ցուցաբերվի ավելի մարդկային վերաբերմունք: Անձամբ ես որևէ հանցանք չեմ գործել, աշխատանքիս ընթացքում որևէ նկատողության չեմ արժանացել, համարվում եմ լավ վիրաբույժ: Ուրեմն ինչու՞ հիմա, երբ ես հայտնվել եմ այս դրության մեջ, և այդ պատճառով հրաժարվում եմ գնալ շրջան, ինձ հայտարարում են, որ ես պարտավոր եմ անհապաղ մեկնել՝ առանց ավելորդ խոսակցությունների:

Բացի ինձնից՝ ուղարկում են նաև գիտաշխատող ամուսնուս, որը նույնպես գրել էր Ձեզ, ներկայացրել իր դրությունը և օգնություն խնդրել, սակայն պատասխան չէր ստացել Ձեր կողմից: Հուսով եմ՝ կլսեք իմ ձայնը և կօգնեք ինձ»[1]:

Պաշտոնական առօրյա գործառույթների իրականացման ժամանակ իրենց կոպտությամբ քաղաքացիական պաշտոնյաներին չէին զիջում (անգամ գերազանցում էին) զինվորականները: Ընդորում՝ որոշ դեպքերում հատկապես 1920-ականներին, զինվորական մարմինների կողմից քաղաքացիական գործառույթներին անօրինական միջամտությունները բավականին տարածված երևույթ էին: 1921 թ. սեպտեմբերի 3-ին Երևան քաղաքի հեղափոխական կոմիտեի քարտուղարի՝ Երևանի բնակխորհրդի նախագահին ուղղված դիմում նշվում էր. «Վերջին ժամանակներս նկատվում է 20-րդ հրաձգային դիվիզիայի պահանջների լիակատար անտեսում բնակելի տարածքների հարցում, ինչը համարում եմ անթույլատրելի՝ հաշվի առնելով այն, որ ՌՍՖՍՀ Կարմիր բանակի ստորաբաժանումներին պետք է տրամադրվեն բնակարանային տանելի պայմաններ՝ որպես դաշնակցական լծից ՀՍԽՀ ազատարարների: Կամ, միգուցե հակահեղափոխության վտանգի

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 86, թ. 80–81:

թուլացման գիտակցությունից փոխվե՞լ է վերաբերմունքը ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի նկատմամբ: Միգուցե մենք արդեն պետք չե՞նք Հայաստանին»[1]: Այս պահանջատիրական տոնով գրված դիմումի հեղինակն, ըստ էության, պահանջում էր դիմումի առարկա հանդիսացող տունը ազատել նրա բնակիչներից և հատկացնել զինվորական ստորաբաժանմանը, այսինքն՝ խառնվում էր քաղաքացիական իշխանությունների գործերին, որի իրավասությունը չուներ: Երևանի հեղկոմի պահանջատիրությունը պատահական չէր: Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին 11-րդ Կարմիր բանակը բավական արտոնյալ դիրք ուներ Հայաստանում, և, ինչպես նշում է պատմաբան Կարեն Խաչատրյանը, նույնիսկ Խորհրդային Ռուսաստանից Հայաստանին տրամադրվող օգնությունը առաջին հերթին տրամադրվում էր Կարմիր բանակին, որովհետև նրա մատակարարումը հարվածային էր համարվում[2]:

Այդուհանդերձ, Կարմիր բանակում կարգապահական խնդիրները շատ էին և կուսակցական մարմինների աչալուրջ հսկողության տակ: Բանակի հրամանատարությունը հաճախ էր մեղադրվում բյուրոկրատիզմի մեջ, որը շատ վայրերում «հասնում էր իսկական քմահաճության», ինչպես նշված էր Անդրկովկասի քաղաքական իրավիճակի վերաբերյալ միութենական անվտանգության մարմիններին ուղարկված հաշվետվություններից մեկում[3]:

Բյուրոկրատիզմի դեմ տարվող պայքարի հիմնախնդիրն անմիջական կապ ունի ԽՍՀՄ պետական-քաղաքական համակար-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 59, թ. 154:

[2] **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Ե., 2007, էջ 199:

[3] Տե՛ս *Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, էջ 57:

գի առանձնահատկությունների հետ: Մենք արդեն նշել ենք, որ բյուրոկրատիզմը կոմկուսի կողմից ներդրված պետական ապարատի հիվանդություն էր, հետևաբար նրա համակարգային թերություններից մեկը և ոչ թե ինքնուրույն քաղաքական իրողություն: Ըստ էության՝ բյուրոկրատիզմը հետևանքն էր, իսկ այս թերությունների պատճառներն առավել խորքային էին: Հայտնի է, որ խորհրդային իշխանությունը Հայաստանում հաստատվեց երկրի համար սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, և ժողովրդական տնտեսության վերականգնումը համառ ու երկարատև ջանքեր էր պահանջում կուսակցական ղեկավարությունից: Քայքայված տնտեսության վերականգնումը հնարավոր կլիներ առաջին հերթին ուժեղ պետական ապարատի առկայության պայմաններում, որը պետք է կազմակերպչական ահռելի աշխատանք կատարեր Հայաստանի տնտեսությունը ոտքի հանելու ուղղությամբ: Բոլշևիկների ավագ սերունդը, որն անցել էր հեղափոխության ու քաղաքացիական կռիվների միջով, պետական խաղաղ շինարարության նկատմամբ ոգևորություն չցուցաբերեց: Բոլշևիկ Գևորգ Աթարբեկյանի եղբայր Լիպարիտ Աթարբեկյանի հուշերում, օրինակ, հայտնի հեղափոխական Կամոյի մասին կարդում ենք. «Կամոն տրամադրություն չուներ: Շրջելով սենյակում՝ գանգատվում էր եղբորս, որ իրեն չի բավարարում իր աշխատանքի հանգիստ և միօրինակ բնույթը (Վրաստանի խորհրդայնացումից հետո Կամոն նշանակվել էր մաքսային վարչության պետ): Կամոն վստահեցնում էր, որ իրեն, ում ամբողջ գիտակցական կյանքն անցել էր հեղափոխական-մարտական ընդհատակյա պայքարի մեջ՝ ամեն քայլափոխի վտանգավոր մթնոլորտում, շատ դժվար էր միանգամից համակերպվել «չինովնիկի» անվրդով և անհետաքրքիր աշխատանքի հետ»[1]: Այս մտայնությունը տարածված էր շատ հին հեղափոխականների մոտ, և սա է նաև պատճառներից մեկը, որ 1920-ականների կեսերից նրանց մեծ մասը հեռացվեց քաղաքական ասպարեզից[2]:

Հեղափոխական գիտակցությունը, չնայած այն միշտ վառ պահելու կուսակցական կոչերին, խաղաղ ժամանակաշրջանում անհամատեղելի էր ստեղծված սոցիալ-քաղաքական նոր պայմաններին, որովհետև նրանով առաջնորդվող սակավաթիվ բոլշևիկները ունակ չեղան ստեղծված իրավիճակը ռեալ գնահատելու: Սրա արդյունքում լուրջ քաղաքական սխալներով իրագործված ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում ժողովրդական համատարած դժգոհության մեծ ալիք էր բարձրացրել: Այս պատճառով 1921 թ. ապրիլի 19-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն Հայաստանի նախկին ղեկավարությանը մեղադրում էր անտակտության մեջ[3]: Անհրաժեշտ էին նոր տիպի կառավարիչներ, անհրաժեշտ էր նոր տիպի մտածելակերպ՝ տնտեսական հարցերում ճիշտ կողմնորոշվելու, հասարակության մեջ կուսակցության հանդեպ վստահությունը վերականգնելու, կուսակցության քաղաքական գիծն առաջ տանելու համար: Խորհրդային Հայաստանում շատ էր զգացվում փորձառու կոմունիստների կարիքը, այդ իսկ պատճառով ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի դեռևս 1920 թ. դեկտեմբերի 4-ի հանձնարարականով Հայաստան պետք է գործուղվեին Ռուսաստանի շատ հայ կոմունիստներ: Ինչպես նշում է

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 22, գ. 30, թ. 30:
[2] Տե՛ս **Ղազախեցյան Վ.**, *Հայաստանը 1920–1940 թթ.*, էջ 205–206:
[3] Նույն տեղում, էջ 205:

պատմաբան Կարեն Խաչատրյանը, «վերջիններիս հոսքը «աշխարհից կտրված գաղթականների հանրապետություն» ընթանում էր շատ դանդաղ»[1]: Հեղինակը ներկայացնում է այս հարցով 1921 թ. Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ-Տեր Գաբրիելյանի՝ ՀԿ(բ)Կ կենտկոմ ուղարկած նամակը, որտեղ վերջինս ցավով գրել էր. «Այդ պատվամոլ հասարակությունը ցանկանում է ունենալ «ժողկոմից» ոչ ցածր պաշտոն և զգալով, որ իրենց հազիվ թե հաջողվի «ժողկոմներ» դառնալ, տարբեր հիմնարկություններում իրենց համար ապահովել են ամրացագրեր (броня)»[2]:

Ստացվում է, որ արդեն 1920-ականների սկզբին շատ հայ կոմունիստների մոտ առկա էր պաշտոնամոլություն, ինչի դեմ կուսակցությունը փորձում էր պայքարել: Պարզ է նաև, որ այս գծերը այս կամ այն կերպ պետք է դրսևորվեին նրանց ամենօրյա աշխատանքում: Ու եթե կուսակցական բարձր պաշտոններում այս ժամանակ աշխատանքի անցան իրապես արժանավոր մարդիկ՝ Ա. Մյասնիկյան, Ս. Սրապիոնյան-Լուկաշին, Ս. Տեր-Գաբրիելյան և այլք, ապա պետական ապարատի միջին և ստորին օղակներում հայտնվեցին մարդիկ, որոնք իրենց գործունեությամբ չկարողացան խորհրդային հիմնարկների հեղինակությունը բարձրացնել՝ հատկապես գյուղական շրջաններում: Այս հարցով իր մտահոգությունը բազմաթիվ անգամներ հայտնել է նաև հանրապետության կուսակցական ղեկավարությունը: Աղասի Խանջյանն այս առթիվ 1929 թ. զեկուցումներից մեկում, խոսելով կուսակցական դիրեկտիվների ցածր կատարողականության մասին, նշում է.

[1] **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 195:
[2] Նույն տեղում:

«Անուղղելի ու սխալների վրա համառող, կուսակցության դիրեկտիվներն իրագործել չկամեցող կամ չկարողացող ընկերների նկատմամբ մնում է վերջին միջոց՝ կուսակցական ամենախիստ պատասխանատվություն»[1]: Իսկ Սահակ-Տեր Գաբրիելյանը գտնում էր, որ «նրա՞նք, որ բյուրոկրատացել են, նրա՞նք, որ վիրավորվում են պրոլետարական քննադատությունից և թուլացնում իրենց աշխատանքը, նրա՞նք, որ խանգարում են մեր գործին, պետք է մաքրվեն երկաթե ավելով»[2]: Դատելով հարուստ փաստական նյութից՝ երկաթե ավելն այդպես էլ արդյունավետ չգործեց, որովհետև խորհրդային իշխանությունների պայքարը բյուրոկրատիզմի դեմ ուներ հետաքրքիր առանձնահատկություններ: Փորձենք դիտարկել դրանցից ամենաէականները:

Հայաստանի բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատի՝ 1921 թ. փետրվար ամսի հրամանով կոմիսարիատին կից ստեղծվում էր բողոքների բյուրո բնակչության բողոքները լսելու և դրանց համապատասխան ընթացք տալու նպատակով: Բողոքների բյուրոն պետք է ընդուներ «հայտարարություններ և բողոքներ պաշտոնական անձանց կողմից կատարված ապօրինի գործողությունների, իրավազանցությունների և զեղծարարությունների մասին»[3]: Սրանով կուսակցությունը Հայաստանում ևս մասսայականացնում էր ազգաբնակչության կողմից դիմումներ և բողոքներ գրելու պրակտիկան: Այս պրակտիկան ԽՍՀՄ-ում իշխանություն-հասարակություն հարաբերությունների ամենատարածված և ընդունված ձևաչափն էր, որի մասին Շեյլա Ֆիցպատրիկը նշում է. «Հեղափոխականների երազանքը ժողովրդի հետ ուղ-

[1] **Խանջյան Ա.**, *Հոդվածներ և ճառեր*, Ե., 1963, էջ 162:
[2] **Տեր-Գաբրիելյան Ս.**, *Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր*, Ե., 1979, էջ 112:
[3] Տե՛ս **Հակոբյան Արշ.**, *Հայաստանի բանվորատեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում*, Ե., 1974, էջ 27:

ղակիորեն, առանց միջնորդների շփվելն էր՝ հետևելով հեղափոխության ոգուն, այլ ոչ թե օրենքի տառին: Այդ պատճառով առաջին տարիներին կոմունիստական առաջնորդները մեծ կասկածանք էին տածում պետական վարչական համակարգում ցարիզմի մնացուկների հանդեպ: Հասարակության ներկայացուցիչներին կոչ էին անում ուղարկել նամակներ՝ իրենց շրջաններում պաշտոնական անձանց կողմից իշխանության չարաշահման դեպքերի համառոտ նկարագրություններով»[1]:

Խնդիրն այստեղ միայն այն չէր, որ հեղափոխականները վարչական աշխատանքով զբաղվող պաշտոնյաներին համարում էին ցարիզմի մնացուկներ: Հայտնի է, որ 1930-ականներին նույնպես բավական տարածված երևույթ էր իշխանություններին նամակներ ու դիմումներ գրելը: Կուսակցությունն առհասարակ սրան մեծ նշանակություն էր տալիս, որովհետև դա հնարավորություն էր ընձեռում պաշտոնատար անձանց չարաշահումների մասին կարծիք կազմել հասարակական արձագանքի միջոցով: Չենք կարող պնդել, թե կուսակցությունն ավելի շատ վստահում էր ազգաբնակչությանը, քան իր պաշտոնյաներին: Բայց այն, որ հասարակությանը նա ուզում էր համոզել այդ հարցում, ցույց են տալիս հենց այն նամակները, որոնք ուղարկվում էին ազգաբնակչության կողմից: Դրանց մեջ դժգոհությունները բացառապես տեղական չինովնիկների, բայց ոչ երբեք կուսակցության ղեկավարների կամ էլ պետության հասցեին են: Սա կոմկուսի կողմից տարվող քաղաքականության կարևոր չափանիշ էր՝ հանրային գիտակցության մեջ սահմանել բյուրոկրատիա-պետություն հստակ տարանջատում: Ու թեպետև բյուրոկրատիան՝ տեղական

[1] **Фицпатрик Ш.**, *Повседневный сталинизм. Социалная история Советской России в 30-е годы: город*, с. 39.

պաշտոնյաները, պետական ապարատի ստորին մասնիկն էին, կուսակցությունը ձգտում էր ինչ-որ տեղ խթանել նրանց նկատմամբ հանրային դժգոհությունը՝ այս ֆոնի վրա առավել ժողովրդական երևալու համար: «Մաճկալ» թերթում 1929 թ. տպված էր «Ավելի փող է վերցնում» վերնագրով մի թղթակցություն, որում գյուղացին բողոքում էր Նալբանդ կայարանի աշխատողից: Իր հարցին, թե ինչ արժե գնացքի տոմսը, նրան պատասխանել էին, որ գրված է 88 կոպեկ, և որ, եթե ինքը անգրագետ չէ, ուրեմն պետք է կարդար և ոչ թե հարցներ: Սակայն գյուղացին պնդում էր, որ ինքը կարդացել է 88 կոպեկ, բայց իրենից գանձել են 90 կոպեկ: «Իսկույն ես հեռացա այդտեղից ... հարցրի կոնդուկտորին, որ այս տեսակ են անում մեր բարեխիղճ նաչալնիգները (պաշտոնյաները – հեղ.), հարկավոր է դրանց լավ հսկել այդպիսի ավելի փողեր չվերցնեն չքավոր գյուղացուց և տեսնենք թե այդ փողը ուր է գնում՝ իրանց գրպանը, թե պետության օգտին: Բայց ես չեմ հավատում, որ պետության օգտին գնա»,- գրված էր հոդվածում[1]: Նկատենք, որ փաստաթուղթը պարունակում է քաղաքացու կողմից արտահայտված որոշակի վերաբերմունք պետության նկատմամբ, ավելի ճիշտ՝ որոշակի վստահություն, որը նա չի տածում վարչական մարմինների, տեղական պաշտոնյաների (նաչալնիգների) նկատմամբ: Ու թեպետև տեսականորեն խորհրդային բյուրոկրատիան դա իշխանության շարունակությունն էր տեղերում, նույն խորհրդային իշխանության բաղկացուցիչ մասը, սակայն գյուղացու արտահայտած տարակուսանքը, թե ուր է գնում ավել փողը, արդյո՞ք պետության օգտին, ցույց է տալիս հասարակական գիտակցության մեջ «պետություն» և «բյու-

[1] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2214, թ. 18:

ռոկրատիա» հստակ տարանջատումը: Պարզորոշ երևում է, որ սրանք նույն հասկացությունները չեն սովորական մարդու համար: Մյուս դիմումի հեղինակը, որին ցանկանում են վտարել բնակարանից, 1922 թ. այս որոշման դեմ բողոքում է բանգյուղտեսչության ժողկոմատին: Նրա դիմումի մեջ կարդում ենք. «բանվորա-գյուղացիական կառավարությունը կոմբինացիաների ու խնամիների կառավարություն չի, ուստի բողոքելով նման անօրինական կարգադրության դեմ՝ խնդրում եմ քննություն կատարեք ու պատասխանատվության ենթարկեք մեղավոր պաշտոնյային»[1]:

Այս մոտեցումը, բնականաբար, պետական ապարատի թերությունների վրա լուրջ ազդեցություն չէր կարող թողնել, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, պաշտոնյաների մեծ մասը հանդիսանում էր կուսակցական «վերևների» հովանավորյալը: Անդրադառնալով Գ. Օրջոնիկիձեին, որը բյուրոկրատիզմի եռանդուն քննադատողներից մեկն էր, Շեյլա Ֆիցպատրիկը նշում էր, որ վերջինս իր մարդկանց մշտապես պաշտպանում էր, եթե նրանք կուսակցության, անվտանգության մարմինների կամ այլ հսկիչ գերատեսչությունների հետ անախորժություններ էին ունենում[2]: Սա նշանակում է, որ կուսակցական մարմինները կանգնած էին տեղական պաշտոնյաների լուրջ կապերի ակունքներում: Այս տեսակետն էր արտահայտում նաև Ա. Խոցեյը, երբ գրում էր. «Պետական և տնտեսական բոլոր կարևոր հարցերը լուծվում էին կուսակցական գերատեսչություններում այն դեպքում, երբ կուսակցության ներսում ևս առկա էր իրական իշխանության կենտրոնա-

[1] ՀԱԱ. ֆ. 128, ց. 1. գ. 2251. թ. 14:
[2] Տե՛ս **Фицпатрик Ш.**, *Повседневный сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город*, с. 43.

ցումը գործադիր օրգանների ձեռքում՝ բյուրո, քարտուղարություններ, կուսկոմիտեներ, փաստորեն կուսապարատ: Համապատասխանաբար՝ զուտ բյուրոկրատական սկզբունքով խորհրդային հասարակությունում բոլոր «օրինական կապերը» ունեին ուղղահայաց բնույթ, այսինքն՝ իրականացվում էին բացառապես իշխանական մարմինների միջոցով: Իշխանությունից անկախ, մեկուսի տնտեսական, քաղաքական կամ մշակութային կապերն անհնար էին: Դրանց կոշտ ձևով հակազդում էին, համարելով քրեական հանցագործություններ՝ անհապաղ պատժում խստագույնս... Սովետական բյուրոկրատիզմը՝ մի կողմից հանդես էր գալիս որպես ռուսական (ցարական – հեղ.) բյուրոկրատիզմի ժառանգորդ, մյուս կողմից՝ արտացոլում էր ընդհանրապես բյուրոկրատիզմին բնորոշ ժառանգական գծերը, իսկ երրորդ կողմից՝ իր զարգացման ժամանակ անցել էր բյուրոկրատական համակարգի փոխակերպումների բավականին մեծ շարք՝ ցենտրալիզմից մինչև մասնատվածություն, ինչն էլ, բնականաբար, միջնորդավորված էր կլանային մտածողության, աստիճանակարգության ձևավորմամբ»[1]: Խոցեյի տեսակետը, ըստ էության, բացահայտում է խորհրդային բյուրոկրատիայի կարևորագույն հատկանիշը՝ նրա կլանային բնույթը, ինչը կուսակցության համար անհնար էր դարձնում բյուրոկրատիզմի դեմ հիմնավոր պայքարը:

1930-ական թվականներին նույնպես բյուրոկրատիզմի դեմ պայքարն արդյունավետ չէր: Պատճառը արդյունաբերության զարգացման աննախադեպ տեմպերն էին, որոնք առկա էին բոլոր խորհրդային հանրապետություններում: Խորհրդային Հայաստանի ինդուստրացման տպավորիչ տվյալներ է ներկայացնում

[1] http://www.materialist.kcn.ru/kniga10/s73.php3

պատմաբան Համլետ Հարությունյանը: Հեղինակը նշում է, որ նախապատերազմական շրջանում արդյունաբերական արտադրությունը հասել էր այնպիսի տեմպերի, որ արդեն 1940 թ. ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր մոտ 78 տոկոս[1]: Բնականաբար, արդյունաբերական ահռելի ձեռնարկությունները, որոնք կառուցվել էին այդ տարիներին, պահանջում էին պաշտոնյաների մեծ բանակ՝ դրանք ղեկավարելու համար: Այս տեսակետը ռուս պատմաբան Եվգենի Պարշակովին հիմք է տալիս կարծելու, որ չնայած քարոզչական լայնածավալ աշխատանքին, որ կուսակցությունն այս ժամանակաշրջանում տանում էր պետական ապարատի բյուրոկրատացման դեմ, իրական պայքար, որպես այդպիսին, չի եղել: Հեղինակն այսպես էր հիմնավորում խորհրդային բյուրոկրատիայի առկայությունը և դրա վերացման անհնարինությունը: «...Այդ ժամանակ երկրի ամբողջ տարածքում պետության կողմից մեծ քանակությամբ ստեղծվում են ահռելի ձեռնարկություններ՝ գործարաններ, ֆաբրիկաներ, ջրագծեր, երկաթուղիներ, էլեկտրակայաններ, շինարարական հիմնարկներ, խորհրդային և կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ, ՄՏ կայաններ և այլն: Սրանց կենտրոնացված կառավարման համար պետությանն անհրաժեշտ եղավ պետական կառավարման և հարկադրանքի ահռելի ապարատ: Եվ այն ստեղծվեց: Արդյունքում՝ հարաբերականորեն փոքրաքանակ բյուրոկրատիան վերածվեց բազմամիլիոնանոց իշխող դասակարգի: Իսկ արագ աճող ՀամԿ(բ)Կ-ն առավել արագ բանվորական կուսակցությունից վերածվեց նոր բյուրոկրատական դասակարգի հակաբանվորական և հակաժողովրդական կուսակցության»[1]:

[1] **Հարությունյան Հ.**, *Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում*, Ե., 1983:

Իսկ ահա Միխայիլ Վոսլենսկին արտահայտել է այն գաղափարը, ըստ որի՝ խորհրդային իշխանությունը ոչ թե պրոլետարիատի, այլ կուսակցական անվանակարգության իշխանությունն էր, որը խորհրդային բոլոր երկրներում փաստացի հաստատվեց այն ժամանակ, երբ Ստալինը 1930-ականների սկզբին կարողացավ հաղթել ներքաղաքական պայքարում և ասպարեզից հանել Լենինի կողմնակիցներին՝ պրոֆեսիոնալ հեղափոխականներին, որոնք նույնպես ոչ մի կապ չունեին պրոլետարիատի շահերի հետ և դրանց պաշտպանությանը վերաբերող գաղափարներն ընդամենը որպես միջոց էին օգտագործում հասարակության մեջ իրենց դիրքերն ամրապնդելու համար[2]:

Փաստորեն, բյուրոկրատիան, ըստ հետխորհրդային պատմագրության մեջ տարածված տեսակետի, ոչ թե վերացավ, այլ 1930-ականներին կուսակցական-պետական կառավարման մեջ փոխարինեց հին հեղափոխականների սերնդին և ամրապնդելով իր դիրքերը՝ դարձավ առանձին դասակարգ, իշխող դասակարգ՝ ջախջախելով պրոլետարիատի մենիշխանության վերաբերյալ բոլշևիկյան կուսակցության ստեղծած առասպելը: Ըստ պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանի՝ այս գործընթացի բարձրակետը եղան 1936–38 թթ. քաղաքական բռնաճնշումները: Խոսելով այս մասին՝ հեղինակը նշում է. «ԽՍՀՄ-ում իրականացված անհիմն քաղաքական բռնությունները Ստալինի պաշտամունքի մերկացումից անմիջապես հետո հիմնականում բացատրվել է Ստալինի

[1] **Паршаков Е.**, *Экономическое развитие общества. Концепция кооперативного социализма*, издательство ЛКИ. 2008.

[2] Տե՛ս **Восленский М.С.**, *Номенклатура. Господствующий класс Советского Союза*, М., «Советская Россия» совм. с МП «Октябрь», 1991.

բնավորությամբ ու կամքով, նրա իշխանությունը ամրապնդելու անհրաժեշտությամբ: Հետագա ուսումնասիրողները ձգտել են ցույց տալ նաև օբյեկտիվ պատճառներ: Նշվել է, որ, ինչպես շատ երկրներում, այնպես էլ ԽՍՀՄ-ում, անխուսափելի էր, որ հեղափոխությանը (քաղաքացիական կռիվներ, «ռազմական կոմունիզմ», կուլակության վերացում և այլն) հաջորդի հակահեղափոխությունը, որ նորաստեղծ կադրերի սերունդը վերացնի հեղափոխություն կատարած «հին» սերնդին: Այս տեսակետից բնորոշ են ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում (1939 թ.) Ստալինի բերած հետևյալ տվյալները: Հաշվետու ժամանակաշրջանում (1934–39 թթ.) պետական և կուսակցական գծով միայն ղեկավար պաշտոններում առաջ էին քաշվել ավելի քան 500 հազար «կուսակցական և կուսակցությանը հարող երիտասարդ բոլշևիկներ»: Հենց նրանք կամ նրանց մեծ մասն էր ակտիվ մասնակցություն ունեցել, պատժիչ մարմինների միջոցով «օգնել» նախկին կադրերի վերացմանը և գրավել վերջիններիս պաշտոններն ու աշխատատեղերը»[1]:

Բյուրոկրատիզմի դեմ Հայաստանում պայքարում էին նաև սովորական քաղաքացիները, որովհետև ստիպված էին իրենց կենցաղային տարաբնույթ կարիքների բավարարման համար ամենօրյա առնչություններ ունենալ պետական հիմնարկների հետ: Ամբողջատիրական վարչակարգի ղեկավարման, կոմկուսի չթուլացող գաղափարական և քաղաքական վերահսկողության պայմաններում, բնականաբար, նրանց պայքարը չէր կարող սոցիալական ընդվզում և պետական համակարգի դեմ առճակատում դառնալ: Խորհրդային քաղաքացիների պայքարը պետական

[1] **Ղազախեցյան Վլ.**, *1937-ը Հայաստանում*, էջ 5:

բյուրոկրատական ապարատի դեմ հանդես էր գալիս որպես գոյապահպանման մարտավարություն, որը, հասունանալով հանրային գիտակցության մեջ, այս կամ այն դրսևորումն էր ունենում պետական կառույցների հետ առնչություններում: Սեփական խնդիրների լուծման ակնկալիքներով կուսակցական և պետական բարձրաստիճան մարմիններին նամակներ գրելը այդ մարտավարության դրսևորումներից մեկն էր: Այլ ձևերից էր հիմնարկությունների հետ առնչություններում այլընտրանքային միջոցների օգտագործումը (օգտակար կապերի հաստատում, կեղծ տեղեկանքների հայթայթում և այլն): Բերենք մի քանի օրինակ: ՀՍԽՀ կենտգործկոմին ուղղված իր դիմումի մեջ քաղաքացին նշում է, որ դեռևս 1921 թ.՝ այն բանից հետո, երբ նրա ամուսնու խնդրանքը Թուրքեստան գնալու վերաբերյալ մերժվել էր, ամուսինը, որպեսզի կարողանա մեկնել այնտեղ, կեղծ փաստաթուղթ էր ձեռք բերել, որը հաստատում էր, թե նա կարմիրբանակային է, մինչդեռ նրա ամուսինը երբեք Կարմիր բանակի մեջ չի եղել: Երբ մեկ տարի անց այս փաստաթուղթը հայտնաբերվում է, նրանց նկատմամբ սկսվում է հետապնդում, և կինը դիմումի մեջ խնդրում էր ազատել իրենց Ալեքսանդրապոլի արտակարգ հանձնաժողովի սահմանած պատասխանատվությունից՝ պատճառաբանելով, որ այդ փաստաթղթից իրենք երբեք չեն օգտվել[1]:

Իսկ ահա Նորք գյուղի բնակիչ Գուրգեն Գևորգյանը 1934–37 թթ. կուսթեկնածության կեղծ վկայականով և քարտով պատասխանատու պաշտոններ էր զբաղեցրել լուսժողկոմատում, հողժողկոմատում և ֆինժողկոմատում[2]: Չնայած այն հանգամանքին, որ ներկայացված դեպքերը կարող են դիտվել որպես մասնավոր,

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 14, թ. 2:
[2] Նույն տեղում, ֆ. 91, ց. 2, գ. 671, թ. 16:

մանավանդ, որ երկուսի դեպքում էլ գործել են համապատասխան պատիժներ, սրանք հետաքրքիր են կեղծ փաստաթղթի ստացման երևույթի առումով: Ժամանակի մամուլը նույնպես անդրադարձել է այլընտրանքային ճանապարհներով կենցաղային հարցերի լուծման պրակտիկային: Օրինակ՝ երգիծական թերթերից մեկում զետեղված էր «Ռազվոդ» մանրապատումը, որտեղ գյուղից Երևան եկած իր ընկերոջը, որը բնակարան էր փնտրում, համագյուղացին առաջարկում է ամուսնալուծվել, Երևանում ամուսնանալ բնակարան ունեցող որևէ այրու հետ և այդ կերպ լուծել իր խնդիրը[1]:

Հատկապես տարածված էր այլընտրանքային ճանապարհներով սոցիալական դրությունը փաստող վկայականների ձեռքբերման երևույթը: Սովորական քաղաքացու համար ամենաշահեկան կարգավիճակը Հայաստանում այս տարիներին «չքավորի» կարգավիճակն էր: Սա պայմանավորված էր կոմկուսի կողմից իրականացվող դասակարգային քաղաքականությամբ, որն ամրագրվում էր դասակարգային յուրօրինակ մոտեցումներով: Այս գաղափարախոսության մեջ առանցքային տեղ էր հատկացվում գյուղի և քաղաքի չքավորության՝ որպես պրոլետարիատի ամենաներկայացուցչական մասի իրավունքներին: Խորհրդային Հայաստանում տարածված դասակարգային տերմինաբանության մեջ «պրոլետար» եզրույթին համարժեք էր «չքավոր» եզրույթը: Այն արտահայտում էր ոչ միայն որոշակի սոցիալական դրություն, այլև ընդգծված համակրանք կուսակցական մարմինների կողմից: Հավանաբար սրանով պետք է բացատրել այն փաստը, որ չքավորի կարգավիճակը շատերի համար հանդիսանում էր այլընտ-

[1] «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 13:

րանքային ճանապարհներով որոշակի արտոնությունների հասնելու միջոց: Մինչև 1920-ականների վերջերն այս միտումը նկատվում էր Խորհրդային Հայաստանի սոցիալական իրողություններում: Ժամանակի մամուլը նույնպես անդրադառնում էր նման երևույթներին: Օրինակ՝ «Աշխատանք» թերթում «Անկետա» վերտառությամբ երգիծական բնույթի փոքրիկ ակնարկի հերոսը, նշելով իր և իր ընտանիքի անդամների զբաղեցրած բազմաթիվ ղեկավար պաշտոնները, վերջում այն հարցին, թե ի՞նչ սոցիալական դրություն ունի, պատասխանում է՝ չքավոր[1]:

Եղվարդ գյուղի մի խումբ բնակիչների անունից 1926 թ. հիվանդանոցներից մեկի տեղկոմին դիմում է ուղարկվում առ այն, որ գյուղի բնակիչներից մեկը ներկայացրել է իր չքավորությունը հաստատող կեղծ վկայական, որպեսզի օգտվի անվճար բուժօգնությունից: «...Որ նա աղքատ է, բա հարուստն ո՞վ է: Բացի այդ ունի երկու տղաներ՝ երկու աշխատող ձեռքեր: Նրան տված վկայականը գյուղից կեղծ է, տվել է հողկոմի նախագահը՝ փեսեն, որը կողմնապահություն է արել, խաբել է կառավարությանը և իր աներոջը կեղծ չքավորության վկայական է տվել...»,- այսպիսի տողեր ենք կարդում դիմումի մեջ[2]: Ասքանազ Փարվանյանի դեմ 1925 թ. գրված դիմումի մեջ նույնպես հանդիպում ենք նմանատիպ պատմություն, երբ քաղաքացին բանկում ընդունվել է որպես գանձապահ՝ օգտագործելով չքավորի կարգավիճակը: «...Նա ոչ միայն մեր գավառակում, այլև ամբողջ գավառի մասշտաբով, լինելով ամենաուժեղ տնտեսության տեր, հանդիսանում է կուլակ տարրերի ամենացայտուն արտահայտիչը (հավանաբար՝ շահերի – հեղ.) և վերջիններիս տրամադրությունների ջերմ

[1] Տե՛ս «Աշխատանք», 1927, № 4 (22), էջ 19:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2216, թ. 69:

պաշտպանն է: Հենց այդ իսկ պատճառով էլ նա ոչ մի դեպքում տեղ չպիտի ունենա ոչ միայն մեր պրոֆեսիոնալ կազմակերպություններում, այլև խորհրդային հիմնարկներում... »,- գրված է դիմումի մեջ[1]: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ «չքավորի» կարգավիճակը հաստատող տեղեկանքները որոշակիորեն հեշտացնում էին մարդկանց կյանքը, և սրանց պահանջարկը մեծ էր նաև Խորհրդային Հայաստանում: Սակայն սա ամենևին չի խոսում այն մասին, որ չքավորներն օգտվում էին բոլոր արտոնություններից: «Կարմիր մոծակ» երգիծական պարբերաթերթի՝ 1926 թ. համարներից մեկի հենց տիտղոսաթերթն իրենից ներկայացնում է մի ծաղրանկար, որի առաջին պլանում պատկերված են չքավոր և հիվանդ մարդիկ, որոնք կառամատույցում դեպի առողջարաններ են ճանապարհում երկրորդ պլանում՝ գնացքի մեջ գտնվող կոկիկ հագնված, ժպտադեմ, փողկապավոր տղամարդկանց և նրանց զարդարված տիկնանց ու երեխաներին (տես՝ նկ.4): Ծաղրանկարի տակ խորհրդանշական մակագրություն է արված՝ «Հիվանդներին» «առողջները» ճանապարհ են գցում:...Մենք աշխարհի խորթ զավակն ենք, մեզ փայ չկա կուրորտից»:[2] Կարծում ենք՝ ծաղրանկարչի կողմից ժամանակի առօրեական կյանքի այս փոքրիկ դրվագի միջոցով արտահայտված է այն հիմնական մտայնությունը, որ բնորոշ էր 1920–30-ականների Հայաստանին: Սա կարելի է կրճատ ձևակերպել այսպես՝ ոչ թե չքավորները, այլ «թղթով» չքավորներն էին կարողանում օգտվել կյանքի որոշակի բարիքներից[3]:

[1] Նույն տեղում, թ. 64:
[2] Տե՛ս «Կարմիր մոծակ», 1926, № 3:
[3] Տե՛ս **Սուքիասյան Հ., Երանոսյան Ն.**, Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին, Ե., 2018, էջ 87–89:

Տեսականորեն՝ վայելելով կուսակցության աջակցությունը՝ չքավորներն առավել քան որևէ մեկը, պետք է հնարավորություն ունենային սոցիալիստական հասարակարգի բարիքներից օգտվելու և իրենց սոցիալական վիճակը բարելավելու: Գործնականում, սակայն, կուսակցության կողմից տարվող դասակարգային քաղաքականությունը հեռու էր դասակարգային այն մոտեցումներից, որոնք նա որդեգրել էր: Բանն այն է, որ ՆԷՊ-ի շրջանում Հայաստանի չքավոր գյուղացիության և բանվորների կյանքում լուրջ տեղաշարժեր չեղան: Խորհրդահայ մամուլը պարբերաբար ահազանգում էր չքավորների իրավունքների անտեսման դեպքերի մասին: Օրինակ՝ «Աղքատ գյուղացի» թերթում այս հարցի հետաքրքիր ձևակերպումներ ենք հանդիպում կուսակցական դպրոցի կուրսանտ Ե. Անտոնովի «Ու՞մ համար են խորհրդային թեյատները և ճաշարանները» հոդվածում: «Մեր խորհրդային ճաշարանները և թեյանոցները բացվել են ի օգուտ չքավոր դասակարգի, բայց հանգամանքից օգտվում է միայն ունևոր դասակարգը»-, նշվում է հոդվածում[1]: Դժգոհելով թեյատներում չքավորներին մշտապես հերթում սպասեցնելու, իսկ հետո «թեյ չկա» արտահայտությամբ նրանց ճանապարհելու դեմ, հեղինակն անում է այսպիսի հետևություն. «Ուրեմն, ընկերներ, երևում է, թե խորհրդային ճաշարանն ու թեյանոցը բացվում են այն մարդկանց համար, որոնք իրանց պղտոր և նախանձ սրտի մեջ թշնամի են Խորհրդային իշխանության»[2]: Նմանատիպ դժգոհություններ ենք հանդիպում նաև մեկ այլ հոդվածում, որը տպվել է 1929 թ. «Սոցիալիստական մրցականչ» թերթում: «Կուլակ ես, մեր աչքի լիսն ես» հոդվածում հեղինակը դժգոհում է գյուղական կոոպերատի-

[1] Տե՛ս «Աղքատ գյուղացի», Ե., 1921, № 6, էջ 2:
[2] Նույն տեղում:

վի աշխատողների դեմ, որոնք արտոնություններ են տալիս կուլակներին: «Կուլակային էլեմենտներն ամեն խնդրում արտոնյալ վիճակում են գտնվում. օրինակ՝ դեֆիցիտային ապրանքներն առաջին հերթին ստանում են կուլակները՝ այն էլ առանց նորմայի, իսկ չքավորներն ու բատրակներն ամեն ինչ ստանում են դժվարությամբ ու նորմայով: Աջացած (իմա՛ աջ թեքում ունեցող – հեղ.) կոոպերատորներն այսպես են դատում. չքավորն ի՞նչ է, որ մեր կոոպերատիվից ինչ գնի, ու կոոպերատիվն ինչ օգուտ անի, ավելի լավ է միանգամից կուլակներին տանք հեշտ ու հանգիստ , համ էլ նեղ օրերին մեզ պետք կգան»[1]:

Ներկայացված փաստերը, մեր համոզմամբ, վկայում են, որ չքավորների նկատմամբ առկա էր խտրականություն: Կուսակցության վերադաս շրջաններում 1928 թվից մատնանշվում էին սոցիալական, դասակարգային քաղաքականության թերությունները: ՀԿ(բ)Կ կենտկոմի վերահսկիչ հանձնաժողովին ուղարկված զեկուցագրերից մեկում կուսակցական աշխատողն իր դժգոհությունն է հայտնում առ այն, որ գյուղական շրջաններում չքավորության կարիքների հանդեպ տեղական կուսկազմակերպությունների կողմից առհասարակ ուշադրություն չի դարձվում, ինչն առաջացնում է կուսակցության նկատմամբ չքավորների անբարյացակամ վերաբերմունք: «...Չքավորության հետ համակարգված որևէ աշխատանք չի տարվում: Այս կապակցությամբ առանձին չքավորներ ասում են հետևյալը. մեզ կանչում եք միայն այն ժամանակ, երբ մենք պետք ենք՝ երեք ամիսը մեկ անգամ, իսկ երբ դուք եք մեզ պետք, ձեզ գտնելն անհնար է: Իսկ նրանցից մեկը՝ առավել չարացած, ասաց. ձեզ մոտ այս քաղաքականությունն է՝

[1] Տե՛ս «Սոցիալիստական մրցանակ», Ե., 1929, № 1, էջ 3:

միտինգը չքավորին, տնտեսությունը՝ կուլակին»,- կարդում ենք զեկուցագրում[1]:

Այսպիսով՝ խորհրդային պետական ապարատի թերություններն իրենց արտահայտությունը գտան նաև Խորհրդային Հայաստանի՝ 1920–30-ական թվականների հասարակական-քաղաքական իրողություններում: Դատելով ներկայացված նյութերից՝ բյուրոկրատիզմը Խորհրդային Հայաստանում ստացավ պաշտոնական չարաշահումների հավաքական իմաստ, որոնց դեմ կուսակցությունը և հասարակությունը փորձեցին պայքարել: Կուսակցության պայքարը բյուրոկրատիզմի դեմ ունեցավ մակերեսային ազդեցության նշանակություն, քանզի չվերացավ բյուրոկրատիզմի կլանային բնույթը: Իսկ հասարակության մեջ բյուրոկրատիզմի դեմ պայքարում քաղաքացիներն օգտագործում էին վարչակարգին դիմակայելու առօրյա մարտավարություն, որն արտահայտվում էր իշխանության մարմինների հետ հարաբերություններում այլընտրանքային մոտեցումներով:

Հասարակության առօրյա կյանքի փոփոխությունները քաղաքական հետապնդումների պայմաններում

Խորհրդային պետության 1920–30-ական թվականների պատմությունը լի է քաղաքական ցնցումներով: Խորհրդային կարգերի հաստատումը, դրանց ամրապնդումը, ի վերջո, ԽՍՀՄ-ի ստեղծումը և նրա հետագա հասարակական-քաղաքական կյանքը մշտապես ուղեկցվել են քաղաքական բեկումնային, հաճախ դրա-

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 182, թ. 6:

ՆՈՐԻՆ ՍԵԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԸ
ՅԵԿԵՔ ՎԱՂԸ
ՑԵԼՈՑ
ՍԱՌՈՑ

Նկար 1.


ԳՐԱՍԵԼՅԱԿԱՅԻՆ
ՎՈՍՏԱՅՆ

Նկար 2.

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՑԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Նկար՝ Մ. Արուչյանցի

Բնակվողները անձկորեն սպասում են խոլերիայի կամ չումայի փրկարար գալուստին։

Նկար 3.



«ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ» «ԱՌՈՂՋՆԵՐԸ» ՃԱՆԱՊԱՐՀ ԵՆ ԳՑՈՒՄ

. . . Մենք ուխարՆՔի խորքի գավառն ենք, մեզ փայ չկա կուրորտից։

Նկար 4.

մատիկ իրադարձություններով, որոնք իրենց անդառնալի հետքն են թողել խորհրդային բոլոր երկրների պատմության վրա: Դրանցից 1936–38 թթ. ծավալված քաղաքական բռնաճնշումները դարձան կոմունիստական ամբողջատիրության բացասական կողմերի խտացումը՝ իրենց բացառիկ դաժանությամբ, հասարակական լայն ընդգրկվածությամբ դառնալով միլիոնավոր խորհրդային մարդկանց ճակատագրերի խեղման, հասարակության բարոյալքման պատճառ: Քաղաքական բռնաճնշումների արձագանքներն արտահայտվեցին ամբողջ հասարակության մեջ, բոլոր մարդիկ, անկախ իրենց կուսակցական կամ դասակարգային պատկանելությունից, զբաղեցրած դիրքից, իրենց մասնագիտությունից, կրեցին իրականացված աննախադեպ քաղաքական հետապնդումների և բռնաճնշումների հետևանքները, որոնք հիմնականում պայմանավորված էին կուսակցության և նրա առաջնորդի՝ Ի. Ստալինի բացարձակ իշխանությունը երկրում ապահովելու նպատակով:

Բռնաճնշումների վերաբերյալ իսկապես տպավորիչ տվյալներ է ներկայացնում պատմաբան Ռոյ Մեդվեդևը. «Լիակատար վստահության արժանի աղբյուրից հայտնի է, որ ՆԳԺԿ նյութերի համաձայն՝ 1936 թ. կայացվել է 1116 մահվան դատավճիռ: 1937 թ. գնդակահարության է դատապարտվել 353.680 մարդ: 1938 թ. գնդակահարությունների մասին տվյալներ չկան, բայց մենք սխալված չենք լինի, եթե խոսենք 200–300 հազար գնդակահարության մասին: Ընդհանուր առմամբ, քաղաքական պատճառներով այս երեք տարիների ընթացքում ձերբակալվել է ոչ պակաս, քան հինգ միլիոն մարդ: 1937–1938 թթ. գնդակահարություններն իրականացվում էին այնպիսի հաճախականությամբ, որ միայն Մոսկվայում որոշ օրերի Հատուկ խորհրդակցության և դատարանների դատավճիռներով գնդակահարում էին հազարից ավել մարդու: Միայն ՆԳԺԿ կենտրոնական բանտում՝ Լուբյանկայում, օրական գրանցվում էր մոտ 200 գնդակահարություն: Սրանք արդեն ոչ թե խորհրդային մարդկանց արյան վտակներ էին, այլ արյան գետեր: Անցյալի ոչ մի տիրան և բռնակալ չէր հետապնդել և ոչնչացրել այսքան մեծ թվով իր հայրենակիցների»[1]:

Չնայած հասարակական լայն ընդգրկվածությանը՝ 1937 թ. բռնաճնշումներն առաջին հերթին համակարգային ուղղվածություն ունեին, այսինքն՝ սրանք փոխելու էին պետական և կուսակցական համակարգը: Եվ բնականաբար, քաղաքական բռնաճնշումների հարուցած ցնցումներն առավել արտահայտված էին հենց կուսակցական-պետական կառույցներում, հիմնարկ-ձեռնարկություններում, կուսակցական կազմակերպություններում և այլն: Թե ինչպիսի ծանր փորձություն էր այս տարիներին կոմունիստ լինելը, նույնպես հանդիպում ենք Ռ. Մեդվեդևի մենագրության մեջ. «1936–39 թթ. կուսակցությունից հեռացվել է ավելի քան մեկ միլիոն մարդ: Այդ ժամանակների համար դա գրեթե միշտ նշանակում էր ձերբակալություն: Այդ թվին պետք է գումարել նաև մարդկանց, ովքեր կուսակցությունից հեռացվել էին 1933–34 թթ. զտումների ժամանակ: Այս զտումները վերաբերեցին մոտ 1,1 միլիոն մարդու, որոնցից շատերը, եթե ոչ մեծամասնությունը, հետագայում ձերբակալվեցին: Ձերբակալվեցին նաև անկուսակցականներ, ավելի հաճախ՝ ձերբակալված կոմունիստների հարազատներ, ընկերներ և ծառայակիցներ: 1930-ականների վերջի «մեծ ահաբեկչության» այս առանձնահատկությունը, որն ուղղված էր առաջին հերթին կուսակցության դեմ, ակնհայտ էր

[1] **Медведев Р.**, *О Сталине и сталинизме*, М., 1990, с. 405.

նաև մեծ թվով անկուսակցականների համար, որոնք այդ տարիներին ավելի հանգիստ էին քնում, քան կումունիստները»[1]:

Խորհրդային Հայաստանում զանգվածային բռնաճնշումներն սկսելու համար կուսակցությունը պատրվակ դարձրեց 1936 թ. հուլիսի 9-ին Բերիայի աշխատասենյակում Աղասի Խանջյանի մահը՝ կասկածելի հանգամանքներում: Կուսակցությունն այն որակեց որպես ինքնասպանություն և շրջանառության մեջ դրեց Խանջյանի՝ հակահեղափոխական, աջ տրոցկիստ, ազգայնամոլ լինելու առասպելը, որ հրամցվում էր որպես ՆԳԺԿ-ի կողմից ապացուցված փաստ: ՆԳԺԿ-ի կողմից «ապացուցված» էր համարվում նաև այն, որ Խանջյանի հովանավորությամբ Հայաստանի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը ստեղծել է հակահեղափոխական, աջ տրոցկիստական, ազգայնամոլական խումբ, որին հարել են Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական բազմաթիվ հիմնարկներ[2]: Հետագա՝ 1936–37 թթ. կուսակցական կյանքը սկսեց ընթանալ այս իրադարձությունների թելադրանքով և դրանց ստեղծած քաղաքական ճնշող մթնոլորտի պայմաններում: Կուսակցությունը մատնանշում էր հիմնարկներ, որոնք իբր թե հարել են նշված հակահեղափոխական խմբին, ինչը, բնականաբար, լուրջ վտանգ էր ստեղծում այս հիմնարկների ղեկավար և շարքային աշխատողների, կուսակցականների համար: Իսկ երբ 1937 թ. օգոստոսի 21-ին՝ հարցաքննության ժամանակ, երրորդ հարկի պատուհանից իրեն ցած նետեց Հայաստանի ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ-Տեր Գաբրիելյանը, Ստալինն այս փաստը նույնպես օգտա-

[1] **Медведев Р.**, *О Сталине и сталинизме*, М., 1990, с. 400:

[2] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Ե., 2002, էջ 128:

գործեց Հայաստանի կոմկուսի ղեկավարության վարկաբեկման և նոր բռնություններ սանձազերծելու համար: 1937 թ. սեպտեմբերի 8-ի նրա նամակում, որն ուղարկվել էր ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյին, նշվում էր, որ Հայաստանում և՛ տնտեսական, և՛ քաղաքական ու կուլտուր-մշակութային գործընթացները գտնվում են բարձիթողի վիճակում, որ Սահակ Տեր-Գաբրիելյանը չէր կարող ինքնասպան լինել՝ հաշվի առնելով նրա վախկոտ և հաշվենկատ բնավորությունը, որ նրան սպանել են, որպեսզի լռեցնեն, որ հայ ժողովրդի թշնամիները ազատ շրջում են երկրում, իսկ կուսակցության ղեկավարությունը բավական հաստատակամություն և վճռականություն չի ցուցաբերում նրանց դեմ պայքարում[1]:

Կուսակցության կողմից կիրառվող քաղաքական հետապնդումների իրականացման մեխանիզմը բավականին պարզ էր: Կուսակցությունը հենվում էր մտացածին դավադրության տեսության վրա, ըստ որի՝ իբր Խանջյանը, Ստեփանյանը և Սահակ-Տեր Գաբրիելյանի սպանությունը կազմակերպողները միայնակ չէին կարող գործել, և նրանց հետ համագործակցողներին պետք էր բացահայտել, խստագույնս պատժել՝ որպես «խորհրդային ժողովրդի թշնամիներ»: Եվ ամեն մի նման «բացահայտում» ունենում էր շղթայական ռեակցիայի ազդեցություն՝ իր հետ բերելով նոր մարդկանց, ընդգրկելով ամբողջական կազմակերպություններ, հիմնարկներ, որոնք նույնպես կասկածվում էին հակապետական կամ հակակուսակցական գործունեության մեջ: Այս իրադարձությունների ազդեցության ներքո կուսակցական ապարատի բոլոր օղակները լծվեցին հակահեղափոխականներին, տրոց-

[1] Ստալինի նամակի ռուսերեն բնագիրը տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2003, թիվ 2 (102), էջ 85–86:

կիստներին, վնասարարներին և քողարկված դաշնակցականներին «բացահայտելու» «նվիրական» գործին:

Խանջյանի սպանությունից հետո՝ մինչև 1937 թ. սեպտեմբերը, գրեթե բոլոր վարկաբեկիչ նյութերում մեղադրվող մարդկանց անունը կապում էին Խանջյանի հետ՝ համարելով նրանց, այսպես ասած, «Խանջյանի խմբի» անդամ, նրա հովանավորյալ և այլն: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածում այս գործերով հատուկ զբաղվում էր Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը՝ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ամատունու գլխավորությամբ և ՆԳԺԿ-ն՝ Խաչիկ Մուղդուսու ղեկավարությամբ: Հայտնի է, որ Սահակ Տեր-Գաբրիելյանի սպանությունից հետո Ի. Ստալինի նամակը, որի մասին արդեն նշել ենք, Երևան բերեցին Գ. Մալենկովը և Ա. Միկոյանը: Նրանց նախաձեռնությամբ 1937 թ. սեպտեմբերի 15–23-ը գումարվեց ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենում, որի որոշումներով հետապնդումներ սկսվեցին արդեն Խ.Մուղդուսու և Ա. Ամատունու նկատմամբ[1]: Այս շրջանից, որպես տրոցկիստների, հակահեղափոխականների և երկերեսանիների, սկսեց շահարկվել արդեն նրանց և պլենումի որոշումներով կուսակցությունից հեռացված և բանտարկված՝ նրանց համախոհների անունները: Երբ Աշտարակի շրջանի Կոշ գյուղի բնակիչներից մեկին ձերբակալել էին Ամատունու հասցեին արված արտահայտությունների համար (նա ասել էր, որ Ամատունին երկիր չի կարող ղեկավարել և որպես կենտկոմի քարտուղար՝ անպետք է), Ամատունու ձերբակալությունից հետո արդեն նրա հայրը նամակ էր գրել Ա. Միկոյանին՝ որդուն ազատելու խնդրանքով, որում գրել էր. «...խնդրում եմ համապատասխան կարգադրություն անել, քանի որ Ամատունու անպետք լինելը, ժողովրդի թշնամի լինելը ապա-

[1] Տես **Ղազախեցյան Վլ.**, *1937-ը Հայաստանում*, էջ 35–38:

ցուցված է»[1]: Մեջբերենք որոշ հատվածներ կուսակցական տարբեր գերատեսչությունների կամ ղեկավարների ուղարկված վարկաբեկիչ նյութերից: Այսպես էր սկսվում Աբել Օրդուխանյանին վարկաբեկող նամակը, որն ուղարկել էր կուսակցության աշխատողներից մեկը Ա.Ամատունուն. «Ընկե՛ր Ամատունի: Մտքերի փոխանակության արդյունքում ես հնարավորություն չունեցա խոսելու, որովհետև ինձ ձայն չհասավ: Սակայն ես ցանկանում եմ Ձեզ իրազեկ պահել հակահեղափոխական Խանջյանի ամենաջերմագին պաշտպան Աբել Օրդուխանյանի մասին...»[2]:

Մեկ այլ նամակում հանդիպում ենք հետևյալ ձևակերպումը ԱԽՖՍՀ կենտգործկոմի նախկին նախագահ Արմեն Անանյանի մասին: «...Ինչ թեքումների և խմբավորումների ասես, որ չի հարել: Նա եղել է Խանջյանի ջերմեռանդ պաշտպաններից և մեկ անգամ չէ, որ հանդես է եկել ելույթով այն մասին, որ «Հայաստանի ղեկավարությունն անհնար է պատկերացնել առանց Խանջյանի»»[3]: Ներկայացվող հաջորդ օրինակը մեջբերում է մատնագրից, որտեղ «մերկացվում է» Հայաստանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Ստ. Ակոպովի շրջապատը (Ստ. Ակոպովը և Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ամատունին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. սեպտեմբերյան պլենումի որոշումներով հեռացվեցին իրենց պաշտոններից, կենտկոմի կազմից, կուսակցությունից, և նրանց գործերը հանձնվեցին ՆԳԺԿ մարմիններին)[4]. «1936 թ. կեսերից սկսած, մինչև հակահեղափոխական Ակոպովի մերկացումը, տրոցկիստ Գարիկ Սահակյանը, Կանոնովը, Ծատուրովը և հայմատառի տնօրեն

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 87:
[2] Նույն տեղում, գ. 86, թ. 26:
[3] Նույն տեղում, գ. 87, թ. 87:
[4] Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, *1937-ը Հայաստանում*, էջ 38:

Անդրանիկ Հայրապետովը չափազանց մոտ փոխհարաբերության մեջ են եղել դաշնակցական Ստյոպա Ակոպովի հետ: Տրոցկիստ Գարիկ Սահակյանը, Ծատուրովը և Կանոնովը բազմիցս եղել են Ակոպովի սիրելի Անդրանիկ Հայրապետովի տանը և այնտեղ զբաղվել են զանազան զվարճալիքներով»[1]: Իսկ ահա ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին ուղարկված մատնագրերից մեկում կարդում ենք այսպիսի տողեր. «Ելնելով վերջին դեպքերից, որոնք տեղ գտան Երևանի կուսակցական կազմակերպությունում՝ (ժողովրդի թշնամիներ և հակահեղափոխականներ Ամատունու, Ակոպովի, Գուլոյանի և Դանիելյանի և այլոց մերկացումը), իմ պարտքն եմ համարում հայտնել Ձեզ հետևյալը. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի Հատուկ բաժնում աշխատում է Սիսակ Բաղդասարյանը, որը հանդիսանում է հակահեղափոխական Դանիելյանի իսկական համախոհն ու հետևորդը»[2]: Նմանատիպ ձևակերպումներին, որպես կանոն, հաջորդում էին խորհրդային երկրի «թշնամիների» հետ վարկաբեկվող կուսակցականների համագործակցությունն ու տարբեր շփումներն ապացուցող փաստեր:

Երկրի իրավական համակարգը հարմարեցվեց բռնաճնշումների իրականացմանը: Առանց մարդու մեղավորությունը հաստատող ապացույցների առկայության, հեշտացված կարգով իրականացվող դատավարություններում կարևորը մեղադրյալի խոստովանությունն էր: Կամայական ձերբակալությունները համապատասխան մարմինների՝ ՆԳԺԿ-ի, Պետքաղվարչության կամ դատախազության կողմից կատարվում էին իրավական գործունեության այն նոր ուղենիշներով, որոնք սահմանել էին պետությունը և կուսակցությունը: Արմենակ Մանուկյանն այս կապակցությամբ բավականին հետաքրքիր փաստեր է ներկայացնում: Խոսելով Խորհրդային Միության դատախազական մարմինների գործունեության մասին՝ հեղինակը նշում է. «Պատահական չէ, որ 1930-ական թվականներին բռնաճնշումների ենթարկվեցին գլխավոր զինվորական դատախազության աշխատակիցների ավելի քան երկու երրորդը, որոնցից 80-ը բացահայտորեն հանդես են եկել անօրինականությունների դեմ և հնարավոր միջոցներով պայքարել արդարության համար:

Այսպես, օրինակ, 1933–36 թթ. Սևծովյան նավատորմի զինվորական դատախազ Պավել Վոյտենկոն, որն առանց իրավական հիմքի ձերբակալությունների թույլատրությունները չէր ստորագրում, ձերբակալվում է 1938 թ.՝ մեղադրվելով «ձերբակալվածների նկատմամբ լիբերալ վերաբերմունք արմատավորելու մեջ», կեսգիշերից հետո հարցաքննությունները արգելելու համար և այլն: Նա իր կյանքն ավարտում է աքսորավայրում 1944 կամ 1945 թթ.»[1]: Այստեղ, անշուշտ, Վոյտենկոյի լիբերալիզմը իրականում եղել է գործերի օբյեկտիվ քննությանը, մեղադրանքների կառուցման իրավական անհարժեշտ չափանիշների պահպանմանը, մեղադրյալների տարրական մարդկային իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը կողմնակից բարեխիղճ իրավաբանի բնական, նորմալ մոտեցում, որը բռնությունների կազմակերպիչներին անհրաժեշտ չէր: Իսկ այն, որ արդեն 1934 թ. ԽՍՀՄ հանրապետությունների քրեադատավարական օրենսգրքերում մտցված փոփոխությունները չէին տալիս քրեադատավարական նորմերի ճիշտ պահպանման հնարավորություն, որ

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 87, թ. 105:
[2] Նույն տեղում, թ. 208:

[1] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, էջ 154–155:

սրանք հարմարեցվում էին բոնաճնշումների մասսայականացման և արդյունավետ իրականացման՝ կուսակցական ներքին պահանջներին, պարզորոշ երևում են հենց այդ փոփոխություններում, որոնք հատկապես վերաբերում էին քաղաքական բնույթի հանցագործություններին: Այսպես՝ նշված փոփոխությունների համաձայն պահանջվում էր.

«1. Այդ գործերի (քաղաքական – հեղ.) հետաքննությունը ավարտել 10 օրից ոչ ուշ ժամկետում:

2. Մեղադրական եզրակացությունները մեղադրյալներին հանձնել դատարանում գործը լսելուց մեկ օր առաջ:

3. Գործը լսել առանց կողմերի ներկայության:

4. Չթույլատրել դատավճիռների բողոքարկումները, ինչպես նաև ներման նպատակով հայցերի ընդունումը:

5.Պատժի առավելագույն չափի դատավճիռն ի կատար ածել դատավճիռը կայացնելուց անմիջապես հետո»[1]:

Քաղաքական բոնաճնշումների տարիներին կուսակցական կյանքում տեղի ունեցան նշանակալից փոփոխություններ: Փոխվեցին կուսակցական կարգապահության և կուսակցական բարոյականության մասին պատկերացումները: Կուսակցական խղճի ընդունելի դրսևորումներ դարձան մատնությունը, անհիմն ու սուտ տեղեկությունների տարածումը, կուսակցական ընկերներին լրտեսելը, վարկաբեկելը, ինչը ներկայացվում էր որպես «դասակարգային թշնամու», «ժողովրդի թշնամու» դեմ մշտական, չթուլացող «կուսակցական զգոնություն»:

Երևանի բժշկական ինստիտուտի ուսանողներից մեկի նամակը ՀԿ(բ)Կ կենտկոմ կրում էր «Ո՞վ է Մանյա Իսահակյանը» խորագիրը: Այստեղ ուսանողը, ջերմեռանդորեն հարձակվելով

[1] **Մանուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 168:

Հայաստանի կոմկուսի արդեն դատապարտված ղեկավարության վրա, հայտնում էր, որ նրանք ձերբակալությունից առաջ որպես հայ ժողովրդի ներկայացուցիչներ եղել են Մոսկվայում և հավաստիացումներ տվել Ի. Ստալինին, որ Հայաստանում ամբողջ ուժով ընթանում է սոցիալիզմի շինարարությունը: Հեղինակին հատկապես զայրացրել էր այն փաստը, որ Աղասի Խանջյանը և կուսակցական հանձնաժողովի քարտուղար Աղասի Գալոյանը նույն բուհի մեկ այլ ուսանողի՝ մատնագրում նշված Մանյա Իսահակյանին, բազմիցս կանչել են իրենց մոտ և համոզել, որ ընդգրկվի Մոսկվա մեկնող պատվիրակության կազմում: «Իրապես չգիտենք, թե ի՞նչ արժանիքների, սոցիալիստական հայրենիքին մատուցած ի՞նչ ծառայությունների համար և ո՞ր կազմակերպության առաջարկով է Մանյա Իսահակյանը ընդգրկվել պատվիրակության կազմում»,- գրված էր նամակում[1]: Այնուհետև հեղինակը պատմում էր, թե բողոքի ինչ ալիք է բարձրացրել նշված պատվիրակության կազմում նրա ընդգրկվելը և «Պատվո շքանշանով» Մոսկվայից վերադառնալը: Այս նամակում ի թիվս հնչեցրած այլ մեղադրանքների, ներկայացված է մեկը, որի վրա ընդհանրապես դրվում էր առավել մեծ շեշտադրություն: Հեղինակը փորձում էր ամեն կերպ մատնանշել նշված ուսանողի և Խանջյանի ու մյուս ղեկավար կոմունիստների հետ կապի մանրամասներ: Նա պատմում է, թե ինչպես է «հակահեղափոխական Խանջյանի սադրիչ ինքնասպանությունից հետո Մանյա Իսահակյանը, որ այդ ժամանակ գտնվում էր Կիրովականում (ներկայումս՝ Վանաձոր.), հատուկ եկել Երևան, արցունքն աչքերին քայլել դագաղի հետևից, իսկ հետո դիֆերամբներ երգել նրա համար»[2]:

[1] ՀԱԱ. ֆ. 1, ց. 17, գ. 87, թ. 243:
[2] Նույն տեղում:

Դատելով նամակից՝ հեղինակը ցուցաբերում էր իր «կուսակցական (իր դեպքում՝ կոմերիտական) զգոնությունը»՝ հավատարիմ մնալով կենտրոնից քարոզվող դավադրության տեսությանը, որի մասին արդեն գրել ենք, և բացահայտում է կուսակցության «արդարադատության» ուշադրությունից դուրս մնացած ևս մեկին:

Նույն ոգով էր շարադրված նաև հաջորդ զեկուցագիրը, որն ուղղված էր Հայաստանի կոմերիտական կազմակերպության 10-րդ համագումարի նախագահությանը: Այն վերաբերում էր կոմունիստ Մեյրանյանին, որի զեկուցումը պետք է լսվեր նշված համագումարում, ինչին դեմ էր նամակի հեղինակը: Այս փաստաթուղթը նույնպես պարունակում էր այսպես կոչված բացահայտումներ կուսակցության և ժողովրդի «թշնամիների» հետ նշված Մեյրանյանի կապերի մասին: Ուշագրավ արտահայտություններ առկա են նաև այստեղ: «Ա. Մեյրանյանը ժողովրդի թշնամի Լ. Բարսեղյանի ձեռքում գործիք էր և ջանասիրաբար կատարում էր նրա կամքը...», «...առանձին կոմերիտականներ և՛ կոնֆերանսի, և՛ ժողովների ժամանակ ասում էին, որ Մեյրանյանն իր «արտելի» հետ հակահեղափոխական Սալթանովի պատվին կազմակերպում էր խրախճանքներ և վատնում պետական փողերը, ի նշան իրենց փոխադարձ հավատարմության՝ նրանք ողջագուրվում էին և համբուրում իրար: ...Մեյրանյանը սերտ կապված է իր վնասարար եղբոր հետ: Մեյրանյանը մոտ հարաբերությունների մեջ է եղել հակահեղափոխական Գումեդինի հետ (Գուրգեն Գումեդինը նախկին հողժողկոմն էր, որը 1937 թ. նույնպես զոհ գնաց ստալինյան բռնություններին – հեղ.)» և այլն[1]: Հատկանշական մի փաստ. կուսակցության անդամ Մացո Նահապետյանը՝ այս զեկուցագրի հեղինակը, այս տեղեկությունները տալիս էր, որովհետև իր խոսքերով՝ «չէր կարողանում լռել, լինել քաղաքական վախկոտ», և այս նամակը գրել նրան ստիպում էին իր «կուսակցական խիզախությունն ու իր խիղճը»[1]:

Այս տարիներին քիչ չէին երիտասարդ էնտուզիաստները, որոնք ամեն հարմար առիթի պատրաստ էին պարծենալ իրենց «հեղափոխական զգոնությամբ»՝ ավելորդ անգամ ապացուցելով իրենց նվիրվածությունը «հարազատ կուսակցությանը»: Այսպիսի էնտուզիաստներից մեկը՝ Բերիայի անվան կուսակցական դպրոցի շրջանավարտ, «Ավանգարդ» թերթում պարծենում էր այն մեծ առաջընթացով, որ ինքն ունեցել է «վնասարարներին», «տրոցկիստներին» բացահայտելու կարևոր գործում: «Կուսփաստաթղթերի ստուգման ու փոխանակման ընթացքում մենք մերկացրինք և կուսակցությունից դուրս շպրտեցինք 16 հակահեղափոխական, տրոցկիստական տարրերի, որոնք, թաքցնելով իրենց դեմքը, կարողացել էին քողարկված մնալ կուսակցության մեջ, մուտք գործել մեր դպրոցը: Ստուգման և փոխանակման ընթացքում մենք կուսակցական նոր կոփում ստացանք, մենք սովորեցինք թշնամուն ճանաչելու բոլշևիկյան հմտությունը»[2]: Բոլշևիկյան այս հմտությունը, դատելով ժամանակաշրջանին վերաբերող հարուստ փաստական նյութից, պահանջվում էր բոլոր կոմունիստներից, և այս հարցում նախաձեռնողականությունը տարածված երևույթ էր կոմունիստների միջև փոխհարաբերություններում: Ընկերների ու բարեկամների, հարազատների կամ պարզապես ծանոթների, անգամ անծանոթների վարքագծի ու բառերի նկատմամբ «բոլշևիկյան զգոնություն» դրսևորելու պահանջն իսկական

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 87, թ. 149:

[1] Նույն տեղում:
[2] «Ավանգարդ», Ե., 1937, հունվարի 9, № 7, էջ 3:

լրտեսական կրքեր էր ծավալել կուսակցության ներսում հատկապես քաղաքական բռնաճնշումների տարիներին: Սա մի բացառիկ իրողություն էր, որը չնայած առավել արտահայտիչ ձևով հանդես եկավ ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ 1936–37 թթ., սակայն բնորոշ էր ընդհանուր 1920–30-ականների առօրեականությանը: Այստեղ նկատվում էր բոլշևիկյան կուսակցության անհատական գործելակերպի ձեռագիրը, որ պատմականորեն մշակվել էր նրա հեղափոխական պայքարի ընթացքում: Հայտնի է, որ կուսակցությունը մինչև իշխանության գալը և՛ Ռուսաստանում, և՛ Հայաստանում ընդհատակյա պայքարի մեծ փորձ էր կուտակել: Եվ այդ պայքարի ընթացքում կիրառվել էին հետաքրքիր մեթոդներ, որոնց մասին վկայություններ ենք հանդիպում արխիվային փաստաթղթերում: Այսպես՝ Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի բնակիչներից մեկը՝ Արսեն Օհանյանը, Պետքաղվարչության կողմից ձերբակալվել էր 1937 թ. ստացված մատնագրի հիման վրա, որում բացահայտված է եղել նրա անցյալի՝ իր համար անբարենպաստ դրվագներից մեկը: Այս մասին Ա. Միկոյանին գրած նամակում պատմում է նրա կինը՝ կոլտնտեսուհի Գալյա Օհանյանը. «...Մատերիալ են տվել գյուղից Գորիսի քաղվարչության լիազորին, որ, իբր թե, (ամուսինը – հեղ.) դաշնակցության ժամանակ եղել է գյուղի կոմիսար. այո, ոչ ոք դա չի ժխտում, որ երեք ամիս գյուղի կոմիսար է եղել, բայց դա եղել է գյուղի ընդհատակյա կոմունիստների գաղտնի առաջարկությամբ, որպեսզի հնարավորություն ունենան պաշտպանվելու և աշխատանք կատարելու...»: Այնուհետև կինը թվում է այն կոմունիստների անունները, որոնց առաջարկությամբ ամուսինը քողարկված աշխատանք է կատարել՝ որպես դաշնակցական կոմիսար[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 103:

Հավանաբար դեռևս 1920-ականներին կիրառված ընդհատակյա պայքարի մշակված մեթոդների և ձևերի արձագանքը պետք է համարել կուսակցության կողմից կիրառվող գործելաոճը՝ արդեն իր բացարձակ մենատիրության պայմաններում: Այն, որ կուսակցությունը իր մենատիրության պահպանման և հանրային գիտակցության ամբողջական վերահսկման ժամանակ կիրառում էր հեղափոխական պայքարի ժամանակ ունեցած փորձը, վկայում է այն հանգամանքը, որ նրան հաջողվել էր ստեղծել գործակալական մի հսկայական ցանց, որը անխափան գործում էր արդեն 1930-ականների սկզբին: Եվ միայն ուժային կառույցների աշխատակիցների մեջ գործակալներ տեսնելը նշանակում էր ծանոթ լինել այս ցանցի միայն երևացող մասին: Իրականում կուսակցության ներսում, դեռ 1924 թվից սկսած, քաղաքական պայքարի ժամանակ կուսակցության մեջ արդեն իսկ կիրառվում էր կուսակցական գործակալների հավաքագրման պրակտիկան, և հավաքագրվածները հաճախ հենց կուսակցության սովորական անդամներն էին: Այս իրողությունը փաստող մի քանի վավերագրեր կներկայացնենք ստորև:

Առաջինը Երևանի բանտի կալանավոր, 1937 թ. ձերբակալված, Գուրգեն Մանուկյանի նամակն է ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին: Մանուկյանի պատմությունը բավականին հետաքրքիր է և բացահայտում է կուսակցության կողմից իր համար գաղտնի տեղեկատուներ պատրաստելու, հավաքագրելու գործընթացը: Այսպես՝ նշված Մանուկյանը դեռևս 1928 թ. հեռացվում է կոմերիտմիության շարքերից, ինչպես ինքն է նշել, «սիրահարության պատճառով»: Չնայած փաստաթղթում այս մասին մեկնաբանությունը բացակայում է, սակայն պետք է ենթադրել, որ նրա սիրահարությունը կուսակցության դասակար-

գային մոտեցումներին դեմ էր: Մանուկյանի դիմումին՝ իրեն կոմերիտմիության շարքերում վերականգնելու խնդրանքով, շրջկոմի քարտուղարը պատասխանել էր. «Քեզ՝ որպես միությունից դժգոհ տարրի, կարող են ուրիշ հակա տարրեր մոտենալ, և եթե դու նման մարդկանց հայտնաբերես, իսկական քո իրավունքները կվերականգնենք...»: Այնուհետև Մանուկյանը, ոգևորված կուսակցության կողմից իր վրա դրված «առաքելությամբ», սկսում է «հակա տարրեր» փնտրել և որպես այդպիսին՝ բացահայտում է Երվանդ Շահինյանին: Վերջինս նրան առաջարկում է ստեղծել տրոցկիստական երիտասարդական խմբակ, և Մանուկյանը համաձայնում է, այնուհետև ուրախացած այս մասին հայտնում շրջկոմի քարտուղարին, որ ինքը բացահայտել է և մերկացրել մի տրոցկիստի: Իհարկե, շատ մեծ է լինում նրա հիասթափությունը, երբ պարզվում է, որ Շահինյանը նույնպես ուներ կուսակցության կողմից իր վրա դրված նույն առաքելությունը: Այս միջադեպի մանրամասները հայտնի են դառնում ինը տարի անց, երբ սրա մասին նույն շրջկոմի քարտուղարը մատնագիր է ներկայացնում ՆԳԺԿ մարմիններին, և Մանուկյանը՝ որպես նախկին տրոցկիստ, ձերբակալվում է ՆԳԺԿ-ի Հոկտեմբերյանի (ներկայումս՝ Արմավիր) բաժանմունքի պետի կարգադրությամբ: Ինչպես նշում է Մանուկյանը, շրջկոմի քարտուղարից ՆԳԺԿ-ն միտումնավոր հարցաքննություն չի վերցնում, որպեսզի դեպքի մանրամասները չբացահայտվեն, և ՆԳԺԿ-ի պետը «ապացուցի, որ շատ զգոն է...»: Մանուկյանը, ՆԳԺԿ-ի Հոկտեմբերյանի բաժանմունքի պետին մեղադրելով իր հանդեպ անարդարացի վերաբերմունքի մեջ՝ նշում է. «...իսկ երբ 15-20 տրոցկիստներ նոր կուստոմս ստացան, այն ժամանակ այդ գերզգոն մարդը մսրամելիքյան քնով քնած էր»[1]:

Հաջորդ օրինակը 1937 թ. ՀԿ(բ)Կ կուսկոլեգիային ուղարկված նամակն է, որում կոմունիստ Ճգնավորյանը պատմում է, թե ինչպես է բացահայտել կուսակցությունից արդեն հեռացված Հայկ Գրիգորյանին՝ նախկին տրոցկիստի: Նամակն ուշագրավ դիտարկումների հնարավորություն է տալիս: Այս նամակից ստացվող առաջին տպավորությունը գոհունակության զգացումն է, որ ապրում է նամակի հեղինակը գիտակցությունից, որ ինքը բացահայտում և մերկացնում է մի մարդու, որին համարում են տրոցկիզմից հրաժարված: Ճգնավորյանը հանդիպում է նրան կոլտնտեսության շուկայի մոտ և զրույցի բռնվում նրա հետ: Հայկ Գրիգորյանն սկսում է անթույլատրելի դատողություններ անել «ութնյակի» գործի վերաբերյալ (ԽՍՀՄ մարշալ Մ. Տուխաչևսկու և նրա զինակից բարձրաստիճան զինվորականների գործը՝ հարուցված 1937 թվին, որով նրանք անցնում էին որպես գերմանական լրտեսներ – հեղ.)՝ հայտարարելով, որ նրանք ոչ թե գերմանական լրտեսներ են, այլ նրանց գործունեությունն ուղղված է եղել կուսակցության մեջ այժմ գոյություն ունեցող ահաբեկչության դեմ: Ճգնավորյանի այն հարցին, թե ինչի հիման վրա է նա այդպիսի դատողություններ անում, վերջինս պատասխանում է՝ տրամաբանության: Եվ հենց այստեղ Ճգնավորյանը գրում է տողեր, որոնք բացահայտում են նրա ոգևորությունը.«Ես միտումնավոր նրան կտրուկ չհակադարձեցի, որովհետև վախեցա *ժամանակից շուտ խրտնեցնել* (ընդգծումը մերն է – հեղ.):

Պետք է ավելացնեմ, որ մինչ այդ օրը ես նրա վերաբերյալ այն տպավորությունն ունեի, որ նա ազնվորեն հեռացել է տրոց-

[1] Նամակն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 114:

կիզմից, հիմա, պարզվում է, նա քայքայիչ աշխատանք է տանում»[1]:

Այժմ ներկայացնենք համանման ևս մեկ փաստաթուղթ, որ նույնպես բավական հետաքրքիր ձևակերպումներ է պարունակում: Այս բացատրագիրն ուղարկվել է ՀԿ(բ)Կ կենտկոմի կուսկոլեգիա՝ կուսակցական Սերգուշկինայից: Վերջինս պատմում է, որ երբ կուսակտիվի ժողովի ընդմիջմանն ինքը պատրաստվում էր գնալ տուն՝ իր երեխային կերակրելու, նրան ուղեկցում է այդ ժողովի մեկ այլ մասնակից՝ կուսակտիվի անդամ Մանուչարյանը: Սկզբում խոսում են վերջինիս՝ ժողովում ունեցած ելույթի մասին, իսկ հետո Սերգուշկինան, կյանքի կոչելով իր «կուսակցական զգոնությունը», սկսում է այսպես ասած՝ խոսեցնել կուսակից ընկերոջը. «Հետո ես հարցրեցի այն մասին, թե Խանջյանի վերաբերյալ ասեկոսեներ են տարածում, որ նրան աջակցում և սիրում էր ընկեր Ստալինը: Եվ ընկեր Մանուչարյանն ինձ բացատրեց Անդրերկրկոմի վերաբերմունքը նրան, ասեց, որ Անդրերկրկոմը աջակցում էր նրան՝ որպես Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար, և որ, այո, եղել է նման բան, Ստալինը սիրում էր նրան: Ես զարմացած էի այս պատասխանից և իմ զարմանքը հայտնեցի կուսակցության կենտկոմի աշխատող ընկեր Թովմասյանին: Ընկեր Կուզնեցովի հետ զրույցից հետո, երբ ես հիշեցի Մանուչարյանի հետ ունեցած ամբողջ խոսակցությունը, ես վստահ չեմ իմ լսածների մեջ: Միգուցե սխալ եմ լսել և Խանջյանին աջակցելու մասին ձևակերպումն ընդունել եմ Ստալինի կողմից նրան սիրելու տեղ»[2]: Չնայած որ սույն բացատրագիրն ամբողջական պատկերացում չի տալիս գործի հանգամանքների մասին, սակայն, կարծում ենք, Կուզնեցովի հետ խոսելու և սեփական լսածին արդեն կասկածելու դրվագը մեզ հուշում է, որ կուսկոլեգիայի քարտուղարը փրկում է փաստաթղթում նշված Մանուչարյանին: Թե ինչ նկատառումներից ելնելով է նա դիմում այս քայլին, նույնպես հայտնի չէ: Սա կարելի է վերագրել կա՛մ նրա անձնական մոտ հարաբերություններին Մանուչարյանի հետ, կա՛մ էլ մտավախությանը, որ Ստալինի անվան նման շահարկումը կարող էր անկանխատեսելի հետևանքներ ունենալ նաև իր համար: Ինչ էլ որ լինի, պարզ է, որ Սերգուշկինայի «կուսակցական զգոնությունն» այս դեպքում չի գնահատվում, և սա կարելի է ձախողված մատնություն համարել:

Ներկայացված փաստաթղթերը, կարծում ենք, պատկերավոր ձևով ի հայտ են բերում քաղաքական բռնաճնշումների ազդեցությամբ տիրող բարքերը, երբ «կուսակցական զգոնություն» ասվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ կուսակից ընկերներին վարկաբեկելու, նրանց անկմամբ ինքնահաստատվելու կամ սեփական անձը փրկելու, պետությանը և կուսակցությանը սեփական հավատարմությունն ապացուցելու միջոց: Կուսակցության ներսում ստեղծված անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը բոլորին դարձրել էր կուսակցության պոտենցիալ գործակալ՝ կուսակից ընկերների քայլերին, արտահայտություններին, անցյալին ուշադիր, զգոն և, անհրաժեշտության դեպքում, մատնելու պատրաստակամ: Կուսակցության գաղափարական մեքենան հանրային գիտակցության մեջ ներմուծել էր ամեն քայլափոխի «վնասարարներ», «լրտեսներ», «տրոցկիստներ», մի խոսքով՝ «ժողովրդի թշնամիներ» բացահայտելու և պատժելու պահանջ, ինչը հասարակությանը դարձրել էր բարոյապես հիվանդ: Մարդկային արժանապատվությունն այս դեպքում, փաստորեն, երկրորդացվում

[1] Նամակն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 680, թ. 67:
[2] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 680, թ. 64:

էր: Ինչպես դիպուկ նկատել է պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանը. ««Մարդն ամենաթանկ կապիտալն է» ստալինայն կարգախոսն այդպիսին էր առերես: Իրականում մարդուն դարձրել էին անարժեք»[1]:

Զարմացնում են այն պատճառները, որոնցով հետապնդում էին մարդկանց 1937 թ.: Սրանք երբեմն այնքան անհեթեթ էին, որ քաղաքական հետապնդումներն այս դեպքում իսկական աբսուրդի թատրոն էին հիշեցնում: Կարծում ենք, ներկայացվող նամակը որևէ մեկնաբանության կարիք չի զգում, պարզապես որոշ մեջբերումներ կանենք նրանից: Նշենք, որ այս նամակը ուղղվել էր ՀԿ(բ)Կ կենտկոմ քաղբանտարկյալ Վաչագան Դերմոյանից, որին 1936 թ. հեռացրել էին կուսակցությունից, 1937 թ.՝ ձերբակալել: Իր նամակում նա մասնավորապես գրում է. «Ես 40 տարվա երկաթուղային բանվորի զավակ եմ և ինքս բանվոր: Ընդամենը 28 տարվա 14 տարին կոմերիտմիության մեջ և 6 տարի կուսակցության մեջ դաստիարակվեցի, պայքարեցի Լենինի-Ստալինի կուսակցության թշնամիների դեմ. ազնիվ ու բարեխիղճ աշխատում էի, չունեի ոչ մի զգուշացում անգամ, ոչ մի տրոցկիստական տրամադրություն մտքովս անգամ չի անցել, և ահա 1936 թ. իմ թշնամիների խոսքով, նրանց սարքած զրպարտություններով ինձ...ցանկանում են դարձնել թշնամի: Հեռացրին աշխատանքից, կուսակցությունից, այժմ էլ բանտարկել են, թե ի՞նչ պատճառներով՝ խնդրում եմ ինքներդ ստուգեք այդ հանգամանքը, որ 1927–28 թթ.՝ փոքր ժամանակ, թատրոն եմ խաղացել բանվորական ակումբում, և ինձ հետ խաղացել են թատրոնում նաև հետագայում տրոցկիստներ դուրս եկած Սիսակ Հարությունյանը և Խաչատուր Սուլթանովը: Թե ես ի՞նչ հանցավոր եմ, ես ինքս էլ չեմ հասկանում. որ նրանք տրոցկիստ են եղել, ես չեմ իմացել, ասում են՝ թաքցրել են...»[1]:

[1] **Ղազախեցյան Վլ.**, *1937-ը Հայաստանում*, էջ 11:

Նմանատիպ անհեթեթ պատճառով կուսակցության շարքերից հեռացվել էր նաև անվանակարգության աշխատող, Արարատի ցեմենտի գործարանի կուսկոմիտեի քարտուղար Սուքիասովը: Վերջինիս տեղական կուսկազմակերպությունն առաջադրել էր արհմիութենական անբավարար աշխատանքներ տանելու, գործարանում վնասարարության հետևանքները վերացնելուն ուղղված պայքարը ոչ պատշաճ մակարդակի կազմակերպելու և որպես «ժողովրդի թշնամի» ձերբակալված գործարանի նախկին մատակարարման պետ Ժորա Հովհաննիսյանի հետ կապեր ունենալու մեղադրանք: Վերջին մեղադրանքի վերաբերյալ կուսակցությունից հեռացված պաշտոնյան տալիս է հետևյալ բացատրությունը. «Իրականում ես կուսակցությունից հեռացվել եմ այն պատճառով, որ մի անգամ գործարանի տնօրեն ընկեր Նալբանդյանի և Հովհաննիսյանի հետ եղել եմ Դավալու գյուղում՝ հայտնի մի կնոջ՝ Սավարի մոտ: Այս տատիկը հայտնի է ողջ Հայաստանում՝ որպես օձի կծածը բուժող: Ինձ՝ որպես եկվոր մարդու, ուղղակի հետաքրքիր էր տեսնել այդ կնոջը, նրա օձերին և հիվանդ գյուղացիներին: Ես միայն այդ պատճառով գնացի:

...Իմ ճակատագրական սխալն այն էր, որ ես մատակարարման պետի՝ Հովհաննիսյանի հետ էի, որն այժմ ձերբակալված է՝ որպես ժողովրդի թշնամի: Բայց չէ՞ որ այդ ժամանակ, ոչ ոք չգիտեր, որ նա ժողովրդի թշնամի է»[2]:

Իսկ ահա միլիցիայի շարքային աշխատակիցներից մեկին 1937 թ. ձերբակալել էին նրա համար, որ միլիցիայի Երևան քա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 78:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 86, թ. 153–154:

ղաքի վարչության գրադարանից վերցրել էր ընթերցանության համար գիրք, որի մեջ Կ. Վորոշիլովի և պետության մյուս ղեկավարների նկարների վրա գծեր էր քաշել: Դատապարտյալ միլիցիոների կինը Ա. Միկոյանին գրած նամակում նշում էր, որ իրենք համաձայն չեն ներկայացված մեղադրանքի հետ մի պարզ պատճառով. նրա ամուսինը գիրքը վերադարձնելիս վրան գրել էր իր անունը և ուրեմն այստեղ դիտավորություն տեսնելն ուղղակի անիմաստ է, և հետո՝ գծերը հայտնաբերվել և նրան ձերբակալել էին գիրքը վերադարձնելուց երկու ամիս անց[1]:

Խորհրդային Հայաստանում, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, մարդկանց ձերբակալում էին նաև արտահայտությունների համար, որոնք նրանք թույլ էին տալիս կամ թույլ էին տվել անցյալում, և որոնց կուսակցությունը տալիս էր «հակահեղափոխական», «հակասովետական», «տրոցկիստական», «ազգայնամոլական» և այլ որակումներ: Ժամանակի քաղաքական մեղադրանքների մեծ մասը կազմվում էր հենց նմանատիպ արտահայտությունների հիման վրա: Սրանք, որպես կանոն, իրենց մեջ որևէ վտանգ չէին պարունակում կուսակցության կամ պետության համար: Դատելով նյութերից, որոնք վերաբերում են նմանատիպ արտահայտություններին, սրանք չէին արտահայտում հստակ քաղաքական դիրքորոշում, ծայրահեղական կամ հակահիշխանական գործունեության տարրեր, որոնք փորձում էր սրանց մեջ տեսնել կուսակցությունը: Այս արտահայտություններն արվում էին առանց «հետին մտքի», ինչպես ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին գրել էր Ալավերդու շրջգործկոմի նախագահներից մեկը՝ Գևորգ Մովսիսյանը, որին կուսակ-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 98:

ցությունից հեռացրել և ձերբակալել էին «կոմունիստին ոչ վայել» արտահայտությունների համար[1]:

Հակահեղափոխական արտահայտությունների հետ կապված շատ մեղադրանքներ զավեշտալի են՝ կապված այն հանգամանքների հետ, որում դրանք արվել են: Ղամարլուի (այժմյան Արտաշատի) շրջանի Արտաշատ գյուղի բնակիչներից մեկին՝ կոմունիստ Համբարձում Գևորգյանին, 1937 թ. ձերբակալում են հակահեղափոխական հայտարարության պատճառով, որը կատարել էր նրա համագյուղացի ոմն Սիսակ Դավթյան: Համբարձում Գևորգյանին ձերբակալել են նրա համար, որ այդ հայտարարությունը համագյուղացին արել էր իր՝ Գևորգյանի տանը կազմակերպված խնջույքի ժամանակ: Սա դեռ ոչինչ, սա դեռ ՆԳԺԿ մարմինները կարողացել են բացատրել նրանով, որ Համբարձում Գևորգյանը՝ որպես կոմունիստ, պարտավոր էր մերկացնել իր տանը Տրոցկու կենացը խմող համագյուղացուն: Զավեշտը կայանում է նրանում, որ դեպքը տեղի է ունեցել 1928 թ.: Ստալինին և Ամատունուն ուղարկված նամակում արդեն ձերբակալված Համբարձում Գևորգյանը գրում էր. «Չնայած հարբած եմ եղել և չեմ իմացել այդ մասին, և ներկա եղողներց էլ ոչ մեկը չեն ասել այդ մասին թե՛ ինձ, թե՛ սկզբնական կուսկազմակերպությանը, որ կարողանայինք մերկացնել երբևէ չեն ասել՝ մինչև 1937 թ. մարտ ամիսը»[2]: Փաստորեն, Համբարձում Գևորգյանը դարձել էր յուրօրինակ մատնության զոհ, երբ նրա հետ ուրախացած համագյուղացիներից մեկը տարիներ անց որոշել էր (կամ էլ, ամենայն հավանականությամբ, նրան ստիպել էին որոշել) հիշել չարաբաստիկ խնջույքի բոլոր մանրամասները և մասնակիցներին:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 175:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 17–18:

Իսկ ահա Աշտարակի շրջանի Կարբի գյուղի բնակիչներից մեկը՝ Գրիգոր Խաչատրյանը, 1937 թ. ձերբակալվել էր՝ անչափահաս լինելով հանդերձ: Նրան ձերբակալել էին, որովհետև հայտնաբերվել էին թղթեր, որոնցում իր մտքերն էր արտահայտել կուսակցության մասին և հիշատակել էր Խանջյանի ու Տրոցկու անունները: ՀԿ(բ)Կ կենտկոմ ուղարկած նամակում Խաչատրյանն այս թղթերի վերաբերյալ տալիս էր բացատրություն, որի համաձայն՝ գյուղի ղեկավարները հրաժարվել էին նրան ընդունել կոմերիտմիության մեջ՝ պատճառաբանելով, որ նա այդքան շատ չէր ցանկանա լինել կոմերիտական, եթե իմանար, որ պետք է ծառայի նաև Կարմիր բանակում: Չհասկանալով, թե ինչու՞ իրեն չեն ընդունում կոմերիտմիության շարքերը, Խաչատրյանն իր խոսքերով՝ «ընկնում է խոր մտածմունքի մեջ» և այդ մտածմունքն էլ փոխանցում թղթին, որն էլ ցույց է տալիս իր համագյուղացիներին: Դատելով նրա նամակից՝ այս թղթերում նա որևէ քննադատական միտք չի արտահայտել կուսակցության կամ պետության հասցեին, այլ նրան դատապարտել են միայն Խանջյանի և Տրոցկու անունը շոշափելու համար, ինչը նա արել է «առանց իմանալու և առանց ուղեղի թելադրության»[1]:

Երևանի բանտում իր պատիժը կրող քաղբանտարկյալներից մեկը՝ Նիկոլայ Շելուդկովսկին, քննիչների կողմից հալածանքների էր ենթարկվել բանտից իր զարմուհուն ուղարկած նամակներում գրած բանաստեղծական տողերի պատճառով: Սրանց մեջ ռուսերենից հայերեն սխալ թարգմանության պատճառով քննիչը որսացել էր քաղաքական ենթատեքստ: Ներկայացնենք հատված նամակից, որը նա ուղարկել էր Ա. Ամատունուն և որի պատճենը հասցեագրված էր Ի. Ստալինին:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 160:

«Զարմուհուս ուղարկած նամակներում ես բանաստեղծություններ եմ գրում, որոնց մեջ երազում եմ կորցրած ազատության և այն մարդկանց մասին, ովքեր մնացին պատերից այն կողմ, որոնք բաժանում են ինձ աշխարհից: Ահա այդ ոտանավորներից մի հատված. Նստած եմ արևի տակ, երազում եմ ազատության, կարթի և մարդկանց մասին. («Сижу на солнышке, мечтаю о свободе, об удочке и о народе»):

Կարդալով այս տողերը՝ քննիչը հարց է տալիս. ժողովրդի այդ ի՞նչ ազատության մասին եք երազում: Մեկնաբանություններն ավելորդ են:...Իրազեկողը՝ ռուսերենից 25 տոկոսով գրագետ, նրան է ներկայացրել իմ այս տողերը գրավոր, որոնք էլ քննիչը՝ ռուսերենից գրագետ 50 տոկոսով, թարգմանել է հայերեն: Այս գործողության արդյունքում իմ բառերի իմաստը կորել է 100 տոկոսով»[1]: Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներից մեկը նույնպես ձերբակալվել էր իր ծոցատետրում գրած ոտանավորի համար, որը պետքաղվարչությանը թվացել էր կասկածելի և որը, ինչպես ասում էր նրա հայրը՝ «...կարելի է հասկանալ և՛ այսպես, և՛ այնպես»[2]:

Հակահեղափոխական արտահայտությունների համար ձերբակալվել էր նաև Աշտարակի դպրոցներից մեկի սան Կարապետ Պետրոսյանը: Իսկական ինքնախարազանում էր հիշեցնում նրա մեղայական նամակը Ամատունուն: Առհասարակ, ինքնաքննադատությունը բնորոշ էր հակախորհրդային գործունեության մեջ մեղադրվողների և՛ նամակներին, և՛ ցուցմունքներին: Բացի այն, որ նրանց ստիպում էին խոստովանել իրենց չգործած մեղքերը, տեղի էր ունենում ավելի ահավոր երևույթ. նրանց ստիպում էին

[1] Նույն տեղում, թ. 23–24:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 67:

մտածել, որ իրենց արտահայտությունները իրենց բարոյական անկման պատճառ են դարձել: Մեջբերենք մի հատված նշված նամակից: «Սրանով գալիս եմ Ձեզ՝ հայկոմկուսի մարտական ղեկավարիդ, պատմելու այն մասին, թե ինչպես 18 ամյա՝ կոմունիզմի գործը անհունորեն սիրող պատանին, դարձավ նացիոնալիստական արտահայտությունների հեղինակ և, որպես այդպիսին, այս էլ 4-րդ ամիսն է տառապում է բանտում:...Բայց, դժբախտաբար, ես հնարավորություն չունեցա իմ առաջավորության փաստն ապացուցել նաև կյանքի դպրոցում, որի համար էլ ես բազմաթիվ անգամ դառնորեն լացել եմ ու դեռ կլացեմ, եթե ի վերջո խորհրդային դատավարական մարմինները չարդարացնեն ինձ և հնարավորություն չտան շարունակելու իմ ուսումը բարձրագույն դպրոցում»: Նամակի հեղինակին դատապարտել էին երկու արտահայտության համար: Առաջինով նա դպրոցի գրականության դասին այն կարծիքն էր հայտնել, որ լավ կլիներ, եթե նացիոնալիստ հայ գրողների՝ օրինակ Չարենցի, ստեղծագործությունները նույնպես անցնեն դպրոցում, որպեսզի դպրոցի սաները հնարավորություն ունենան հասկանալ նրանց հակահեղափոխական էությունը: Երկրորդ արտահայտությունը, որն ավելի հետաքրքրական է, վերաբերում է սոցիալիստական մշակույթի վերաբերյալ Լենինի տեսության՝ նրա մեկնաբանությանը: «Մի անգամ էլ աշակերտական ժողովում ընկ. Լենինի՝ կուլտուրայի մասին ունեցած հոդվածների մասին խոսելիս՝ ես ասել եմ, որ սոցիալիստական կուլտուրան կազմում է բուրժուական կուլտուրայի շարունակությունը: Այս անհեթեթությունը ես դուրս եմ տվել՝ հանճարեղ Լենինի մտքերը չհասկանալու առիթով»[1]: Հավանաբար, խոսքը գնում է Լենինի այս մտքերի մասին, որոնք իբր թե լավ չի հասկացել բռնադատված Պետրոսյանը: «Պրոլետարական մշակույթը դուրս չի պրծել հայտնի չէ թե որտեղից, չի հանդիսանում հնարանքը մարդկանց, ովքեր իրենց համարում են պրոլետարական մշակույթի մասնագետներ: Այս ամենն իսկական անհեթեթություն է: Պրոլետարական մշակույթը պետք է լինի օրինաչափ զարգացումն այն գիտելիքների պաշարի, որ մարդկությունը ստեղծել է կապիտալիստական, կալվածատիրական և չինովնիկական հասարակությունների լծի տակ»[1]: Կարծում ենք՝ մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

Նույն ոգով էր իր կատարած հանցանքը ներկայացնում նաև քաղբանտարկյալ Ղազար Մարադյանը, ով նույնպես ձերբակալվել էր հակախորհրդային արտահայտությունների համար: «Ընկե՛ր Ամատունի, ես մանուկ հասակից կորցրել եմ իմ ծնողներին և ամեն տեսակի հարազատների, մեծացել և կրթություն եմ ստացել մանկատներում՝ խորհրդային կարգերի գոյության պայմաններում, և ես համոզված եմ, որ իմ գոյությամբ ես պարտական եմ խորհրդային կարգերին: Այսօր ինձ համար շատ մեծ ամոթ և նախատինք է հակահեղափոխականի կնիքը կրել ճակատիս:...Հավատացե՛ք ինձ: Ես մեծ սեր եմ տածել թե՛ հանդեպ Կուսակցությանը, և թե՛ հանդեպ մեր իշխանությանը: Եվ իմ արտահայտությունները եղել են իմ կողմից անմտածված, հիմար մտորումներ և ոչ թե այն, որ ես թշնամի եմ: Ես ամաչում եմ նույնիսկ հիշել այստեղ այն արտահայտությունները, որ ես թույլ եմ տվել»[2]:

Արդեն անդրադարձել ենք Արմեն Անանայանի կատարած «Հայաստանը չեմ պատկերացնում առանց Խանջյանի» արտա-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 33–34:

[1] **Ленин В.И.**, *Полное собрание сочинений*, издание пятое, изд-во «Политической литературы», М., 1981, с. 304–305.

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 13–14:

հայտությանը: Այս արտահայտությունը տեղիք էր տվել բազմաթիվ քննադատական գնահատականների, որոնցից մեկը հետաքրքիր ձևակերպում ունի: Այս արտահայտության վերաբերյալ կուսակցության անդամներից մեկն իր կարծիքը հայտնել էր հետևյալ կերպ. «Չխոսելով այս հայտարարության քծնողական բովանդակության մասին՝ ես հարց եմ տալիս՝ կարո՞ղ է արդյոք կոմունիստ անհատի մասին այդ ձևով արտահայտվել, եթե նրա համար խորթ չէ Մարքսի-Լենինի-Ստալինի հեղափոխական ուսմունքը»[1]:

Կուսակցական առաջնորդներին քծնելու վերաբերյալ այս գնահատականը՝ արտահայտված կուսակցական բարոյականության դիրքերից, բնականաբար, անկեղծ չէ: Բոլոր այն նամակներում, որոնք գրված են, օրինակ, անձամբ Ստալինին, նրա անձի գովերգումը, նրան հոգատար հայր և բարեկամ համարելը նույն այս կուսակցականը երբեք չէր համարձակվի ընդունել որպես քծնանք: Ընդհակառակը՝ անհատի պաշտամունքի տարիներին հասարակության մեջ Ստալինին մշտապես ներկայացնում էին գովեստով, նրա անվանը հյուսում էին բանաստեղծություններ, նրան համարում ամեն լավ բանի սկիզբ և նախաձեռնող: Ինքը՝ Ստալինը, բնականաբար, խթանում էր այս մտածելակերպը, ինչը, ըստ Արմենակ Մանուկյանի, 1937 թ. բռնաճնշումների ժամանակ նրա համար ուներ նաև գործնական մեծ նշանակություն: Ստալինի համար կևոր էր մշտապես վերահսկողության տակ պահել հանրային գիտակցությունը՝ հատկապես տեղի ունեցող ձերբակալությունների և գնդակահարությունների վերաբերյալ հասարակական կարծիքի արտահայտման առումով: Նրա քաղաքականությունը հիմնվում էր սեփական իշխանությունը չկորցնելու համար բոլոր այս իրողությունների վերաբերյալ սեփական անձի անտեղյակության և անմասնակից լինելու պատրանքի տարածման սկզբունքի վրա[1]:

[1] Նույն տեղում, ֆ. 91, ց. 2, գ. 680, թ. 35:

Ուժային կառույցները մեծ ուշադրություն էին դարձնում սրան և ամենայն աչալրջությամբ բացահայտում ցանկացած արտահայտություն, հայհոյանք (դատելով աղբյուրներից՝ դրանք ևս եղել են) Ստալինի հասցեին: Օրինակ՝ ՀԽՍՀ գլխավոր դատախազ Պ. Թորոսյանն Ամատունուն ուղարկած հաշվետվություններից մեկում գրել էր Սարիբեկ Գրիգորյանի մասին, որը «...բրիգադիրի մոտից վերցնում է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը,... նայում է ժուռնալում տպված ընկ. Ստալինի նկարին և մի շարք հակահեղափոխական լկտի արտահայտություններ է անում նրա հասցեին: Քննությամբ պարզվում է, որ այդ հակահեղափոխական Գրիգորյանը իր երեխայի անունը դրել է Ստալին (հավանաբար ոչ պաշտոնապես – հեղ.) և իր երեխայի անվան տակ ազգաբնակչության մեջ շարունակ հայհոյանքներ է անում նրա հասցեին»: Իսկ մեկ այլ կոլտնտեսական «...դաշտում, կոլխոզնիկների ներկայությամբ հայտարարում է, որ, եթե լավ քննենք, Ստալինն էլ լավ բոլշևիկ չէ»[2]: Հաշվետվության մեջ Թորոսյանը, ի մի բերելով ներկայացված դեպքերը, որոնք ի միջիայլոց վերաբերում են Վաղարշապատի շրջանին, զեկուցագիրն ամփոփում է հետևյալ եզրակացությամբ. «Հայտնում եմ նույնպես, որ այս շրջանում համեմատաբար քիչ են ռեպրեսիայի ենթարկվել հակահեղափոխական տարրերը: Այս ուղղությամբ էլ պետք է արագ

[1] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, էջ 138:

[2] Հաշվետվությունն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 84, թ. 65–67:

կարգով ձեռնարկումներ կատարել՝ շրջանը մաքրելու հակահեղափոխական տարրերից»[1]:

Քաղաքական բռնաճնշումների ստեղծած ընդհանուր մթնոլորտն արտահայտված էր նաև Խորհրդային Հայաստանի ՆԳԺԿ-ի հաշվետվություններում: Սրանցից երկուսը, որոնք վերաբերում են 1936 թ. հունվարի մեկից մինչև 1937 թ. հունվարի մեկը ընկած ժամանակահատվածին, պարունակում են քաղաքական պատճառներով ձերբակալվածների ընդհանուր քանակին մասին տվյալներ: Այսպես՝ նշված ժամանակահատվածում քաղաքական հատկանիշներով հանցանքների համար ձերբակալվել է 1138 մարդ, որից 264՝ գաղափարական հողի վրա (հակահեղափոխական ահաբեկչական արտահայտություններ, հակահեղափոխական քարոզչություն)[2]:

Եթե վերը նշված դեպքերում մարդիկ գոնե գիտեին, թե ինչում են իրենց մեղադրում, ապա ստորև ներկայացվող դեպքերում մարդիկ շատ հաճախ միայն ձերբակալվելուց որոշ ժամանակ անց էին կարողանում հասկանալ, թե ո՞րն է իրենց ձերբակալելու կամ կալանավորելու պատճառը, իսկ հարազատներն այս մասին երբեմն այդպես էլ չէին իմանում: Օրինակ՝ այսպիսի տողեր էր Ա.Ամատունուն գրել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի սկզբնական կուսակազմակերպության կողմից կուսակցության շարքերից հեռացված և կալանավորված քաղբանտարկյալներից մեկը, որն արդեն երկու ամիս գտնվում էր Երևանի բանտում՝ առանց որևէ մեղադրանքի. «...Վաղարշապատի շրջանի դատախազ Գարեգին Պետրոսյանը ինձ կալանավորեց և ուղարկեց կենտրոնական բանտ. այժմ նստած եմ: Առանց որևէ հարցաքննելու՝ թե ինչի հիման վրա, թե ինչ զբաղարտության հետևանքով և թե ինչ մեղք ունեմ, այդ պարզ չէ, մինչև հիմա էլ նստած եմ բանտում՝ առանց քննելու, որի մասին հայտնել եմ հանրապետական դատախազությանը, բայց արդյունքները մնացել են առանց հետևանքի»[1]: Նախկինում դաշնակցական Հովհաննես Առաքելյանի կինը ամուսնու ձերբակալությունից միայն մեկ ամիս հետո արդեն աշխատանքից ազատված դատախազից էր իմացել, որ ամուսնուն դատապարտել են 5–10 տարվա աքսորի և աքսորել էին իրեն անհայտ ուղղությամբ[2]: Որդու ձերբակալման պատճառների մասին չգիտեր Երևանի բնակիչ Կատյա Գադակչյանը, որն Ամատունուն ուղարկած նամակում հայտնում էր, որ 1937 թ. սեպտեմբերի 23-ին որդին՝ Երևանի «Կուսհրատ»-ի տպարանի տողաշար Երվանդ Գադակչյանը, սովորականի պես գնացել էր աշխատանքի և այլևս չէր վերադարձել: Ինքը միայն հետո էր իմացել, որ պետքաղվարչությունը որդուն ձերբակալել է: Մայրը տարակուսած էր այդ փաստից, որովհետև որդու՝ հոգատար զավակի և անբասիր կոմերիտականի կենսագրությունը թույլ չէին տալիս հասկանալ այս թյուրիմացությունը: «Իր աշխատանքների մեջ նա միշտ եղել է բարեխիղճ, հարվածային և բազմիցս անգամ պարգևատրվել է դրամով, հանգստյան տան պուտյովկայով (ուղեգիր) և այլն: ...Ինչու՞ համար ձերբակալեցին որդուս՝ չգիտեմ»,- գրում էր նա իր նամակում[3]:

Նկատենք, որ այս ժամանակաշրջանում գործում էր պաշտպանական գիտակցական մեխանիզմ, որով կամայական բռնություններին մարդիկ փորձում էին հակադրել իրենց անբասիր կու-

[1] Նույն տեղում, թ. 67:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 83, թ. 11:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 30:
[2] Նույն տեղում, գ. 104, թ. 17:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 37–38:

սակցական անցյալը, նվիրումը հայրենիքին և կուսակցությանը: Տվյալ դեպքում՝ սա վերաբերում էր իրենց ձերբակալված հարազատներին: «Իմ ամուսինը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յուր ազնիվ աշխատանքով պահել և խնամել է յուր ընտանիքը՝ կինը, մայրը և երկու երեխան: Նա իր աշխատանքի ընթացքում ոչ մի անգամ նկատողության չի արժանացել ո՛չ մասսայի կողմից, ոչ՛ էլ հիմնարկության կողմից: Ընդհակառակը՝ նա արժանացել է գովասանքի և պարգևատրման:

Ահա այս պատճառով զարմանալի է թվում, թե ի՞նչ պատճառով և ո՞ր հանցանքի համար է, որ իմ ամուսինը, որ արդեն բոլորել է 55 տարեկանը, պետք է դատապարտված լինի բանտարկության»[1]: Սա հատված էր քաղբանտարկյալ Համազասպ Քրմոյանի կնոջ նամակից, և նմանօրինակ նամակները, որոնցում ներկայացվում էին կալանավորվածի բարենպաստ բնութագրերը՝ նրանց պատժից ազատելու կամ պատիժը մեղմելու ակնկալիքներով, շատ էին:

Ասել, թե այս նամակներում ներկայացված բնութագրերը սուբյեկտիվ և հաճախ ուռճացված էին, կարծում ենք՝ տեղին չէ, որովհետև 1936–37 թթ. հասարակական-քաղաքական իրողություններն իսկապես այնպիսին էին, որ առանց հիմնավոր պատճառների հետապնդումները պետք է օրինաչափ երևույթ համարել: Պարզապես պետք է ընդունել, որ կուսակցության կողմից ծրագրված բռնաճնշումները տարվում էին այնպիսի տրամաբանությամբ, որ մարդու նվիրումը կուսակցությանը, նրա օրինակելի աշխատանքային գործունեությունը, նրա, այսպես ասած, «պրոլետարական» կենսագրությունը բռնաճնշումներից ապահովագրվելու երաշխիքներ չէին տալիս: Մենք արդեն իսկ ցույց տվեցինք,

[1] Նույն տեղում, թ. 79:

որ նույնիսկ ամենանվիրյալ, վաստակաշատ կոմունիստի կենսագրության փոքրիկ բիծն իսկ, նրա ամենահեռավոր, ամենաանմեղ շփումն իսկ կուսակցությանն անցանկալի մարդկանց հետ անցյալի ուրվականի նման կարող էր հետապնդել նրան, և բավական էր ցանկացած հիշատակություն այս մասին, ցանկացած մատնագիր, որտեղ կնշվեր այդ փաստը, որպեսզի մարդու բոլոր ձեռքբերումները կուսակցության և պետության առաջ հավասարեցվեին զրոյի, իսկ ինքը դառնար դավաճան և «ժողովրդի թշնամի»: Ցավոք՝ ներկայացված կալանավորների բանտարկության իսկական պատճառները հայտնի չեն, պարզ չէ, թե ինչ մեղադրանք է նրանց առաջադրվել: Սակայն վերը նշվածը հաշվի առնելով՝ փորձենք որոշակի ենթադրություններ անել ներկայացվող հաջորդ մի քանի օրինակով:

Մարիամ Ալահվերդյանը, որի որդուն՝ ֆինանսական տեխնիկումի ուսուցիչ Նշան Ալահվերդյանին, կալանավորել էին իրեն անհայտ պատճառով, անթաքույց հպարտությամբ էր ներկայացնում որդու մատուցած երբեմնի ծառայությունները բոլշևիկներին: Դատելով նրա նամակից՝ որդին դեռևս բոլշևիկյան կուսակցության հեղափոխական պայքարի տարիներին անձնական սերտ կապեր էր ունեցել Ստեփան Շահումյանի և այլ նշանավոր կոմունիստների հետ, նույնիսկ, ինչպես հայտնում էր մայրը, նրանցից շատերի կյանքը փրկել էր ժամանակին: Ու թեև նրան անհայտ էր որդու ձերբակալության պատճառը, սակայն Ա. Միկոյանին ուղարկած իր նամակի սկզբում նա հայտնում էր, որ որդին ուսուցչությամբ զբաղվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո[1]: Կարելի է ենթադրել, որ կենսագրական այս անցանկալի փաստն էր վատ ծառայություն մատուցել նրա որ-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 10–11:

դուն, եթե հաշվի առնենք եկեղեցու նկատմամբ կուսակցության և պետության բռնած խիստ բացասական դիրքորոշումը: Համանման պատճառով ձերբակալվել էր նաև ոմն Խաչատուր Ղուլոյան, որը նախկինում եղել էր հոգևորական, սակայն, կնոջ խոսքերով, «նա հրաժարվել էր այդ սև պաշտոնից»[1]: Իսկ ահա Թամարա Մալխասյանը, վերադառնալով Թիֆլիսից, դստեր բնակարանը կնիքված էր գտել, իսկ դստերը ձերբակալել էին ՆԳԺԿ-ի աշխատակիցները՝ իրեն անհայտ պատճառով: Թամարա Մալխասյանը փորձել էր հանդիպել աղջկան կամ էլ նրա ձերբակալության մասին մանրամասներ ճշտել, սակայն ապարդյուն: Այս մասին նա գրել էր Ա. Միկոյանին՝ խնդրելով միջամտել[2]: Նամակի մեջ նրա հայտնած տեղեկությունը, որ դստեր ամուսնուն արդեն մոտ տարիուկես առաջ ձերբակալել էին, կարծում ենք, որոշակի ենթադրությունների հնարավորություն տալիս է նրա դստեր ձերբակալության պատճառների վերաբերյալ: Կուզենայինք այս նամակից մեջ բերել ևս մի հետաքրքիր փաստ, այն է՝ այս կնոջ տեղեկությունն այն մասին, որ դուստրը պատրաստվում էր դիպլոմային աշխատանքի պաշտպանության: Քաղաքական բռնաճնշումների ժամանակաշրջանում նմանատիպ իրողությունները հետաքրքիր դիտարկումների հնարավորություններ են տալիս՝ առօրյա սովորական կյանքի և վրա հասած անսովոր պայմանների համատեքստում:

Ստալինյան բռնությունները նման էին կապույտ երկնքում բռնկված կայծակի, երբ մարդկանց կարող էին անսպասելի, առանց որևէ լուրջ հիմնավորման ձերբակալել տանը, աշխատավայրում, և ոչ ոք ի զորու չէր սա կանխատեսել, կանխազգալ:

[1] Նույն տեղում, թ. 56:
[2] Նույն տեղում, թ. 35:

Ինչ-որ մեկի հետապնդման պատճառ էր դառնում անանուն մատնագիրը, ինչ-որ մեկին ձերբակալում էին «անցյալի մեղքերի» համար, շատերն անզգուշություն էին ունենում արտահայտվել կուսակցության կամ պետության համար անբարենպաստ երանգներով, իսկ շատերին էլ ձերբակալում էին հարազատների «մեղքերի» պատճառով:

Քաղաքական բռնաճնշումների անմիջական հետևանքը, ինչպես վերը նշեցինք, հասարակության բարոյալքումն էր, ինչն արտահայտվեց վախի, անվստահության և ծայրահեղ զգուշավորության մթնոլորտի ձևավորմամբ: Սրա արդյունքում մարդկանց կյանքը շեղվեց բնականոն հունից: Առօրյա կենցաղային ապրումների, առօրեական ընդհանուր, սովորական հարաբերությունների, առհասարակ առօրյա կյանքի մեջ մտած լարվածությունը, նշված իրողությունները դարձնում էին արտասովոր: Անգամ կենցաղային վեճերը հաճախ այնքան էին քաղաքականացվում, որ սրանց մեջ արտացոլվում էին հանրային մտածողության մեջ տեղի ունեցած յուրօրինակ փոփոխությունները, երբ սովորական վիրավորանքն անգամ ստանում էր քաղաքական աստառ:

Ասվածին խիստ բնորոշ է ժողդատավոր Ասատուր Ադամյանի օրինակը, որի կինը զուտ անձնական պատճառներով փոքրիկ վիճաբանություն էր ունեցել հարևանուհու՝ կուսակցության անդամ Մարգո Բաղդասարյանի հետ: Կուսկոլեգիայի քարտուղար Կուզնեցովին ուղարկած իր բողոքի մեջ Ադամյանը գրում էր. «Այս տարվա (1937 թ. – հեղ.) հուլիսի 3-ին նշված Մարգո Բաղդասարյանը, չնչին պատճառով վիճելով կնոջս հետ, փողոցային հայհոյանքներ ուղղելով նրա հասցեին, հրապարակային ձևով հայտարարում է, որ մեր ընտանիքը դաշնակների և հակահեղափոխականների ընտանիք է: Մարգո Բաղդասարյանի նման ան-

հիմն, սադրիչ հերյուրանքը, որ վայել չէ կուսակցության անդամին, նպատակ ունի վարկաբեկել ինձ՝ կուսակցականին, բոլշևիկին, ով սովետական իշխանությանը նվիրված քաղաքացի է, տասնյակ տարիներ զբաղեցրել է քննիչի, ավագ քննիչի և ժողդատավորի պաշտոններ: Այս ամենն ինձ ստիպեց բողոքել կուսվերահսկողության հանձնաժողովին և թախանձագին խնդրել, որ քննեն քաղաքացի Բաղդասարյանի զանցանքը»[1]: Նամակի հետագա տեքստում Ադամյանը ներկայացնում է իր հարուստ կուսակցական անցյալը և բոլշևիզմի գաղափարներին ու գործին իր նվիրվածության ապացույցները: Իմիջիայլոց, հենց այս վերջին դրվագը ցույց է տալիս, որ Ադամյանը լավ էր հասկանում սովորական այս կենցաղային վեճի հնարավոր անբարենպաստ հետևանքները, որվհետև նշված Մարգո Բաղդասարյանի կողմից նրա կնոջը հասցված վիրավորանքն ուղեկցվել էր այնպիսի արտահայտություններով, որոնցով կարող էին հետաքրքրվել համապատասխան մարմինները և հետապնդում սկսել նրա դեմ: Հավանաբար, այս նամակով Ադամյանը փորձում էր ապահովագրել իրեն: Եվ այս ամենը հասարակ, կենցաղային հողի վրա սկսված վեճի հետևանք էր՝ շատ բնորոշ այդ ժամանակաշրջանին:

Ներկայացվող հաջորդ օրինակում վիճող կանանցից մեկը՝ ՀԽՍՀ Գերագույն դատարանի փոխնախագահ Կոնստանտին Տեր-Նակալյանի կինը, չէր բավարարվել հարևանի կնոջը վիրավորելով և նրա երեխային խփելով, այլ, օգտվելով ամուսնու աջակցությունից, քաղաքական բամբասանք էր տարածել հարևանի ընտանիքի մասին՝ համապատասխան մատնագիր ուղարկելով կուսվերահսկողության հանձնաժողով[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 680, թ. 3:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 101, թ. 147:

Անձնական հարաբերությունների քաղաքականացման միտումը ժամանակի հասարակական իրողություններում բավական արտահայտված էր, և սրանով էին պայմանավորված հանրային մտածողության արտասովոր, բայց ժամանակաշրջանին խիստ բնորոշ շեղումները: Օրինակ՝ Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղում 1937 թ. Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ կուսակցության կողմից առաջադրված թեկնածուներից մեկի՝ Կալիպսե Կարապետյանի անձի շուրջ կրքեր են ծավալվում, որոնց կենտրոնում նույն գյուղի բնակիչ Արեքնազ Ասոյանի՝ վերջինիս հետ ունեցած անձնական թշնամանքն էր: Ցանկանալով խոչընդոտել Կալիպսեի՝ որպես ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու առաջադրվելուն՝ Ասոյանը գյուղի քաղպատրաստության խմբակի դասի ժամանակ հայտարարում է, որ Կարապետյանը շրջապատված է հակահեղափոխական հարազատներով, և որ ինքը պետք է մերկացնի նրան: Դեպքի վերաբերյալ խիստ գաղտնի զեկուցագրում նշված է, որ այս հարցով շրջանի կուսկազմակերպությանը կցված պաշտոնյան պարզաբանումներ ստանալու համար դասից հետո իր մոտ է կանչում Ասոյանին, և վերջինիս հետ պաշտոնյայի մոտ է հանկարծակի մտնում նրա տասամյա որդին և «...սկսում է սպառնալ կցված ընկերոջը, որ վերջինս ճնշում է քննադատությունը, պահանջում է, որ նա ասի իր անուն ազգանունը, որպեսզի մատերիալ գրի նրա վրա»[1]: Դեպքը՝ կարծում ենք, ժամանակաշրջանի բարքերի նկարագրման համար խիստ բնութագրական է՝ հաշվի առնելով այն, որ, նախ տասամյա երեխան պատկերացում ուներ քննադատության ճնշման մասին և հետո՝ մոր շահերը ցանկանում էր պաշտպանել մատնագրով:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 137, թ. 34:

Մատնությունը՝ որպես առօրեական երևույթ, մեծ տարածում ուներ ԽՍՀՄ-ում: Ստալինյան բռնաճնշումների տարիներին այն հասավ իր կատարելագործման գագաթնակետին: Մատնությունների մեծ քանակը ԽՍՀՄ-ում առաջին հերթին բացատրվում է կոմկուսի քաղաքականությամբ: Կուսակցությունն այն կիրառում էր բռնաճնշումներն առավել արդյունավետ իրականացնելու համար, և մատնության մասսայականացման առաջին, գլխավոր նախաձեռնողը, բնականաբար, կուսակցությունն էր՝ Ստալինի գլխավորությամբ: Սակայն, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում ոչ բոլոր մատնություններն էին տեղի ունենում կուսակցության անմիջական ցուցումով: Կուսակցական կամ ոչ կուսակցական մարդկանց, սովորական քաղաքացիների անհատական նախաձեռնությունն այս գործընթացի մեջ նույնպես մեծ դեր էր խաղում, հետևաբար, մատնությունները պետք է բացատրել ոչ միայն կուսակցական թելադրանքով, այլ նաև անձնական դրդապատճառների առկայությամբ: Սա բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ 1930-ականների երկրորդ կեսին, մասնավորապես 1936 թվից հետո, երբ պետության կողմից սանձազերծվեցին լայնածավալ քաղաքական բռնաճնշումները, մատնությունը դարձավ անձնական խնդիրների լուծման, անձնական շահերի իրականացման բավականին արդյունավետ միջոց: Կուսակցության կողմից հասարակության մեջ անընդհատ քարոզվող կոչերը՝ ժողովրդի թշնամիների հանդեպ «զգոն» լինելու, նրանց բացահայտելու վերաբերյալ, իրականում պարզ ազդանշան էին, որ կուսակցությանն անհրաժեշտ են «ժողովրդի թշնամիներ»:

Ընդորում՝ քաղաքացիների կողմից այն պարզ գիտակցումը, որ հայտնաբերված «ժողովրդի թշնամիների» գործերը սովորաբար օբյեկտիվ քննության չեն ենթարկվում, որ նրանց նկատմամբ

գրեթե միշտ կիրառվում են պատժի խստագույն տեսակներ, շատերի մոտ առաջացնում էր անցանկալի մարդուց հեշտությամբ ազատվելու գայթակղություն: Հենց այս պատճառներով էր, օրինակ, կալանավոր Մուշեղ Խլոյանը բացատրում իր ձերբակալությունը: Նրան Խանջյանի սպանության կապակցությամբ հակախորհրդային արտահայտություններ անելու մեղադրանք էր առաջադրվել 1936 թ.: Կուսակցության կենտկոմին ուղարկած իր դիմումի մեջ նա գրել էր. «Այս մասին մատերիալը տված են լինում մեր գյուղացի մի քանի անձնավորություններ, որոնք ունեին ինձ հետ անհատական, անձնական թշնամություն, որը գոյացել էր կոլխոզային աշխատանքների հողի վրա, և այդ անձնավորությունները դեռ շատ վաղուց համախմբված աշխատում էին իմ նկատմամբ դավադրություններ պատրաստել, որը միայն նրանց հաջողվեց այն ժամանակ, երբ Խանջյանը կատարեց ինքնասպանություն»[1]:

Մատնության զոհ էր դարձել նաև «Արարատ» տրեստի №6 բանջարաբուծական արտադրամասի վարիչ Ամուշավան Գևորգյանը, որին, իր պնդմամբ, զրպարտել էին նույն տրեստի աշխատակիցները և շրջանի կուսհրահանգիչ Վանուշ Շամիրյանը: Ծանոթանալով ՀԿ(բ)Կ կենտկոմին նրա ուղարկած նամակին՝ հետաքրքիր դիտարկումներ կարելի է անել այս գործի կապակցությամբ: Նշված Գևորգյանն ինքն այստեղ խոստովանում է, որ «կուսակցական զգոնության» առումով եղել է բավական ակտիվ: «Ես քննադատեցի...տնտեսության նախկին դիրեկտոր (տնօրեն) Պերճ Տարոնյանին և կուսկոմիտեի քարտուղար Գեորգի Գասպարյանին և մի շարք կոմունիստ ընկերների և դակումենտալնի (փաստաթղթերով – հեղ.) հաստատեցի, թե ոնց են խորհրդային

[1] ՀԱԱ, ֆ. 17, գ. 89, թ. 178:

տնտեսության ունեցվածքը զիգզագ ճանապարհներով թալանել...»[1]: Այնուհետև նա պատմում է, որ նշված Վանուշ Շամիրյանը կազմակերպում է տրեստի աշխատակիցների դռնփակ նիստ և պահանջում նրանից վերջ տալ իր մեղադրանքներին: Գևորգյանը, սակայն, չի դադարում և շարունակում է վարկաբեկիչ նյութեր ուղարկել արդեն տնտեսության նոր տնօրենի մասին, և հենց սա էլ պատճառ է դառնում, որ շուտով ինքն է վարկաբեկվում և բանտարկվում երկու տարով: Այստեղ, կարծում ենք, նշված հիմնարկի տնօրենն իրեն ապահովագրում է նման «զգոն» աշխատակցից և վարկաբեկում նրան, որպեսզի ինքը չարժանանա նախկին տնօրենի բախտին: Եվ հետաքրքրական է, որ Գ. Հարությունյանին արդեն կալանավորված Գևորգյանն իր դժգոհությունն էր հայտնում առ այն, թե ինչպես կարելի է այսպես ճնշել քննադատությունը և մարդուն կալանավորել երկու տարով, այն էլ՝ նրան մեղադրելով աշխատակիցների ներկայությամբ: Նրա նամակի այս մասից կարելի է մի քանի ենթադրություն անել: Կա՛մ Գևորգյանը չէր գիտակցում, որ իր անընդհատ բողոքներով ու քննադատությամբ վտանգում է իր աշխատակիցներին և ղեկավարությանը, ինչը որ քիչ հավանական է, կա՛մ նա իսկապես ցանկանում էր ղեկավար պաշտոն ստանալ այդ հիմնարկում, կա՛մ էլ պատկանում էր կուսակցականների այն խմբին, որոնք այնպես էին մարսել կուսակցական քարոզչամեքենայի պտուղները, որ իսկապես հավատում էին իրենց մատնիչ գործողությունների հանրօգուտ, համապետական նշանակությանը: Այստեղ նշենք նաև, որ չենք բացառում Գևորգյանի բարձրաձայնած փաստերի կամ մեղադրանքների ճշմարտացիությունը, պարզապես այս գործն ապացուցում է, որ խորհրդային շատ հիմնարկներում

[1] Նույն տեղում, թ. 90–91:

մատնությունը օգտագործվում էր որպես աշխատանքային հարաբերությունների, նաև անձնական հարաբերությունների կառուցման միջոց:

Ներկայացնենք նմանօրինակ ևս մեկ դեպք: «Պրավդա» և այլ թերթերին 1924 թ. թղթակցած լրագրողներից մեկը բողոքում էր, որ իրեն ձերբակալել են Հայաստանի շատ պատասխանատու պաշտոնյաներին թերթերում ակտիվ քննադատելու համար: Ընդորում՝ նա նշում էր, որ վերջիններս սպառնացել և հանդիմանել էին իր կնոջը, թե «ի՞նչ իրավունք ունի քո մարդը, ինչ-որ թղթակից Վաչե, Հայաստանի ղեկավարների գլխից թռչի, նրանց մասին գրի Մոսկվային...»: Դատելով այս թղթակցի՝ Վաչե Աբգարյանի նամակից, որ նա ուղարկել էր ՀԿ(բ)Կ կենտկոմ, նրա «բոլշևիկյան զգոնությունն» այնքան էր հոգնեցրել կուսակցական ղեկավարներին, որ որոշել էին գործ սարքել նրա դեմ և բանտարկել: «Բոլշևիկյան զգոնությամբ մերկացրել էի...դաշնակցական տարրերի, որոնք խցկվել էին բոլշևիկյան կուսակցության շարքերում: Սակայն այս խումբ մարդիկ, դեռ 1935 թ. գործ նախապատրաստելով իմ դեմ, 1937 թ. հուլիսի 2-ին դատեցին և ազատազրկեցին մեկ տարի նրա համար, որ հասարակությունից մեկուսանամ և դադարեմ թշնամուն մերկացնել»[1]: Իսկ ահա կալանավոր Հմայակ Աքուլյանն ուներ իր բանտարկության պատճառի սեփական բացատրությունը, ըստ որի՝ Հոկտեմբերյանի շրջանի (այժմ՝ Արմավիր) ՆԳԺԿ-ի լիազոր ներկայացուցիչը իր աներոջը՝ գյուղխորհրդի նախկին նախագահ Անուշավան Մուրադյանին, կալանքից ազատելու նպատակով նրան առաջադրված վնասարարության և հակահեղափոխական գործունեության մեղադրանքները

[1] Նամական ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 86, թ. 163–164:

շուռ էր տվել Աքուլյանի վրա: Մուրադյանին կալանքից ազատել էին և նրա փոխարեն կալանավորել Աքուլյանին[1]:

Շատերին կարող էր մատնության մղել անձնական վրեժխնդրությունը, շատերն ունենում էին առավել գործնական շահեր, շատերի մեջ խոսում էր ինքնապաշտպանական բնազդը, ամեն դեպքում, ինչպես նշել է պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանը, այս շրջանում հասարակության մեջ գլուխ էին բարձրացրել մարդկային բնազդի բացասական արտահայտությունները[2]: Եվ բենց մատնությունը շղարշելով «կուսակցական զգոնությամբ», «բոլշևիկյան, պրոլետարական պարտքի գիտակցումով»՝ մարդիկ վարկաբեկում և մատնում էին իրար՝ անձնական խնդիր լուծելու համար:

Այսպես՝ պետհամալսարանի այգու աշխատողներից մեկին դուր չէր եկել այն փաստը, որ այգու տնօրենը բղավել էր իր վրա: Համալսարանի կուսակցական կոմիտեի քարտուղարի հետ համագործակցելով՝ վերջինս հայտնում է, թե տնօրենն ասել է, որ «Խանջյանին վրացիներն են սպանել»[3]: Տնօրենին բանտարկում են հինգ տարով: Խորհրդային տնտեսություններից մեկի նախկին ղեկավար Բոգդանյանը, որին մեղադրել էին իր ենթակայության տնտեսություններում վնասարարության մասին տեղեկություններն անհետևանք թողնելու և վնասարարությանն աջակցելու ու մասնակցելու մեջ, այս մեղադրանքները համարում էր անհիմն և գրում, որ սա իր կողմից նախկինում կուսակցությունից հեռացված Միրզոյանի և Կիրակոսյանի մատնության հետևանքն է, որոնցից ինքը «այլ բան չէր սպասում»[4]: Փաստորեն՝ այս մարդիկ

[1] Նույն տեղում, գ. 89, թ. 105:
[2] **Ղազախեցյան Վլ.**, *1937-ը Հայաստանում*, էջ 3:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 39:
[4] Նույն տեղում, գ. 87, թ. 85:

ընդամենը վրեժ էին լուծել Բոգդանյանից՝ իրենց կուսակցությունից հեռացնելու համար: Անձնական վրեժով էր առաջնորդվել նաև Ապարանի շրջանի կոլտնտեսություններից մեկի նախագահ Մացակ Մուրադյանը, որի՝ գյուղում հաստատած խնամական, հովանավորչական բարքերի դեմ բազմիցս բողոքել էր հողբաժնի աշխատակից Ռուբեն Սարիբեկովը: Մացակ Մուրադյանը նախ սպառնացել էր նրա հորը, իր համախոհների հետ ֆիզիկական բռնություն էր կիրառել Սարիբեկովի նկատմամբ, իսկ հետո, գյուղի կանանցից մեկին խոստանալով, որ կազատի նրա կալանավորված ամուսնուն, ստիպել էր բողոք գրել Սարիբեկովի դեմ: Իր հաղթանակն ամրապնդելու նպատակով նաև ինքն էր մատերիալ ուղարկել դատական մարմիններին, որոնք և դատապարտել էին նշված Սարիբեկովին: Հատկանշական է, որ այս Սարիբեկովը նույնպես բողոքում էր բոլշևիկյան քննադատության ճնշման դեմ, որը տեղի էր ունեցել իր դեպքում[1]:

Մատնությունը՝ որպես անձնական խնդիրների լուծման միջոց, լայն տարածում էր ստացել նաև ազգաբնակչության մեջ քաղաքական բռնաճնշումների ժամանակ: Վանաձորցի մանկավարժ Խաչիկ Սահակյանը, չնայած պատկառելի տարիքին (87 տարեկան), հիշում էր իր պատանեկության տարիներից մի դեպք, որի ականատեսն է եղել անձամբ: Դեպքը տեղի է ունեցել Կիրովականում քաղաքական բռնաճնշումների ժամանակ (ցավոք, հստակ տարեթիվը Սահակյանը չի հիշում, միայն հստակ հիշում է, որ այն տեղի է ունեցել պատերազմից առաջ): Ընկերները որոշում են հարազատ մարդկանց նեղ շրջապատում նշել նախկին աքսորականի վերադարձը, և այս հավաքույթին հրավիրում են նաև Սահակյանի մորաքրոջ ամուսնուն՝ Մացակ Հարությունյա-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 70:

նին, որը աքսորականի ընկերն էր: Հավաքույթին մասնակցելիս է լինում նաև աքսորականի կինը, որը նրա բացակայության ժամանակ կապվել էր քաղաքի տեղական պաշտոնյաներից մեկի հետ՝ երեխաներին միջոցներով ապահովելու համար: Երբ հավաքույթի սկզբին առաջարկվում է խմել ազատվածի բարի գալուստի համար, ներկաներից մեկը ընդդիմանում է՝ հայտարարելով, որ նախ պետք է խմեն առաջնորդի (Ստալինի) կենացը: Նախկին աքսորյալը առաջարկում է նախ խմել իր վերադարձի համար և ընկերը՝ Հարությունյանը, նրան պաշտպանում է: Աքսորականի կինն օգտագործում է առիթը. միանգամից վազում ՆԳԺԿ-ի Կիրովականի բաժանմունք և մատնում ամուսնուն՝ հայտարարելով, որ վերջինս հրաժարվեց խմել առաջնորդի կենացը: Սահակյանը լավ է հիշում, թե ինչպես խնջույքի պահին ներս են մտնում զինվորական համազգեստով մարդիկ, ճշտում «մեղավորներին» և ձերբակալում նրանց: Սահակյանը պատմում է նաև, որ իրենք հոր հետ գնում են դատարան, սակայն նրանց թույլ չեն տալիս ներս մտնել: Փակ դատավարությունից հետո նախկին աքսորյալին և Մացակ Հարությունյանին 10 տարով աքսորում են Հայաստանից[1]:

Անձնական վրեժխնդրությունից դրդված՝ նախկին ամուսնուն՝ բժիշկ Ղուկաս Ղուկասյանին, մատնել էր նաև Աննա Կոստանյանը, որ չէր կարողացել ներել ամուսնու երկրորդ ամուսնությունը: Բժշկի մայրն այս գործի հանգամանքների մասին գրել էր անձամբ ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Վիշինսկուն: Ըստ նամակի հեղինակի՝ հարսի մատնությունը պատճառ էր նրանց ընտանիքում որդու երկրորդ ամուսնությունից հետո ծավալված լարված փոխհարաբերությունների, երբ Աննա Կոստանյանը սպառնացել էր անել այնպես, որ ամուսինը «կա՛մ պատկանի իրեն, կա՛մ հողին» և, ի վերջո, որոշել էր իրագործել այդ սպառնալիքը[1]: Նախկին ամուսնուց վրեժխնդիր էր եղել նաև բանվորուհի Նոյեմ Խաչատրյանի նախկին հարսը: Հետաքրքրականն այն է, որ այս կինը մատնության համար դիմել էր իր մոր օգնությանը, որը Խաչիկ Մուղդուսու տնային աշխատողն էր[2]:

Իսկ ահա Երևան քաղաքի Աբովյան փողոցի № 93 տան նկուղային հարկի բնակիչ ինժեները դժգոհ էր իր բնակարանային պայմաններից և ցանկանում էր կա՛մ տեղափոխվել նշված տան վերևի հարմարավետ ու ընդարձակ սենյակներ, կա՛մ ցանկանում էր թույլտվություն ստանալ, որ ընտանիքի հետ տեղափոխվի Մոսկվա: Ներկայացնենք մի հատված նրա նամակից, որը գրել էր Գ. Հարությունյանին և ավելի շատ մատնագիր է հիշեցնում: «Ես իմ՝ չորս հոգուց բաղկացած ընտանիքի հետ բնակվում եմ վերընշված տան նկուղային հարկում՝ մութ և խոնավ, որտեղ չկա պատի վառարան, իսկ ծխնելույզը նախատեսված է միայն մետաղյա վառարանների համար: Նույն տան վերևի՝ առաջին, երկրորդ և երրորդ հարկերում բնակվում են դաշնակների նախկին դատախազը, տրոցկիստներ, ազգայնամոլներ, որոնց նմաններին վաղուց արդեն ձերբակալել են, իսկ նրանց ընտանիքները բնակվում են՝ զբաղեցնելով 4-5 սենյակ: Ես դիմում եմ տնային վարչություն, բայց ինձ, պատկերացնում ե՞ք, պատասխանում են, որ դիմումս բավարարելու համար նրանց անհրաժեշտ է Կենտկոմի թույլտվությունը»[3]:

[1] Հարցազրույց Խաչիկ Սահակյանի հետ (հեղինակի անձնական արխիվ):

[1] Նամակն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 52:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 104, թ. 134–135:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 87, թ. 134:

ՆԳԺԿ-ն և կուսակցության մարմինները այնքան մեծ կարևորություն էին տալիս մատնությանը, որ մատնագրերի ստացման գործընթացն անցնում էր հստակ փաստաթղթային ձևակերպումներով: Իսկական զավեշտ են հիշեցնում մատնագրերի ստացականները[1], որոնց տակ ստորագրում էին կուսակցական պաշտոնյաները: Նրանց անունով տեղական պաշտոնյաների, կուսակցական և պետական հիմնարկությունների աշխատողների վերաբերյալ ստացված մատնագրերը ցուցակավորվում էին, և այն պաշտոնյան, ում անունով ստացվել էր մատնագիրը, ստորագրում էր ստացականի տակ: Փաստորեն, մարդկանց ճակատագիրը որոշող այս նամակներն այնքան սովորական էին դարձել կուսակցական կյանքում (ինչպես մատնությունն ինքը սովորական երևույթ էր ժամանակի հասարակական իրողություններում), որ մատնագրերն ընկալվում էին որպես սովորական գրասենյակային փաստաթղթեր, ընդորում՝ պարտադիր փաստաթղթեր: ՆԳԺԿ-ի կամ կուսակցության կենտրոնական մարմինները տեղական կազմակերպություններին մշտապես հարցումներ էին ուղարկում՝ պահանջելով ուղարկել մատնագրեր, որոնք կապացուցեին իրենց ուշադրության կենտրոնում հայտնված կուսակցական կամ պետական աշխատողի հակասովետական կամ հակակուսակցական գործունեությունը: Այսինքն՝ եթե նույնիսկ տվյալ անձնավորության վրա կասկած էր ընկել, նա ձերբակալվել կամ ենթարկվել էր կուսակցական տույժի, նրա վերաբերյալ ստացված մատնագիրը դառնում էր հիմք առ այն, որ նրան պատասխանատվության կանչած մարմինները չեն սխալվել:

Բերենք երկու օրինակ՝ ասվածն առավել պարզորոշ պատկերացնելու համար: Ստորև ներկայացվող փաստաթուղթը նման

[1] Նույն տեղում, թ. 1–2:

հարցումներից մեկն է, որը ուղարկվել է ՀԿ(բ)Կ կենտկոմի ղեկավար աշխատողների բաժնից ՆԳԺԿ-ի Լենինականի բաժնին, որտեղ մասնավորապես ասված է. «Կուսակցության նախկին անդամ Իսահակ Ալեքսանդրի Բարաթյանցը կուսփաստաթղթերի ստուգման ժամանակ կուսակցության շարքերից հեռացվել է ակտիվ տրոցկիստ Սաֆյան Աշոտի հետ 1927 թվին սերտ կապ ունենալու պատճառով:

Խնդրում ենք անհապաղ հայտնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավար կուսաշխատողների բաժնին, թե ի՞նչ վարկաբեկիչ նյութեր ունեք Բարաթյանցի դեմ»[1]: Հաջորդ հարցումը արվել էր Վարվարա Հակոբի Մխիթարյանի վերաբերյալ, որը 1927–29 թվականներին եղել էր Լենինականի (այժմյան Գյումրի) դեպոյի կուսբջջի բյուրոյի անդամ և նույնպես հեռացվել էր կուսակցությունից տրոցկիստների հետ կապեր ունենալու համար[2]:

Ներկայացված փաստաթղթերը հաստատում են այն իրողությունը, որ մատնությունը կուսակցական մարմինների կողմից, ըստ էության, պատվիրվող գործողություն էր, որ այն անհրաժեշտ էր ձերբակալությունների նոր քանակներ ապահովելու համար: Մանավանդ կուսակցական աշխատողների «կուսակցական զգոնությունը» և, այսպես ասած, «հայրենասիրությունն» ստուգվում էր նրանով, թե կարողացե՞լ է որևէ մեկի մասին մատնագիր գրել, կարողացե՞լ է ինչ-որ «հակահեղափոխականի» կամ «ժողովրդի թշնամու» բացահայտել, մերկացնել: Նմանատիպ մի դեպքի մասին նույնպես պատմում է Խաչիկ Սահակյանը: Դեպքը տեղի է ունեցել 1936 թ. և կապված է նրա հոր՝ կուսակցական աշխատող Սարիբեկ Սահակյանի հետ, որը նույն թվականին աշխա-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 125, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 3:

տանքում ցուցաբերած առաջադիմության համար կուսակցական բարձր պաշտոնի է առաջքաշվում Անի երկաթուղային կայարանում: Այստեղ նրա հետ նույն հարկի տակ բնակվում է նաև ընկերը, որին Սարիբեկ Սահակյանն առաջարկում է ստացած գումարն ամբողջությամբ ուղարկել տուն, որովհետև ինքը ունի միջոցներ, և կարող են երկուսով բավարարվել վերապատրաստման դասերի ժամանակ: Հետագայում, երբ Սարիբեկի վրա մատերիալ են գրում, կանչում են բացատրություններ տալու համար, նա խնդրում է իրեն ցույց տալ մատնագրի տեքստը և ճանաչում է իր ընկերոջ ձեռագիրը: Հետագայում՝ հանդիպելով ընկերոջը, իր հարցին, թե ինչու՞, ի՞նչ պատճառով է նման ձևով «վարձահատույց» եղել, վերջինս պատասխանում է. «Սարիբեկ ջան, մեղքս ի՞նչ թաքցնեմ: Ինձ կանչեցին և ասեցին՝ դու ինչ կուսակցական էս, որ մինչև հիմա ոչ մեկի վրա մատերիալ չես գրել: Ես էլ մտածեցի՝ ում վրա գրեմ, որ ինձնից չնեղանա, հասկացա, որ քեզնից մոտիկ մարդ չունեմ»[1]:

Այսպիսով՝ 1936–1937 թթ. քաղաքական բռնաճնշումները նշանակալից փոփոխություններ մտցրեցին Խորհրդային Հայաստանի առօրեականության մեջ: Բացի այն, որ այս բռնաճնշումների կազմակերպմանը հարմարեցվեց ամբողջ կուսակցական, պետական ապարատը, սրանք անցան նաև գաղափարական նախապատրաստություն: Կուսակցական քարոզչամեքենան կուսակցական բարոյականության ընկալումներում վերաիմաստավորեց շատ սկզբունքներ, ինչի արդյունքում գլուխ բարձրացրին արատավոր երևույթներ միջանձնային հարաբերություններում՝ մատնություն, լրտեսություն, բանսարկություն և այլն: Անտեսվեց շատ կոմունիստների հարուստ հեղափոխական, կուսակցական անց-

[1] Հարցազրույց Խաչիկ Սահակյանի հետ (հեղինակի անձնական արխիվ):

յալը, նրանց ներդրումը կուսակցական և պետական շինարարության գործում: Հասարակության մեջ ձևավորվեց վախի և անվստահության մթնոլորտ: Այս ժամանակահատվածում հասարակության առօրեականությունն ընթացավ այն տրամաբանությամբ, որ հասարակությունը հայտնվեց պետության մամլիչի տակ՝ դառնալով նոր քաղաքական իրողություններով հարուցված ցնցումների զոհ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացված աշխատությունը հայ պատմագիտության մեջ առօրեականության պատմության զարգացման հնարավորությունն ու ուղիները դիտարկելու առաջին փորձերից է: Նրանում ուսումնասիրվում են սոցիալական և առօրեականության պատմության մի շարք տեսական հիմնահարցեր, այն ուղին, որն անցել է առօրեականության պատմությունը 19-րդ դարի պատմագիտական մտքի ճգնաժամից մինչև սոցիալական պատմության ձևավորումը, սոցիալական պատմության ներսում ծավալված իմացաբանական և մեթոդոլոգիական բանավեճերից մինչև առօրեականության պատմության՝ որպես պատմագիտական հետազոտությունների ինքնուրույն ուղղության կայացումը: Հատուկ ուշադրություն է դարձվել այն հեղինակներին, որոնց ներդրումն առավել մեծ և նշանակալից է թե՛ սոցիալական պատմության, և թե՛ առօրեականության պատմության գիտական հիմնախնդիրների ձևակերպման մեջ:

Գրքի հիմնական նյութը նվիրված է Խորհրդային Հայաստանի 1920–30-ական թթ. պատմության երկու շատ կարևոր իրողություններին՝ առօրյա կյանքում բյուրոկրատիզմի դրսևորումներին և քաղաքական բռնաճնշումներին: Հայտնի է, որ 1920–30-ական թվականները ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում կոմունիստական կուսակցություն մենատիրության ներդրման ժամանակաշրջանն էին: Այս գործընթացն իրականացվում էր պետական և կուսակցական շինարարությանը զուգընթաց և ուղղակի ազդեցություն էր ունենում հասարակական իրողությունների վրա: Բյուրոկրատիզմը պետական շինարարության թերություններից մեկն էր: Այն խորհրդային իշխանության գաղափարական կաղապարվածության, պետական կառավարման մեջ վարչահրամայական մեթոդների և կուսակցական գաղափարական առաջնահերթությունների առկայության հետևանք էր: Ուշադրություն է դարձվել այս երևույթների և դրանց հարուցած պաշտոնական չարաշահումների ,սոցիալական արձագանքներին՝ շեշտը դնելով կուսակցական և պետական ստորին օղակի պաշտոնյաների և ազգաբնակչության առնչությունների լուսաբանմանը:

Գրքում կարևորվել է խորհրդահայ հասարակության մեջ քաղաքական բռնաճնշումների իրագործման տարիներին հաստատված բարոյահոգեբանական ծանր մթնոլորտի ուսումնասիրությունը: Այս շրջանում տարածված առօրեական իրողությունների՝ մատնությունների, հարազատներից հրաժարվելու, հարազատներին լրտեսելու և այլ արատավոր երևույթների դրվագների ներկայացմամբ փորձ է արված ցույց տալ ամբողջատիրական վարչակարգի հակամարդկային բնույթը, որն ի զորու էր հանրային մտածողության ձևախեղումներով այլասերել մարդկային հարաբերություններում բարոյականության և առաքինությունների մասին հիմնարար պատկերացումները:

Հայկական պատմագիտական միջավայրում առօրեականության պատմության ի հայտ գալը նոր և հեռանկարային իրողություններից է: Հետազոտական այս ուղղության հետագա զարգացումը հնարավորություն կտա շարժվել համաշխարհային պատմագիտական արդի մտքին համաքայլ:

РЕЗЮМЕ

Представленная работа одна из первых попыток рассмотрения возможностей и путей развития истории повседневности в армянской исторической науке. В ней представлены некоторые теоретические проблемы социальной истории и истории повседневности, прослеживаются пути развития истории повседневности от кризиса историографической мысли XIX века до формирования социальной истории, от эпистемологических и методологических дискурсов внутри социальной истории до становления истории повседневности как самостоятельного направления исторических исследований. Особое внимание уделено тем авторам, чей вклад особо велик и весом в обозначении научных задач социальной истории и истории повседневности.

Основной материал книги посвящен двум важным реалиям истории Советской Армении 1920–1930-ых годов: проявлениям бюрократизма в повседневной жизни и политическим репрессиям. Как известно, 1920–30-ые годы как и в других советских республиках, так и в Советской Армении были периодом внедрения единовластия коммунистической партии. Этот процесс осуществлялся параллельно государственному и партийному строительству, оказывал непосредственное влияние на общественные реалии.

Бюрократизм являлся изъяном государственного строительства, последствием идеологической ограниченности советской власти, наличия командно-административных методов и партийных идеологических приоритетов в государственном управлении. Внимание уделено как этим явлениям, так и социальным откликам, спровоцированным ими должностным злоупотреблениям, с акцентом на освещение взаимоотношений междуобычным населением и государственными и партийными чинов-никами среднего и малого звена.

В книге освещаются так же репрессии 1936-1938-ых годов в Советской Армении. Особое значение уделено изучению утвердившейся в годы репрессий в советском армянском обществе тяжелой морально-психологической атмосфере. Описанием фрагментов повседневных практик того времени: доносов, отречения от близких, шпионажа родных и других порочных явлений, предпринимается попытка показать античеловеческую сущность тоталитарного режима, который был в силах развратить базисные представления о морали и добродетелях в человеческих отношениях.

В армянской историографической среде исследование вопросов истории повседневности стало новой реальностью. Развитие данного направления даст возможность двигаться в ногу с сегодняшней мировой историографической мыслью.

SUMMARY

The present work is one of the first attempts to observe the development possibilities of everyday life history in Armenian historiography. It explores and presents a number of theoretical issues in the history of social everyday life, the path that the history of everyday life passed from the crisis of the 19th century historiographical thought to the formation of social history, from the pragmatic and methodological debates existing within the social history to the everyday life history as an independent direction of historical research. The authors, whose contribution to the formulation of scientific issues in social and everyday life history is of a more significant nature, have specifically been taken into consideration.

The main section of the book is devoted to two very important events of Soviet Armenia in the 1920s–1930s – everyday life bureaucratic manifestations and political suppression. It is known that the period between 1920s–1930s was that of the introduction of the communist party monopoly in Armenia as well as in other Soviet Union countries. The process was carried out in parallel with the state and party construction which had a direct impact on the social realities. Bureaucracy was one of the shortcomings in state construction. It was the consequence of the Soviet ideology of administrative power and administrative ideological priorities. The social reactions of these phenomena have been taken into

consideration. The basic emphasis was put on the illustration of party and state lower-level officials as well as the public relationship.

The book also covers the political repression existing in Soviet Armenia in the 1936s-1938s. A special attention is paid to the study of the heavy moral-psychological atmosphere in Soviet society in the years of political repression implementation. An attempt was made to illustrate the anti-human nature of the totalitarian regime by presenting everyday reality, slander, turning down and spying on relatives and other episodes of vicious phenomena, which was and is capable of ruining human relationship morals and virtues about fundamental concepts in public thinking.

The emergence of everyday life history in Armenian historiography is one of the new realities, the development of which will enable us to move closer to the ideal of world historiography.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), **ֆ. 1** (ՀԿԿ կենտկոմ), **ց. 1, գ. 58, 59, ց. 17, գ. 83, 84, 86, 87, 89, 104, 125, 137; ֆ. 91** (ՀամԿ(բ)Կ կենտկոմին կից կուսվերահսկողության հանձնաժողովի Հայաստանի գծով կուսկոլեգիա), **ց. 1, գ. 3, ց. 2, գ. 30, 93, 119, 182, 224, 340, 656, 671, 680; ֆ. 112** (ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտե), **ց. 1, գ. 8, 14; ֆ. 128** (ՀԽՍՀ բանվորագյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատ), **ց. 1, գ. 2214, 2216, 2223, 2251, 2265, 2497; ֆ. 1021** (ՀԿԿ ԿԿ-ի կուսակցության պատմության ինստիտուտ-ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղ), **ց. 22, գ. 30:**

Մամուլ

«Աղքատ գյուղացի», Երևան, 1921:
«Աշխատանք», Երևան, 1927:
«Ավանգարդ», Երևան, 1936:
«Կարմիր մոծակ», Երևան, 1926:
«Սոցիալիստական մրցականչ», Երևան, 1929:

Հրատարակված աղբյուրներ և ուսումնասիրություններ

Լուկաշին Ս.Լ., *Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր*, Ե., «Հայաստան», 1986:

Խանջյան Ա.Ղ., *Հոդվածներ և ճառեր*, Ե., «Հայպետհրատ», 1963:

Խաչատրյան Կ., Ժամհարյան Գ., *Խորհրդային Հայաստանում արևմտահայ գաղթականության առօրյայի պատմությունից (1920-ական թվականների սկիզբ)*, Պատմություն և մշակույթ, Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2017:

Խաչատրյան Կ.Հ., *Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.*, Ե., Պատմ. ինստ., 2007:

Խառատյան Հ., Շագոյան Գ., Մարության Ա., Աբրահամյան Լ., *Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում (պատմություն, հիշողություն, առօրյա)*, Ե., «Գիտություն», 2015:

Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929), (կազմողներ՝ Ա. Մելքոնյան, Վ. Ղազախեցյան), Ե., 2008:

Հովհաննիսյան Ս., *Մնասյանների պատմագիտական դպրոցը*, ՎԷՄ համահայկական հանդես, թիվ 2 (34), ապրիլ-հունիս, 2011:

Հովհաննիսյան Ս., *Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը*, ՎԷՄ համահայկական հանդես, թիվ 1 (33), հունվար-մարտ, 2011:

Հակոբյան Ա.Մ., *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում*, Ե., Պատմ. ինստիտ., 2016:

Հակոբյան Արշ. Մ., *Հայաստանի բանգյուղտնտեսությունը սոցիալիզմի համար մղված պայքարում*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:

Հարությունյան Հ.Մ., *Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (բանակը, կազմը)*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

Ղազախեցյան Վ.Ն., *1937-ը Հայաստանում*, Ե., «Զանգակ-97», 2005:

Ղազախեցյան Վ.Ն., *Հայաստանը 1920-1940 թթ.*, Ե., Պատմ. ինստ., 2006:

Մանուկյան Ա.Ս., *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ.*, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2002:

Ստեփանյան Ա., *Պատմության հետագիծը: Գործք, գրույթ, իմաստ*, Ե., Փրինթինֆո, 2014:

Սուքիասյան Հ., *Հոգևորականները Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին (առօրեականության դրվագներ), «Խորհրդա-*

հայ մշակույթի կոնցեպտը» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2019:

Սուրիանյան Հ., Երանոսյան Ն., *Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին*, Ե., «Էդիթ Պրինտ», 2018:

Блок М., *Апология истории или ремесло историка*, М., «Наука», 1986.

Восленский М.С., *Номенклатура. Господствующий класс Советского Союза*, М., «Советская Россия», 1991.

Гинзбург К., *Мифы-эмблемы-приметы (морфология и история)*, М., «Новое издательство», 2004.

Зайцева Т., *Зарубежная историография XX – начало XXI века*, М., «Академия», 2011.

Зелдин Т., *Социальная история как история всеобьемлющая (перевод Е.М. Дахиной)*, альманах Thesis, 1993, вып. 1.

Кром М., *Повседневность как предмет исторического исследования*, «История повседневности», сборник научных работ, изд. «Алетея», С. Петербург, 2003.

Ленин В.И., *Полное собрание сочинений*, издание пятое, издательство «Политической литературы», М., 1981.

Людке А., *История повседневности в Германии. Новые подходы к изучению труда, войны и власти*, М., Росспэн, 2010.

Медведев Р., *О Сталине и сталинизме*, М., «Прогресс», 1990.

Медик Х., *Микроистория*, Thesis, вып. 4, 1994.

Паршаков Е., *Экономическое развитие общества. Концепция кооперативного социализма*, М., изд-во ЛКИ, 2008.

Пушкарева Н., *Предмет и методы изучения «Истории повседневности»*, Вопросы теории, ном. 5, М., 2004.

Репина Л.П., *«Новая историческая наука» и социальная история*, М., URSS, 2009.

Февр Л., *Бои за историю*, М., «Наука», 1991.

Фицпатрик Ш., *Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город.*, М., Росспэн, 2001.

Фицпатрик Ш., *Сталинские крестьяне. Социальная история Советской России в 30-е годы: деревня*, М., Росспэн, 2001.

Шпенглер О., *Закат Европы, Мультимедийное издательство Стрельбицкого*, Киев, 2015.

Burke P., *History and social theory*, Cornell University Press, Ithaca, New York, 1992.

Tilly L., *Social History and Its Critics*, Theory and Society, Vol. 9, No. 5, Special Issue on Social History (Sep., 1980).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Սոցիալական պատմությունից առօրեականության պատմություն
Սոցիալական պատմություն 6
Առօրեականության պատմություն 21
Կուսակցական բյուրոկրատիզմի դրսևորումները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքում 42
Հասարակության առօրյա կյանքի փոփոխությունները քաղաքական հետապնդումների պայմաններում 83
Ամփոփում 132
Резюме 134
Sammary 136
Աղբյուրներ և գրականություն 138

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ (1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ГАГИК ЖАМГАРЯН

ОЧЕРКИ ИСТОРИИ ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920-1930-ые годы)

GAGIK ZHAMHARYAN

EPISODES OF THE EVERYDAY LIFE HISTORY IN EARLY SOVIET ARMENIA (1920-30-s)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 12.03.2019 թ.
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am